ՀԱՐԱՍՈՒՆ

1973

Բ

Լ

ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Փետրվարի

1973



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ամերիկահայ թեմի կազմավորման 75-ամյակի առիթով 3

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանին 6

Նորք գրական ընթերցումներ 7

ՊԱՂԱՏԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆՅԱՆ—Մնունդիս քառասունքը 8

ԿԱՐԱՊԵՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ—Ս. Ղևոնդյանց հիշատակին . . 11

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ

Ղևոնդյանք 14

Վարդանանք 15

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 17

Է. Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Հովհաննես Որոտնեցու դավանաբանական գրությունը Կոստանդին Ե Սսեցի կաթողիկոսին 19

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ—Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնություններ 29

Հիշատակարաններ Մայր Աթոռի տպարանից հրատարակված հնատիպ գրքերի . . 44

Ճուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 50

Նորեր եկեղեցիների համաշխարհային խորհրդից 58

Նորեր քրիստոնեական եկեղեցիներից 60

Նորեր Հայաստանյայց եկեղեցու թեմերից 62

ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 8/II 1978 թ.: Ստորագրված է տպագրության 2/III 1978 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 100

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԹԵՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱԼ ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ, Տ. ՎԱՉԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻՆ, ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, ՀԱՒԱՏԱՉԷՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՆԵՐՈՒՆ, ԵԿԵՂԵՑԱԼԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՍԻՐԵՑԵԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Փառք մեր հայրերու Աստուծոյն, որ Իւր կենարար օրհնութեան ներքոյ անսասան և մշտանորոգ կը պահպանէ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին, իբրև քրիստոնէական հաւատքի անխորտակ վէմ ու շնորհաբաշխ աղբիւր լուսատատ:

Հրաշքի համազօր իրողութիւն է որ մեր եկեղեցին, բազում դարեր հալածեալ ու աստահդակած իր ժողովուրդով, միշտ անշեղ իր ուղղափառ դաւանանքէն և միշտ հաւատարիմ իր հոգևոր, մշակութային ու ազգապահպան առաքելութեան, կը շարունակէ մինչև մեր օրերը աճիլ ու զօրանալ ու գործել ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, ի մխիթարութիւն համայն հայութեան:

Մեր պատմութեան և հայրենի կեանքի դաժան պայմաններու բերումով, անցեալ դարու վերջին տասնամեակներուն, մեր եկեղեցւոյ զաւակներէն հետզհետէ շատեր՝ մայր երկրէն դէպի նոր աշխարհ՝ Ամերիկա գաղթեցին, որոնելու իրենց կեանքի ապահովութիւնը և խղճի ազատութիւնը: Եւ ինչպէս ամէն տեղ, նաև ամերիկեան հիւրընկալ բարի հողին վրայ, կառուցեցին իրենց

աղօթքի Տուները, որպէսզի իրենց հոգիները չմնան առանց սնունդի, առանց լոյսի և յոյսի:

Շատ ժամանակ չանցած, պանդուխտ հայոց թիւը աճելով, և բազմանալով եկեղեցական համայնքներն ու կազմակերպութիւնները, համաձայն մեր եկեղեցւոյ կանոնական վարչական դրութեան՝ 1898 թուականին, հիմքը դրուեցաւ թեմին հայոց Ամերիկայի, հայրապետական իշխանութեանը ներքև Ամենայն Հայոց երանաշնորհ Տ. Տ. Մկրտիչ Ա Խրիմեան կաթողիկոսի, 2 յուլիս 1898 թուակիր կոնդակով, առաջին թեմական առաջնորդի պաշտօնին կոչուելով տ. Յովսէփ Սարաճեան եպիսկոպոսը, Ուստր քաղաքի հայոց եկեղեցին ունենալով որպէս առաջնորդանիստ կեդրոն:

Ամերիկայի Միացեալ Նահանգաց՝ անցեալ դարու փոքրաթիւ հայոց թեմը, մեր օրերուն դարձած է հայ սփիւռքի ամենարազմամարդ եկեղեցական կազմակերպութիւնը, շուրջ երեք հարիւր հազար հաւատացեալներով, բաշխուած երկու թեմական շրջաններու վրայ՝ արևմտեան և արևելեան (Կալիֆորնիա):

Ամերիկահայ ամբողջ մեր ժողովուրդը անխտիր՝ իր կրօնական, մշակութային, կրթական ու ազգային-հասարակական կազմակերպութիւններով, անբաժան մասը կը կազմէ հայ եկեղեցիի և ժողովուրդի մարմնին որ իր հոգեւոր, բարոյական ու նիւթական պատկառելի հնարաւորութիւններով և ուժականութեամբ, կոչուած է պատմական նախախնամական առաքելութեան մը համահայկական տարողութեամբ, Ամենայն Հայոց Հայրապետութեան հոգեվոր վերին իշխանութեան ու օրհնութեան ներքև: Ամբողջ ամերիկահայութիւնը անխտիր, այո՛, վասնզի Մենք անհնար կը համարենք որևէ բաժանում Մայր Աթոռ սուրբ Էջմիածնէն, որ միակ գլուխն է Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետութեան:

Յոբելինական պատմական այս պահուն, յարգանքով կը ոգեկոչենք և կ՚օրհնենք վաստակն ու յիշատակը բոլոր բարեջան եպիսկոպոսներուն, հոգեշէն վարդապետներուն, արժանագործ քահանաներուն, սուլ և թեմական և համայնքային աշխարհական եկեղեցանուէր գործիչներուն և մեծահոգի բարերարներուն, որոնք անցնող եօթանասուն և հինգ տարիներու ընթացքին, իրենց լաւագոյնը ի սպաս դրին որպէսզի ամերիկահայ եկեղեցիները մնան մէկ ու անբաժան, շէն ու անսասան, և հայ քրիստոնեայի անունը պսակուի բարի համբաւով:

Լուսաւորիչ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի աստուածազարդ Աթոռէն, այսօր Մեր հայրապետական սէրն ու գնահատանքը և օրհնութիւնը կ՚առաքենք ձեզի՝ թեմական սրբազան առաջնորդներ, ձեզի՝ ծրաջան հոգևոր հովիներ, ձեզի՝ թեմական և ծխական խորհրդոց յարգարժան անդամներ, մաղթանքով սրտաբուխ որ մխիթարիչ սուրբ Հոգին միշտ լուսավառ պահպանէ ձեր աղօթքի Տուները, ի շինութիւն Մեր հաւատաւոր զաւակներու հոգևոր կեանքին, բարոյական ընկարագրին և հայադրոշմ ոգեկանութեան: Մեր իղձն ու պատուէրն է որ ձեր առաքելութեան ճամբուն վրայ, հաշտ ու համերաշխ ապրիք և անսակարկ նուիրումով աշխատիք, Քրիստոսի սիրով եղբայրացած և հայկական շունչով ջերմացած:

Փրկչի Էջման սուրբ սեղանէն բիւր օրհնութիւն կը բերենք ձեզի բոլորիդ ամերիկահայ հաւատացեալ զաւակներ մեր, և յատկապէս ձեզի՝ սիրելեալ երիտասարդներ, մաղթանքով ջերմագին որ ամէնքդ միշտ հաստատ մնաք ձեր հայրերու հաւատքին և հայկական ոգեկանութեան վէմին վրայ, ամերիկեան աշխարհի առաջ բարձր պահելով քրիստոսաբոյր ժառանգութիւնը հա-

յոց եկեղեցիին ու մշակոյթին, ձեր հոգիներու ճայնացքը յառած պահելով դէպի յաւիտենական աղբիւրը այդ ժառանգութեան, դէպի Մայր Աթոռ սուրբ Էջմիածին և վերածնած սուրբ գրական Մայր Հայաստան: Մեր պատուէրն է նաև որ բոլորդ, երախտապարտ սրտով, շինարար ու հաւատարիմ քաղաքացիները մնաք ձեր քրիստոսասէր մեծ երկրին:

Ողջո՜յն և օրհնութի՜ւն Ամերիկայի Միացեալ Նահանգաց հայոց թեմական կազմակերպութեան եօթանասուն և հինգ ամեակին:

Աւելի լոյս Հայաստանեայց եկեղեցիին, աւելի հաւատք աւոր հոգևոր մշակներուն, աւելի սէր և միութիւն մեր զաւակներուն:

Արդ, «ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան, ողջոյն տան ձեզ ամենայն: Եւ Աստուած խաղաղութեան և սիրոյ ելիցի ընդ ձեզ» (Բ կորնթ. ԺԳ 12): Ամէն:

Կարեն Բ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15-ն յունուարի
1973 փրկչական ամի,
և ի սուրբարիս հայոց ՌՆԻԲ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄ. 742

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ն. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Փետրվարի 28-ին, ուրբաթ օրը, ժամը 12-ին, **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը** Երևանում այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի Նախագահության **Նախագահ Ն. Խ. Հարությունյանին:**

Հայոց Հայրապետին ընկերակցում էին Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը և Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը:

Հայոց Հայրապետի և Հայաստանի հանրապետության մեծահարգ պարոն Նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սիրալիր մթնոլորտում:

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Ս. Գասպարյանը:

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՑՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ

Երբոր նրանց սրբության օրերը լրացան, Մովսեսի Օրենքի համաձայն՝ նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված էր Տիրոջ Օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ սուրբը պիտի կոչվի»: Եվ Տիրոջ Օրենքում ասվածի համաձայն՝ ընծա տալ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագեր:

ՍԻՄԵՈՆ ԾԵՐՈՒՆՈՒ ՄԱՐԳԱՐԵԱՑՈՒՄԸ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Արդ, Երուսաղեմում Սիմեոն անունով մի մարդ կար, և այդ մարդը արդար ու աստվածավախ էր և ակնկալում էր Իսրայելի մխիթարությունը. և սուրբ Հոգին էր նրա մեջ: Եվ սուրբ Հոգուց հրաման էր առել մահ չտեսնել, մինչև որ տեսներ Տիրոջ Օծյալին: Նա հոգով [առաջնորդված]՝ եկավ տաճարը, և երբ ծնողները բերին Հիսուս մանկանը՝ նրա վրա կատարելու ինչ որ օրենքի սովորության համաձայն էր, [Սիմեոնը] նրան իր գիրկն առավ, օրհնեց Աստծուն և ասաց. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությա՛մբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի. որովհետև, աչքերս տեսան քո փրկությունը, որը պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ. լույս՝ որ կլինի հայտնություն հեթանոսների համար և փառք՝ Իսրայելի քո ժողովրդի համար»: Եվ նրա հայրն ու մայրը զարմացած էին այն բաների վրա, որ խոսում էին նրա մասին: Սիմեոնը նրանց օրհնեց և ասաց նրա մորը՝ Մարիամին. «Ահա՛ սա կա՝ Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման համար և նշան [է] հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերից խորհուրդներ հայտնվեն»:

ԱՆՆԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԱՑՈՒՄԸ

Եվ այնտեղ կար մի մարգարե՝ Աննա [անունով]՝ Փանվելի դուստրը, Ասերի ազգատոհմից. սա տարիքով շատ առաջացած էր և ամուսնու հետ յոթը տարի էր ապրել՝ սկսած իր կուսությունից: Նա մոտ ութսունչորս տարեկան մի այրի էր, որ չէր հեռանում տաճարից, այլ պահեցողությամբ և աղոթքով գիշեր-ցերեկ պաշտում էր [Աստծուն]: Սա ևս նույն ժամին ոտքի կանգնելով՝ գոհություն էր մատուցում Տիրոջը և խոսում էր նրա մասին բոլորի հետ, որոնք Երուսաղեմի փրկությանն էին սպասում:

Եվ երբ ամեն ինչ կատարեցին Տիրոջ Օրենքի համաձայն, վերադարձան Գալիլիա, իրենց Նազարեթ քաղաքը: Եվ մանուկը աճում ու զորանում էր՝ լի իմաստությամբ, և Աստուծո շնորհները նրա վրա էին:

(Նոր Կտակարան, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1969, Ավետարան ըստ Ղուկասի, էջ 184—186):



ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆՅԱՆ

ԾՆՈՒՆԴԻՆ ՔԱՌՍՈՒՆՔԸ

Ղուկ. Բ 22—38

Ութերորդ օրը թլփատելու օրենքին հետ, քառասուներորդ օրը սրբվելու օրենքն ալ տրված էր արու զավակ ծնող մայրերուն: Նախ յոթն օր պիտի սպասեին իր պղծալ, ութերորդ օրը տղան պիտի թլփատեին, երեսուներեք օր ևս պիտի սպասեին, և քառասուներորդ օրը տաճար պիտի երթային սրբվելու, տարեկան գառ մը, որ է հերվենե ոչխար մը, տանելով **ողջակեզ** զոհի համար, և երկու տատրակ կամ երկու աղավնյակ **վասն մեղաց** զոհին համար. իսկ եթե աղքատ ըլլային ծնողքը, միայն երկու տատրակ կամ երկու աղավնյակ կտանեին. մեկը **ողջակեզի** և մյուսը **վասն մեղացի** համար **(Ղևտ. ԺԲ 2—8)**:

Հատուկ օրենք մըն ալ կար անդրանիկ արուներու համար: Եգիպտացվոց անդրանիկներուն հարվածին առթիվ Աստված հրամայած էր, որ Հրեից բոլոր անդրանիկ արուները, թե՛ մարդու ըլլան և թե անասունի, իրեն նվիրվին **(Ելք. ԼԴ 19—20)**, այսինքն Աստուծո տաճարին ծառայության հատկացվին: Բայց երբ Հրեայք ոսկի հորթը շինեցին և Աստված ուզեց անոնք պատժել, Ղևիի ցեղը Մովսեսին գործակից եղավ հորթապաշտները պատժելու **(Ելք. ԼԲ 28)**, և ասոր վրա Ղևիի ցեղը ամբողջարար, մարդերով և անասուններով, Աստուծո պաշտաման համար ընտրվեցավ, և այլևս մյուս ցեղերուն բոլոր արուները այդ ծառայութենեն ազատեցան **(Թիվք. Գ 12)**, բայց ոչ ձրիաբար. այլ ամեն արու անդրանիկ ունեցող՝ պետք էր իր անդրանիկին փրկանքը վճարեր Ղևտացվոց. փրկանքը Ղևտացվոց պիտի ըլլար և Ղևտացիք Աստուծո: Իսկ փրկանքը առաջին անգամ որոշվեցավ հինգ սիկղ արծաթ. յուրաքանչյուր սիկղ քսան դանկի կշիռքով, որ է ըսել չորս ու կես տրամ արծաթ **(Թիվք. Գ 47)**: Բայց հետո սովորությամբ փրկանքը յուրաքանչյուրին կարողության և փոխադարձ համաձայնության կապվեցավ:

Այդ երկու օրենքներուն գործադրությունները սովորաբար ի միասին կկատարվեին քառասունքին առթիվ, և ավետարանիչն ալ երկուքը իրարու կկցե, երբ Հիսուսի և իր մոր քառասունքին համար Երուսաղեմ գալերնին կպատմե: Տարևոր գառին ողջակեզը չի հիշեր իսկ, որովհետև Հովսեփ և Մարիամ ունևորներու կարգեն չէին, նույն համեմատությամբ փրկանքի նվերն ալ մեծ բան մը չի կրնար եղած ըլլալ: Օրինական գոր-

ծողությանց նկատմամբ մանրամասնություններ չի հիշեր Ավետարանը. որովհետև անոնց պայմանները հայտնի են, այլ երկու անակնկալ պարագաներու վրա մտադրություն կդարձնե, որոնք Քրիստոսի հայտնության փաստերն եղան: Այդ անակնկալ պարագաներու անձնավորություններն են Սիմեոն ծերունին և Աննա մարգարեուհին:

Սիմեոն ծերունի Ավետարանին մեջ պարզապես այր մի կոչված է. չըսվիր թե ծեր էր, չըսվիր թե քահանա էր, բայց այդ երկու հանգամանքներն ալ ավանդութենե ընդունված են, և Ավետարանն ալ ավանդության նպաստավոր է: Սիմեոնի համար ըսված է, թե էր նորա հրաման առեալ ի Հոգւոյն սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ մինչև տեսցէ զՕծեալն Տեառն. և այդ հիշատակությունը, այսինքն թե Սիմեոն խոստացյալ Մեսիայն տեսնելու համար էր որ տակավին կապրեր, բավական է ցուցունելու թե ծեր մըն էր, գոնե իննսնամյա մը. եթե ոչ ալելի: Ոմանք ըսին՝ թե Սիմեոն մեկն էր այն յոթանասուն թարգմանիչներեն՝ որք Աղեքսանդրիո մեջ ս. Գիրքը եբրայեցերենե հունարենի թարգմանեցին, և թե Ահա կոյս յղասցի մարգարեության վրա զարմանալուն, մինչև մարգարեության լրումը ապրելու և անոր իրականությունը տեսնելու երկնային հրամանը ընդունեցավ: Արդ՝ Յոթանասնից թարգմանությունը կատարվեցավ Քրիստոսե 285 տարի առաջ, և եթե Սիմեոնը 35 տարեկան ըսենք թարգմանությունը ըրած ատեն, գոնե 320 տարեկան եղած պիտի ըլլար, որ ոչ ուստեք հաստատված է, և ճշմարտանմանություն ալ չի ներշնչեր: Սիմեոնը, Հիլելի որդի և Գամալիելի հայր կարծողներն ալ հավանականութենե անդին չեն անցնիր:

Սիմեոնի քահանա ըլլալուն ալ կնպաստե Ավետարանը, ուրիշ օրինակատար քահանա մը չհիշելով, և օրինական գործողության կատարումը ուղղակի Սիմեոնի վերագրելով. Իբրև անդր ծնողքն զմանուկն Յիսուս առնել նոցա ըստ սովորութեան օրինացն ի վերայ նորա, և նա առ ընկալաւ զնա ի գիրկս իւր: Ավետարանին եկն հոգւովն ի տաճարն ըսելը, և ոչ թե իբր հերթապահ քահանա այնտեղ գտնված ցուցունելը, մեծ դժվարություն չի հարուցաներ, որովհետև շատ ալելի զորավոր է իբր օրինակատար կպաշտոնյա գործելուն փաստը:

Սիմեոն այս առթիվ նախ օրհնաբանություն մը ուղղեց առ Աստված, խնդրելով որ Աստված այլևս զինքն այդ կենաց կապերեն արձակե, որովհետև արժանացավ աչքովը տեսնել խոստացյալ Փրկիչը: Հետո տեսանողական հոգվով հոչակեց՝ թե այդ ընծայյալ Մանուկն է որ պիտի ըլլա Աստուծո պատրաստած փրկությունը, հեթանոսաց լույսը և Իսրայելի փառավորությունը: Եվ երբ Հովսեփ ու Մարիամ զարմացմամբ մտիկ կընեին այդ ներշնչյալ խոսքերը, Սիմեոն դարձավ Մարիամին և մարգարեական հոգվով Հիսուսի կենաց և Մսրիամու վշտաց պարագաները գուշակեց ու ըսավ. «Հիսուս, ինչպես իրեն հավատացողներուն կանգնվելուն պատճառ պիտի ըլլա, անանկ ալ չհավատացողներուն գլորվելու առիթ պիտի տա. իր անվան շուրջը հակառակություններ պիտի բորբոքին, և սիրտերու գաղտնիքներ երևան պիտի գան, և այս պատճառով Մարիամի սիրտն ալ ցավերով պիտի խոցոտի»: Հարկավ Մարիամի վրա մեծ ազդեցություն ըրին այդ ծանր գուշակությունները, բայց այդ պատճառով չնվազեցավ այն զարմացումը՝ զոր առաջին մարգարեական օրհնաբանությունները ներգործած էին:

Մյուս նորաբաղձ պարագան Աննա մարգարեուհիվունն օրհնաբանությունն է: Արդեն հիշեցինք թե տաճարին մեջ կապրեին այրիներ, որք տաճարին պաշտամանց հետ, նվիրյալ կուսանաց ու աղջկանց խնամքն ալ ունեին: Ասոնց գլխավորը կերևի եղած ըլլալ Աննա անունով այրի մը, Փանվելի դուստրը, Ասերի ցեղեն, 84 տարեկան պառավ մը, որ կարգվելեն յոթը տարի ետքը այրի մնացած էր և տաճար քաշված: Ավետարանի խոսքը, էր այրի ամաց իբրև ութսուն և չորից, ոմանք ուզեցին իմանալ՝ թե 84 տարիե ի վեր այրի էր. արդ յոթը տարի ալ ամուսնույն հետ ապրած և գոնե 14 տարեկան ամուսնացած ենթադրելով իբր 105 տարեկան կին մը եղած կըլլա, որ անհնարին չէ. բայց հավանական մեկնություն ալ չէ: Աննա իր այրիության տարիները միշտ տաճարին մեջ անցուցած էր, և շարունակ պահեցողությամբ և անդադար աղոթքով ապրած: Այս Աննան ալ, որ ներկա էր Հիսուսի ընծայման և Սիմեոնի օրհնաբանությանց, ինքն ալ իր կարգին աստվածային ներշնչմամբ լցված, սկսավ օրհնություններ խոսիլ. և անոնց՝ որ Մեսիայով խոստացված փրկության կսպասեին, կավետեր ժամանակին լրացած և Փրկչին աշխարհ եկած ըլլալը: Քանի որ Մարիամի զավկին վրա կկատարվեին այդ տնօրինությունները, Աննա իր խնդակցությունները կուղղեր հարկավ անոր, որ այդ մեծ շնորհին արժանացած էր: Ըսինք արդեն, թե Մարիամ ինը տարիի չափ իր տղայությունը տաճարին այրիներուն ձեռքին տակ անցուցած էր, ժամանակները կհամաձայնին ըսելու՝ թե Մարիամ Աննայի խնամքը վայելած էր. որով և Աննայի հոգին կը-

խընդար և կխնդակցեր իր սանուհվուշն եղած մեծ շնորհը տեսնելով:

Ոմանց համար դիտողության նյութ եղած է, Հովսեփի և Մարիամի տրված Ծնողքն նորա ու Հայր և մայր նորա բացատրությունները: Սակայն Ղուկասի գրիչին տակ, որ հանգամանորեն պատմած է վերև կուսական հղության ավետիսը, որևէ կարծիքի տեղի չեն կրնար տալ այդ խոսքերը, որք պարզապես արտաքին ձևով արտաքիններում աչքին երևցող կերպարանը բացատրելու կծառայեն:

(«Համապատում», Կ. Պոլիս, 1911, էջ 24—27):



ԿԱՐԱՊԵՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Ս. ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Եւ լուայ զբարբառս Տեառն, որ ասէր. Զո՞ առաքեցից եւ կամ ո՞վ երթիցէ առ այս ժողովուրդ»։

Եսայի Զ 8։

Անցյալի հիշատակը կենդանի հետաքրքրության մի անսպառ աղբյուր է սրտի և գաղափարի տեր մարդոց համար. ամեն ոք կարող է այդտեղ յուր հերոսը որոնել, անձնավորություններ և ամբողջ պատմական շրջաններ գտնել, որոնք կյանքի կատարելատիպը վառ գույներով նորա աչքի առաջ նկարում են, նորան ոգևորում, վսեմ խորհուրդներ են ներշնչում՝ մի բարձրագույն նպատակի ձգտել դրդում։ Մեկին գրավում են պատերազմի դաշտում վաստակած դափնիները, մյուսին հանճարեղ մտքի արդյունքները, երրորդին գեղարվեստի հրաշալիքը. ոչ միայն անհատական տրամադրության, այլ նաև ժամանակի պայմանների համեմատ փոփոխվում է անցյալի գործած տպավորությունը. երբեմն այս հերոսը կամ դեպքն է ավելի աչքի ընկնում, ավելի խորհրդավոր նշանակություն ստանում, երբեմն այն մյուսը։

Ս. Ղևոնդյանց նշանակությունը լավ պարզելու համար, պետք է ի նկատի ունենալ մեր ժողովրդի ներկա ժամանակի գլխավոր պահանջը. հարցրե՛ք՝ ի՞նչ է որոնում հայ հասարակությունը մեր աշխարհի ամեն մի անկյունում, նաև դուրսը ամենուրեք, ուր հայ անունով, հայի հավատով ապրելու ձգտումը կա. մա՜րդ, մա՜րդ.... մի մարդ, որ տարբերվեր մյուս սովորականն մարդկանցից. գլխով չափ բարձր կանգնած այս գաջաջ սերունդից՝ անմատչելի լիներ այն տղմին և ապականության, որի մեջ թաղված են ուրիշները. մի քահանա, որ Բարձրյալի Աթոռի առաջ կանգնելու համարձակություն ունենար, ժողովրդի վիշտն ու պաղատանքը դներ այնտեղ, մխիթարություն բերեր, կենդանի խոսքով վառեր ու մաքրեր սրտերը, դեպի վեր, դեպի բարին ուղղեր մտքերը։

Եվ ահա, երբ մեր հայացքը ակամայից դեպի անցյալն է դառնում, գալիս՝ կանգնում է մութ հորիզոնի վերա Վանանդի Երեցը յուր անմահ ընկերակիցների լուսադեմ խմբով մեկ տեղ։ Նա ինձ պատկերանում է ոչ այնպես, ինչպես պատկերացել է երբեմն, քանաստեղծի երևակայության առաջ՝ երկնային, չնաշխարհիկ մի երևույթ, վերև օդի մեջ, այլ իբրև մի հասարակ մարդ ամուր հողի վերա կանգնած, մի պարզ գյուղական քահանա խաչն ու Ավետարանը ձեռքին, մի տերտեր այո՛ մեր այս... մեր այս ԺԹ դարու լուսավոր սերունդի համար հանչափս արհամարհելի տերտեր անունը կրող մի խելք մարդ, որի լեզվից սակայն մեղրի նման քաղցր խոսք ծորում, որի հոգու պայծառությունը յուր պատկառելի դեմքի վերա է արտափայլում. անօրեն բռնակալներին անգամ պատկառանք ազդում, որի հետ ինքը Տեր

Աստվածը խոսել է, յուր սուրբ կամքի թարգման և վկա կարգել՝:

Ի՞նչ կլիներ Ղևոնդ երեցը, եթե կրոնական պատերազմները առիթ չտային նորան պատմության հրապարակի վրա ելնելու: Ժամանակակից պատմիչները վկայում են, որ նա յուր դարու ամենագիտուն և հանճարեղ անձինքներից մեկն էր. բայց երբ նա գյուղ գնաց պաշտոն վարելու, անշուշտ երբեք մտքից չէր անցնում, որ մի օր մեծահռչակ անուն պիտի ունենար, չէր մտածում, թե ո՞վ այնտեղ գյուղում յուր գիտության և հանճարի վերա պիտի զարմանար, յուր արժանիքը գնահատեր: Մարդոց չէր ծառայում նա և ուրախ պիտի լիներ, եթե մի օր Ամենակալ Տիրոջ ներկայանալով ասել կարողանար. «Ծառայք անպիտանք էաք, զոր ինչ պարտն էաք առնել՝ արարաք»: Եվ այսպես կմեռներ նա. ծանոթները՝ գուցե մի ամբողջ գավառի բնակիչներ, առժամանակ սիրով և հարգանքով կհիշեին նորա անունը, և հետզհետե մոռացության կտային... նա ինքը այս մասին չէր հոգացել, բայց նախախնամությունը այլ կերպ էր տնօրինել:

Ինչի՞ նման կլիներ, կհարցնենք, Ե դարը, եթե Հայոց գյուղերում Ղևոնդ երեցի պես քահանաներ չգտվեին: Այդ դարը պատմության այն շրջաններից է, երբ մարդոց ամբարշտության և թշվառության բաժակը լեցվում է, դատաստան է պետք, երկրավոր ուժերով անկման և կորստյան առաջն առնել կարելի չէ այլևս. բայց ահա բարձրից որոտում է Ջորությանց Տերը, անորոշ մի դող և սարսուռ է պատում մարդոց. միայն մարգարեի սրատեսության և սուր ականջ ունեցողներն են, որ Նորա մերձակայությունը զգում են և բացականչում. «Վա՛յ է ինձ՝ ես այր տառապեալ զիա՞րդ կամս, հիացեալ, զի մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես»: Սակայն Նա ուղարկում է յուր սրովբեին երկնային հրո կայծակը մոտեցնելու ընտրյալի շրթունքին, և երբ գալիս է վերևից վճռական հարցը. «Զո՞ առաքեցից կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդ». անօրենություններից ազատված և մեղքերից մաքրված Աստուծո մարդը հանդես գալ և համարձակ ասել կարող է. «Ահաւասիկ ես, առաքեա՛ զիս»:

Այսպիսի մեկն էր յուր ժամանակի համար Եսայի մարգարեն: Երբ նա Տիրոջից կոչումն ընդունեց, դեռ բարգավաճ դրության մեջ էր յուր հայրենիքը, կանգուն թե Հուդայի և թե Իսրայելի թագավորությունը. բայց նա բաց աչքով տեսնում էր գալիք աղետները, Սամարայի կործանումը, Հուդայի ոտնակոխ լինելը թշնամիներից՝ այն ամեն չարիքը, որ այս ապերասան ժողովուրդը յուր անօրենությունների երեսից պիտի կրեր, և վշտից գալարվում էին նորա աղիքները, երբ նա հարցնում էր. «Մինչև յե՞րբ, Տէր»: Սակայն անհրաժեշտության ուսաջ պետք էր խոնարհել. այս ամենը պիտի գար, անօրենությունները պետք է պատժվեին, որպեսզի արդար և հնազանդ մի մնացորդ ետ մնար. և մարգարեն հավատարիմ մնաց յուր կոչման: Իբրև մի խարազան Ամենակալի ձեռքին հարվածեց Նա մարդկանց անիրավությունները. յուր ժողովրդի անողորմ դատավորը եղավ, երբ նա բախտից կուրացած շռայլության և անօրենությանց անձնատուր էր եղել, նորա խորհրդատուն և մխիթարիչը՝ երբ նեղության ու տառապանքի օրերը հասան: Ամբողջ արևելքը ասորեստանցվոց ոտքի տակ սասանում էր, մեկը մյուսի ետևից ընկնում, հիմնահատակ կործանում էին քաղաքներ և թագավորություններ, միայն Երուսաղեմն էր մնացել թշնամիներից պաշարված. սպառել էին պաշտպանության բոլոր միջոցները, ոչ ոքի մտքից անցնել չէր կարող, թե նորա փրկության հնարը կա, թագավոր և ժողովուրդը մարգարեի ոտքն ընկած՝ Տիրոջ օգնությունն էր հայցում. և Տերը հասավ օգնության. «Ճանապարհ ընդ որ եկն, ընդ նոյն դարձցի և ի քաղաքն այն մի մտցէ»*. հրամայեց մարգարեն և ասորեստանցին ուտիպված էր իսկույն հետ նահանջել. այն աներևույթ ձեռքը՝ որ նորան մինչև այստեղ էր բերել, կրկին հետ տարավ նորան:

Այսպես է եղել ահա Աստուծո մարդը ամեն ժամանակ: Այսպես էր Եսայի մարգարեից առաջ Եղիա Թեզբացին, այսպես էին նորանից հետո բոլոր մարգարեները. այսպես էր մակաբայեցվոց նախահայրը Մատաթե քահանան, որ Տիրոջ սեղանի պղծությունը տեսնել չկարողացավ. «Երիկամունք իւր զդողանի հարան և լի եղև սրտմտութեամբ բիրկութեամբ ըստ օրինաց դատաստանին, զոտս արձակեաց՝ հար զՀրէայն և անդէն սատակեաց առաջի բագնին», և այսպիսով կրթեց, հառաջ բերավ մի սերունդ, որ Երուսաղեմը պիտի պահեր և աշխարհի Փրկչին սնուցաներ յուր գրկում: Այսպիսի նախանձախնդրությամբ լեցված ինքը, Տերը քշեց վաճառականներին տաճարից. նույնպիսի նախանձախնդրությամբ Տիրոջ պաշտոնյաները՝ ս. Ղևոնդյանք, ջարդեցին կրակապաշտ մոգերի կառափները, պահեցին Նոր Սիոնը պղծու-

* Համ. Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1878, էջ 205 և 228:

* Եսայի ԼԻ 34:

թյունից, պահեցին անկումից և կորուստից Նոր Սիոնի ժողովուրդը: Եվ այնուհետև ամեն անգամ, երբ մարդոց ամբարշտությունը ծայրահեղության է հասել, երբ Աստուծո տաճարը վտանգի մեջ է եղել և երկնքից կախվել է այդ հարցը. «Զո՞ առաքեցից և կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդ». միշտ գտնվել է մեկը, որ այդ ձայնը լսեր, որի շրթունքին սրովբեական կայծակը դիպած լիներ և որ հանդես գար ասելով. «Ահաւասիկ ես, առաքեա՛ զիս»:

Մի՞թե մեր ժամանակն էլ այդ ժամանակներից չէ. մի՞թե լսելի չէ և այսօր Սիոնի Տիրոջ որոտալը վերևից, և ո՞վ է, որ նորա մերձակայությունը զգում է և չէ սարսում. «Վա՛յ է ինձ՝ ես այր տուռապեալ զիա՞րդ կամս հիացեալ, զի մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես»: Սարից սար, ձորից ձոր անցնում է և արձագանք տալիս է կոչողի ձայնը. «Զո՞ առաքեցից, զո՞ առաքեցից». ե՞րբ, ա՛ի ե՞րբ պետք է պատասխան գտնե այդ հարցը, ե՞րբ պետք է երկնային հուրը մերձենա և մեր շրթունքին, հանե մեր անօրենությունները, սրբե մեր սեղքերը, որպեսզի մարդիկ գտնվեին՝ ս. Ղևոնդյանց ժառանգ, մարգարեական հոգվով լի քահանաներ հանդես գային, որ համարձակեին ասել. «Ահաւասիկ ես, առաքեա՛ զիս»:

(«Արարատ» ամսագիր, 1895, փետրվար, էջ 41—48):

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ

ՂԵՎՈՆԴՅԱՆՔ

Ղևոնդյանց անվան տակ կճանչցվին այն հոգևորականները զորս Պարսից Հազկերտ Բ թագավորը Ատրորմիզդ մարզպանի դրդումով, Վարդանանց պատերազմեն ետքը, Հայաստանի մեջ ապստամբական նոր խլրտումներ անկարելի դարձնելու համար, կարգ մը կասկածելի նախարարներու հետ՝ նախ Վրկան աշխարհի մեջ արգելական պահել տվավ, և հետո, 454-ին, երբ քուշանաց դեմ պատերազմի գնաց, ամենքը միասին տանելով բանտարկել տվավ Ապար աշխարհի Նյուշապուհ բերդին մեջ: ...Առաջին անգամ նահատակվեցան Սամվել քահանա և Աբրահամ սարկավագ, երկուքն ալ Արարատի Արած գյուղեն, որոնք Արտաշատի մեջ սրբազան կրակը սպանված ըլլալու ծանր ամբաստանությամբ դատապարտված էին և բանակին մեջ էին բանտարկված: Մինևնույն ամբաստանության տակ ինկած ըլլալով նաև Թաթիկ, որ Բասենի եպիսկոպոսն էր և Արտաշատի ժողովին մասնակցողներեն, միաժամանակ տրվեցավ նաև իր մահավճիռը, որ և գործադրվեցավ Խուժաստանի մեջ, ուր բանտարկված էր անիկա վաղուց: Իսկ Նյուշապուհի մեջ բանտարկված վեցը, բերդեն հանվելով, Դենշապուհ ամբարապետի կարգադրությամբ, որ կանխավ ալ Հայաստան ղրկված էր կրոնափոխության հրամանը գործադրելու համար, կտրվին քաղաքեն բավական հեռու Ռեվան կոչված գյուղին մոտ անապատ և քարքարուտ տեղ մը, և չարաչար տանջանքներե վերջ կնահատակվին հոն: Ասոնք են. **Հովսեփ կաթողիկոս**, Հողոցմանց գավառի Վայոց ձոր գյուղեն, Սահակ-Մեսրոպյան առաջին դասու աշակերտներեն, որ ի սկզբան հավանաբար լոկ երեց էր, և թեև ս. Մեսրոպի մահեն վերջ անցավ պաշտոնի, բայց ս. Սահակի և ս. Մեսրոպի նման՝ ժամանակ մը՝ կաթողիկոսական պաշտոնի հոգեվորական մասը միայն կատարեց, և Սուրմակի բոլորովին ձեռնթափ ըլլալեն ետքը միայն ստանձնեց կաթողիկոսական պաշտոնը ամբողջովին: **Սահակ եպիսկոպոս** Ռշտունյաց, որ խումբին մեջ ամենեն քաջ պարսկագետը լինելով, վերջին հարցաքննության միջոցին քանիցս ինքը կատարած էր թարգմանի դեր: **Ղևոնդ երեց**, Վանանդի Իշավանք գյուղեն. խումբին ամենեն տարեցը և վատառողջը, որ սակայն հոգվո արիությամբ ամենեն խիզախը եղած էր, և թե՛ իր ընկերներուն և թե՛ բանակին վրա մեծ ազդեցություն թողած իր խումբովն ու օրինակովը: **Մուշե քահանա**, աղբակեցի, դրան երեց Ներշապուհ Արծրունիի, և ըստ այնմ տաներեց Արծրունյաց նախարարության, որ Մամիկոնյանցներեն վերջ ամենեն կարևոր դերը կատարած էին Վարդանանց ապստամբության մեջ: **Արշեն երեց**, Բագրեվանդի Եղեգիկ գյուղեն, անուս և անգրա-

գետ հոգևորական մը, որ շինական մարդոց մեջ էր ապրած, բայց իր հզոր հավատքին վրա ամենքեն առհասարակ կհարգվեր։ Քաջաջ սարկավագ, ոշտունի էր գավառով և փոքրավորն էր Սահակ եպիսկոպոսի, բայց իր այդ խոնարհ դիրքին վրա ալ կերևի թե ուշագրավ եղած էր իր ընթացքովը և մյուսներուն հետ հավասար դատապարտության արժանի նկատված։ Վեցն ալ նահատակվեցան չարաչար տանջանքներով։ ...—Ղևոնդյանց հետ կային, իբրև իրենց սպասավորներ, երկու ուրիշ երեցներ ևս, Աբրահամ և Խորեն, որոնք թեև կիսափագեին անոնց հետ նահատակվին, բայց դահիճները բավական համարեցին անոնց ականջները միայն կտրել, և ազատ թողուցին իրենց տարագրության մեջ ապրիլ իրենց աշխատությամբ։ Խորեն մեռավ քիչ հետո, Ասորեստանի տոթակեզ կլիմային չհանդուրժելով. իսկ Աբրահամ, թեև ժամանակ մը ետքը ազատվեցավ նույնիսկ դառնալ հայրենիք, բայց անիկա նախադաս համարեց մնալ օտարության մեջ, աքսորյալ նախարարներեն ալ չբաժնվելով, և անոնց ապրուստին իսկ չափով մը օգնելով իր աշխատությունը արդյունքներեն։ Հետո, նույնիսկ նախարարներուն սերտ ստիպմանը վրա, դարձավ հայրենիք, թե՛ ի նանապարհին ամեն ազգաց քրիստոնյաներեն և թե՛ բուն իսկ հայրենյաց մեջ ամենամեծ ոգևորությամբ ընդունվելով ամենքեն։ Ապա, ի պատիվ իր կենդանի նահատակի այդ հանգամանքին, եպիսկոպոս կարգվեցավ Բզնունյաց, և կըկարծվի թե ինքն է թարգմանիչը «Վկայք արևելից» ասորերեն գրվածքին, որուն հայացումը մեր ոսկեդարյան գրականության ընտիր կտորներեն մին է։—Ղևոնդյանք հայ եկեղեցականության պարծանք սուրբերն են. իրենց վրա կանձնավորվի հայրենիքի և հավատքի նվիրումին գաղափարը։ Վարդանանց ընկեր և քաջալերող, ժողովուրդին կյանքին մեջ բարձր պահեցին կրոնքի սրբությունը, և ամենեն ականավոր գործիչները եղան անոնք հայ եկեղեցիով հայ ազգությունը ապրեցնելու և պահպանելու սկզբունքին։ Իրենց այդ ուղղության գաղտնիքը իրենց դաստիարակության մեջ պետք է տեսնել։ Գրեթե ամենքն ալ, բացի մեկեն՝ որ սակայն սմենուն սիրուն առարկա մնաց միշտ, աշակերտներն էին Սահակ-Մեսրոպյան դպրոցին, որ գիտցած էր անոնց մեջ զորացնել որչափ ուսման և զարգացումի՝ նույնքան սրտի և նվիրումի մարդեր։

(Սուրբք և տօնք, Երուսաղեմ, 1989, էջ 209—216)։

ՎԱՐԴԱՆԱՆՔ

Այս անվան ներքև կճանչցվին Ե դարու երկրորդ կեսուն ճիշտ սկիզբը, 451-ին, Ավարայրի մեծ ճակատամարտին մեջ ինկած նահատակները, որոնք կռվեցան Պարսիկ զորության դեմ, հայ քրիստոնեությունը և հայկական եկեղեցին պաշտպանելու համար կրակապաշտության դեմ։—Ապստամբությունը, զոր Ե դարու երկրորդ քառորդին վերջերը որոշ թվով ուխտապահ նախարարներ պատրաստեցին ազգին մեջ, հետևանքն էր պարզապես այն բռնադատիչ քաղաքականության՝ որով Սասանյան պետությունը կմտածեր քրիստոնեությունը վերջնապես ջնջել ինչպես ամբողջ Պարսկաստանի, նույնպես և մանավանդ Հայաստանի մեջ. ու պատերազմը, զոր մեր ժողովուրդին եթե ոչ ստվարաթիվ այլ ազնվագույն մասը մղել հանձն առավ Պարսիկ ույժին դեմ, բնական արդյունքն էր միայն այդ շարժումին։ Քրիստոնեությունը ազգայնական կյանքի սկզբունքներ խորունկցուցած էր հայոց մեջ, անոնց ազգային ինքնության խարիսխը դառնալով այլևս։ Հայերը համոզված էին ատոր, այս պատճառավ է որ այնքան հավատքով և կամքով կփարեին պատերազմի գաղափարին։... Մեր նախնիք անհուն խանդավառությամբ կատարեցին իրենց պարտականությունները՝ իրենց համար կենաց և մահու գործ դարձած այդ գաղափարին հանդեպ, բայց ոչ առանց շրջահայաց հեռատեսության։ Ամեն ինչ որ կատարվեցավ այդ ոգվով և ուղղությամբ, մանրամասնորեն արձանագրված է Ղազար Փարպեցիի պատմության մեջ, և Եղիշեի ոսկեմատյանին՝ որ դյուցազներգական վիպասանության և ազգային վկայաբանության աննման հիշատակարան մըն է, հոգվով և սրբության ներշնչումներով գրված։ Ատոնցմե, ինչպես նաև ժողովուրդին հիշողության մեջ պահված ավանդության ուրիշ տվիքներ հավաքած հետնագույն պատմիչներե կիմանանք թե ազգը արդարև սրտանց հավաքված էր գործին շուրջը։ Անոնք որ հեռու մնացած էին շարժումեն՝ կհամարվեին ազգեն փրթած և կորսված հայեր. գաղափար՝ որուն ճշտությունը ա՛յնքան տխուր կերպով պիտի հաստատեր հետո փորձառությունը։ Արդ, ինչպես ակնարկվեցավ վե-

ռեվ, պատերազմի այս ձեռնարկը հախուռն ոգևորության մը գործը չեղավ բոլորովին։ Ազգին եկեղեցական և ներքին քաղաքական իշխանությունները, մտավորականությունը, զինվորական ույժը, ամենքը միասին էին և միաբան, որոնք որին ինչ որ հնարավոր էր՝ հասկցնելու համար Տիզբոնի թե իրենք սիրով կշարունակեն մնալ Սասանյանց գերիշխան հովանավորության ներքև, եթե ազատ թողվեին միայն պաշտելու իրենց կրոնը։ ...Այսպիսի հուսահատական կացության առջև էր որ ուխտապահները, որոնց գլուխ էին՝ հոգևորական դասեն Հովսեփ կաթողիկոս, եպիսկոպոսաց դասը և Ղևոնդ երեց, իսկ աշխարհականներեն՝ Վարդան Մամիկոնյան սպարապետը և իրեն գաղափարակից ուրիշ նախարարներ, վճռականորեն որոշեցին որ տեղի ունենա պատերազմը։ Եթե ձմեռը չարգիլեր երկու կողմերն ալ, հավանաբար պիտի ըլլար անիկա 451 տարվո Հայտնության օրերուն նույնիսկ։ Այսպես կամ այնպես հետաձգված, պատերազմը տեղի ունեցավ վերջապես Հոգեգալստյան նախընթաց, կամ Հինանց վերջին օրը, շաբաթ օր մը, այն տարին մայիս 26, Ծավարշան դաշտին մեջ, Ավարայր գյուղին մոտ, Տղմուտ գետին եզերքը։ Նախընթաց օրեն, ամբողջ բանակը հոգևոր պատրաստության մեջ էր. դեռ չմկրտվածները շուտով մկրտեցին, ամենքը հաղորդվեցան, Հովսեփ կաթողիկոս, Ղևոնդ երեց և Վարդան սպարապետ խրախուսական ուղերձներ որին զորքին. գիշերը հսկումով և աղոթքով անցուցին, և հաջորդ առավոտուն երկու բանակները իրարու զարնվեցան սահեղ սատկությամբ։ Հայերը հազիվ 60.000 էին թվով, մինչ պարսիկները առնվազն 200.000-ե ավելի պետք է եղած ըլլան։ Մեկ կողմին թիվի անհամեմատ առավելությունը, մյուս կողմին «հաղթելե ավելի տենչալի մարտիրոսության հասնելու» հրայրքը, ինչպես կըսե Փարպեցի, մեկ օրվան մեջ վճռական դարձուցին ճակատամարտին ելքը։ Հայերեն ինկան 296 հոգի. **Վարդան Մամիկոնյան**, իր 139 մարդերով, **Խորեն Խորխոռունի**՝ 19 մարդերով, **Արտակ Պալունի**՝ 57 մարդերով, **Տաճատ Գնթունի**՝ 19 մարդերով, **Հմայակ Դիմաքսյան**՝ 29 մարդերով, **Ներսեհ Քաջբերունի**՝ 7 մարդերով, **Վահան Գնունի**՝ 3 մարդերով, **Արսեն Ընձայեցի**՝ 7 մարդերով, **Գարեգին Սրվանձտյանց**, իր երկու եղբայրներով և 18 մարդերով։—Թեև պարսից կողմն ինկածները շատ ավելի էին թվով, իբր 3.000, բայց հայերը զինվորապես հաղթված եղան, որովհետև իրենց սպարապետը ինկավ և պատերազմին ոգեշնչիչ վարչությունը խլեցնգարվեցավ, իսկ պարսիկները կրցան պահել իրենց բանակին կազմը, հաջորդ օրերուն և շաբաթներուն ալ, դեռ հալածելով զանազան անառիկ վայրեր փախած քաջեր, զորս կոտորեցին անխընա։ Այս կերպով նահատակվածներն ալ միասին հաշվելով է որ ինկածներուն ընդհանուր թիվը սովորություն եղած է 1036 նկատել։ Պարսիկները թեև հաղթեցին զինվորական տեսակետով, բայց բարոյապես հայոց մնաց հաղթանակը, քանի որ Հազկերտ չհասավ իր նպատակին, ու արքունիքը ինքն իսկ համոզվեցավ թե անկարելի պիտի լինի հայերը ստիպել որ լքեն ուրանան քրիստոնեությունը։ Արդարև, հայ քրիստոնեության՝ այսինքն քրիստոնյա հայության իբր ուրույն ազգ և եկեղեցի գոյության հավերժացումը պտուղը եղավ Վարդանանց պատերազմին։ Ասիկա միշտ համոզումն է եղած ամբողջ հայության, Վարդանանց օրերեն սկսյալ մինչև մեր ժամանակը։ Այդ ոգին է որ շարունակ լեցուց ազգին կյանքը, իր դարավոր տառապանքի սաստկությանց ընթացքին։ Ատոր համար է որ Վարդանանց տոնը սկիզբեն մինչև ցայժմ ամեն հայու սրտին խոսող մեծագույն տոներեն մին է, որուն մեջ ամենքս կփառաբանենք ազգային նկարագիրը նույնիսկ, որ նկարագիրն է իր սուրբ սկզբունքներուն համար մեռնիլ գիտցող ժողովուրդի մը։ Անկեղծ, հավատավոր, բարի, Ավետարանի կենդանի հոգիովը լեցված սուրբեր եղան Վարդան և Վարդանանք. անոնք ամենքն ալ կպատկանեին գաղափարի այն մեծ դպրոցին, որուն հիմնադիրները և մշակիչները եղան ս. Սահակ և ս. Մեսրոպ, որոնք քրիստոնեական գրականությունը հաստատեցին մեր մեջ, և Ավետարանով լուսավորեցին ազգային գիտակցությունը։ Ս. Սահակի տեսիլքին մեջ Վարդանանց պատերազմն է որ կպատկերացվի արյան կարմրադեղով։ Սուրբեր էին անոնք մեծ սուրբին մտածումին մեջ, սուրբեր մնացին ընդմիշտ ազգին զգացումին մեջ. ճշմարիտ սուրբեր արդարև, վասն զի Ավետարանի հոգվով ուզեցին կենդանի պահել իրենց ազգը, և ատոր համար սիրով հանձն առին նահատակությունը։ Շնորհալի, որ ԺԲ դարուն գրեց անոնց նվիրված շարականները, «Նորահրաշ» և «Արիացեալք», միայն իր ժամանակին ըմբռնումն է որ կարտահայտե այնքան վսեմ բառերով. այդ ըմբռնումը նախորդ ութ դարերում հայության ևս համոզումն էր և է ցարդ։

(Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1969, էջ 224—282)։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 2-ին, ուրբաթ.—Այսօր հոգեվոր ճեմարանի հանդիսությունների սրահում, ժամը 17-ին, տեղի է ունենում մի շատ հետաքրքիր դասախոսություն: «Կոմիտաս վարդապետի նորահայտ երգերը և Կոմիտասը որպես մանկավարժ» թեմայով դասախոսություն է կարդում Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի վաստակավոր դասախոս, պրոֆ. Ռ. Աթայանը:

Դասախոսությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, ինչպես նաև մայրավանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Դասախոսության ընթացքում Կոմիտաս վարդապետի նորահայտ երգերի կատարմամբ հանդես է գալիս Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցի երկսեռ երգչախումբը:

Շատ հաճելի էր ունկնդրությունը «Ամեն հայի սրտից բխած» Հայրապետական մաղթերգի կոմիտասյան երկու մշակումների:

Դասախոսության ավարտին հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը, հանուն Հայոց Հայրապետի և բոլոր ներկաների, ջերմ շնորհակալություն հայտնեց հարգելի դասախոսին՝ նրա բովանդակալից բանախոսության, ինչպես նաև երգչախմբին՝ նրա շնորհալիորեն կատարած երգերի համար:

* * *

Նույն օրը Մայր Աթոռ է վերադառնում Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, որը շուրջ մեկ ամիս հովվական այցելությամբ գտնվում էր Բուենոս-Այրեսում:

* * *

Փետրվարի 4-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Ծննդեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Բագրատ աբղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մեք քարոզեսցուք զխաչեցեալն Քրիստոս, հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն» (Ա Կորնթ. Ա. 23) բնաբանով:

* * *

Նույն օրը ս. Հռիփսիմե տաճարում ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և կատարում քահանայական ձեռնադրություն: Նորընծան կոչվում է տ. Ղուկաս քահանա: Ձեռնադրությունից հետո սրբազանը քարոզում է «Քրիստոս է իմ Աստուած» բնաբանով:

ՀԱՅԿ ԴՐՈՇՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

*
* *

Փետրվարի 9-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում կազմվում է հոբելյանական մի հանձնախումբ՝ այս տարի ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը արժանավորապես նշելու համար, այս առթիվ գրված հունվար 16 թվակիր սրբատառ հայրապետական կոնդակի հրահանգով:

Հանձնախմբի անդամներ են ընտրվում պրոֆ. Առաքել Առաքելյանը, տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը, Արթուն Հատիտյանը և Պարգև Շահրազյանը:

*
* *

Փետրվարի 11-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան արդ. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Առ զխաչն և եկ զկնի իմ» (Մարկ. Ժ 21) բնաբանով:

*
* *

Փետրվարի 13-ին, երեքշաբթի.—Նախատոնակ Տեառնընդառաջի.

Այսօր երեկոյան Մայր տաճարում կատարվում է երեկոյան ժամերգություն, ապա Տյառնընդառաջի նախատոնակը և սահմանված Անդաստանը:

Տոնի ուրախ առիթով հանդիսավորապես Մայր տաճար է իջնում Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան արարողություններից հետո, ժամը 20-ին, հոգևոր ճեմարանի մարզահրապարակում Վեհափառ Հայրապետը վառում է ավանդական դարձած Տյառնընդառաջի խարույկը՝ Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսների և ուսանողության ներկայությամբ:

Մինչև գիշերվա ժամը 22-ը ճեմարանի ուսանողությունը ուրախանում է և երգում խարույկի շուրջ:

Ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել, օրվա տոնի ուրախ առիթով, Մայր Աթոռի միաբանությանն ու հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին:

*
* *

Փետրվարի 14-ին, չորեքշաբթի.—Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեան Քրիստոսի ի տաճարն.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

*
* *

Փետրվարի 16-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, փոխ-տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանի գլխավորությամբ և դասախոսական կազմի մասնակցությամբ, երկօրյա պտույտի է մեկնում Ծաղկաձոր:

Ծաղկաձորում ուսանողությունը հաճելիորեն անցկացնում է ձմեռային իր հանգիստը բնության ծոցում՝ ձյան վրա գբաղվելով սպորտի բազում ձևերով և ապա այցելելով Կեչառիսի պատմական վանքերը:

*
* *

Փետրվարի 18-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի Ծննդեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը և քարոզում «Ի բաց արասցուք այսուհետև զգործս խաւարի և զգեցցուք զզէնս լուսոյ» (Հռոմ. ԺԳ 12) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:



Է. Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՐՈՏՆԵՑՈՒ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե ՍՍԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հայ եկեղեցու դավանաբանական պայքարը այլ եկեղեցիների և առաջին հերթին կաթոլիկ եկեղեցու դեմ, հանուն ազգային եկեղեցու, մշակույթի և ավանդների պահպանման, ԺԴ դարի երկրորդ կեսին թևակոխել էր դժվարին ժամանակաշրջան։

Որքան էլ հետևողական լիներ հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների քաղաքականությունը այդ հարցում, այնուամենայնիվ կաթոլիկ եկեղեցուն մի նշանակալի չափով հաջողվեց իր ազդեցությունը տարածել Կիլիկյան Հայաստանի արքունիքում և հոգևորականության որոշ շրջաններում։ Ավելին՝ եթե Կիլիկիայում արքունիքը և կաթողիկոսը չնայած լուրջ զիջումների, այդպես էլ չմիացան Հռոմի եկեղեցուն, այլ մինչև վերջ աշխատեցին ձևականորեն հարմարվել վերջինիս պահանջներին, ապա Հայաստանի մի շարք շրջաններում՝ Նախիջևանում, Արտազում և այլուր ստեղծվեցին կաթոլիկական համայնքներ, որոնք ոչ միայն բացարձակ պայքար էին մղում հայ եկեղեցու դեմ, դավանաբանական, ծիսական հարցերում, այլև զանազան ամբաստանություններով հայերի դեմ էին գրգռում սրևմտյան քրիստոնեությանը ընդհանրապես։

Այս պայմաններում հասկանալի է, որ արևմուտքից քաղաքական ակնկալություններ ունեցող Կիլիկիայի հայոց կաթողիկոսարանը չէր կարող բացարձակ պայքար ծավալել, այլ ինչպես ԺԳ դարում այդ դերը իր վրա ստանձնեց բուն երկրի՝ Հայաստանի հոգևորականությունը, որը զուրկ էր արևմտյան քրիստոնյա պետությունների օգնությամբ մահմեդական դաժան լծից ազատվելու սին պատրանքից, այլ հնարավորության սահմաններում աշխատում էր պահպանել ազգային եկեղեցու ինքնուրույն դեմքը և հեռու մնալու նոր գրգռություններից։ Եվ դարձյալ, ինչպես նախորդ դարերում, հայ եկեղեցու լավագույն ուժերն էին ներգրավվում այդ պայքարում։

Մեզ հետաքրքրող շրջանում ի թիվս ուրիշ հայ հոգևորականների այդ պայքարում գործուն մասնակցություն է ունենում նաև ականավոր գիտնական Հովհաննես վարդապետ Որոտնեցին։

Որոտնեցին սերում էր Սյունյաց Օրբելյանների նշանավոր տոհմից և պատահական չէ, որ հրավիրվում է գլխավորելու Սյունյաց առաջնորդական Աթոռը, սակայն մերժում է այդ պատվավոր առաջարկը և իրեն ամբողջովին նվիրում գիտական-մանկավարժական գործունեության, հայ մատենագրությանը տալով մի շարք փայլուն երկեր և աճեցնելով բազում աշակերտներ, որոնց թվում նշանավոր Գրիգոր Տաթևացին, Գրիգոր Խլաթեցին և ուրիշներ։

Հովհան Որոտնեցին նշանակալից ավանդ ունի նաև հայ եկեղեցու դավանանքը պաշտպանելու գործում, որի լավագույն վկայություններից մեկն է նրա նորահայտ «Հաւատոյ դաւանութիւնք...» կոչված թուղթը, ուղղված Կոստանդին կաթողիկոսին[1]։

---

[1] Որոտնեցու վերոհիշյալ գործը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 557 ձեռագրի 1ա—15բ էջերում և ունի հետևյալ խորագիրը. «Այս են հաւատոյ դաւանութիւնք, զոր գրեաց մեծ վարդապետն Յոհանէս Որոտնեցի հրամանաւ պարոն Խութլուշին, ի Հայս, առ կաթողիկոսն տէր Կոստանդին»։

Հայտնի է, որ Որոտնեցին անգիջում պայքար է մղել Երնջակում և այլուր բուն դրած ունիթոռների դեմ: Սակայն ինչպես ցույց է տալիս Կոստանդին կաթողիկոսին գրած դավանաբանական այս գրությունը, չի սահմանափակվել միայն այդ պայքարով, այլ հետևելով իր նախորդների օրինակին, աշխատել է ընդհանուր լեզու գտնել կիլիկյան հայ հոգևորականության այն թևի հետ, որն հարազատ էր մնացել հայ եկեղեցուն:

Որոտնեցին իր թղթում ցավով է խոսում հայ եկեղեցու ավանդույթներին խորթ տարրերի ներմուծման մասին, որոնք մեծապես վնասեցին մեր եկեղեցու միասնությանն ու հեղինակությանը և ինչպես ԺԳ—ԺԴ դարերի այլ գործիչներ, այդ բանում մեղադրում է Գրիգոր կաթողիկոս Անավարզեցուն. «Իսկ արկածք չարին և հնարք խորդացոյց յայս կարգ և էարկ հիւանդութիւն ի գլուխ ի նախնի կաթողիկոսն, ասեմ ի Գրիգոր Անավարզեցի, և յայնմհետէ հիւանդութիւն, գայթակղութիւն, թերութիւն և հայհոյութիւն ոչ բարձաւ եկեղեցոյս հայոց: Կարծիս տացաւ շինելոյ և եղև հիմն ապականութեան: Զվայրի ձիթենին ոչ կարաց պատուաստել, ի բուն ոստոց իւրոց հատաւ»[2]:

Որոտնեցին հիմնականում շոշափում է չորս հարց. նախ՝ «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ»: Երկրորդ՝ «զառիթ տարորոշութեան մերոյ»: Երրորդ՝ «զվկայութեան բազմութիւն վասն ուղղափառ հաւատոյս մերոյ»: Չորրորդ՝ «զվշտագին պաղատանս, զի յաւդեսցես առողջարար դեղաւք ի գլուխ զանդամս քո»[3]: Ինչպես տեսնում ենք քննարկվող հարցերից առաջին երեքը հիմնականում վերաբերում են հայ եկեղեցու պատմությանն ու դավանանքին:

Անշուշտ մեր նպատակը չէ մխրճվել աստվածաբանական այն բարդ վեճի մեջ, որ մղվում էր ողջ միջնադարում միաբնակ և երկաբնակ եկեղեցիների միջև. մի բան, որ իր ժամանակի թելադրանքով փայլուն ձևով կատարում է միջնադարյան մեր գիտնական աստվածաբանը: Բայց և անհնար է այս առիթով չասել, որ Որոտնեցին այդ անում է գեղեցիկ ու հանգիստ ոճով, հետևողական տրամաբանությամբ, առանց կոպիտ հայհոյական արտահայտությունների իր հակառակորդների հասցեին: Հանախ ասածը հիմնավորելու համար դիմում է բնական երևույթների օգնությանը, ինչպես. «Եւ որպէս անհնար է թարց լուսոյ և ջերմութեան տեսանել զհուր, այլ որքան է հուր, ընդ նմայ է լոյս և ջերմութիւն իւր: Այսպէս անհնար է մտածել զՀայր առանց Որդոյ և Հոգոյ Սրբոյ, այլ որքան Հայրն է Հայր, ընդ նմայ է Բանն և կեանք իւր, զի ոչ երբեք կարծի Աստուած գոյ անբան և անկենդան»[4], կամ. «Իր, որ առանց վկայութեան է, անհաստատ է» և այլն:

«Հաւատոյ դաւանութիւնք...»-ը որոշակի մանաչողական նշանակություն ունի հեղինակի գործունեության հետ կապված որոշ հարցերի պարզաբանման և ժամանակի առանձին գործիչների գնահատման համար, մանավանդ եթե նկատի առնենք, որ ԺԴ դարի վերջերին համեմատաբար նվազում են մեր մատենագրության արժեքավոր սկզբնաղբյուրները:

Առանձնապես հետաքրքիր է պարոն Խություշի հիշատակությունը վերնագրում, որով, ոչ միայն որոշակի է դառնում ԺԴ դարում Երզնկայի գավառում բավականին ուժեղ հայ իշխանի գոյության փաստը, այլև պարզվում են նրա գործունեության մի շարք կետեր: Ինչպես հայտնի է 1374 թ. գրած իր չափածո հիշատակարանում, այս իշխանի մասին դարձյալ տեղեկություններ է հաղորդում Հովհաննես Որոտնեցին.

Յիշեցէք զիշխանն գլուխ բարեպաշտից
ԶՀայկազնի զարմ մեծից
ԸզԽություշահ ծնունդ հրաշից...[5]

ապա նույն հիշատակարանում հայտնում է, որ Խություշահը ձեռագրի պատվիրատուն է:

Մի առիթով գրել ենք, որ բանասեր Քյուրտյանի վարկածը, թե Խություշահը Որոտնեցու նախնիներից մեկն է, պնդելու ոչ մի հիմք չկա, ու եզրակացրել, որ այս Խություշահը Երզնկայում գրված մեր ներկա ձեռագրի վերջում հիշատակված նույն ասիր Խությունն է, որը 1386 թ. վախճանված է եղել[6]: Եվ ահա Որոտնեցու գրությանը վերնագիրը գալիս է հաստատելու մեր ենթադրությունը:

Նախ, Որոտնեցին գրությունը գրում է պարոն Խություշի հրամանով, հետևաբար Խություշը նրա ժամանակակիցն է: Երկրորդ, գրությունը գրված է Երզնկայում այն ժամանակ, երբ Որոտնեցին գտնվելիս է եղել այնտեղ: Եվ վերջապես Երզնկայում այդ ժամանակ իսկապես կենդանի է եղել Խությու=Խություշ—Խություշահ իշխանը: Այս իշ-

[2] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 567, էջ 1ա—բ:

[3] Նույն տեղում, էջ 1բ:

[4] Նույն տեղում, էջ 3բ—4ա:

[5] Հիշատակարանը լրիվ տես Ց. Քիւրտեան, «Երզնկա եւ Եկեղեաց գաւառ», հ. Ա, Վենետիկ, ս. Ղազար, 1959, էջ 301:

[6] Է. Մ. Բաղդասարյան, Երզնկայի հայկական իշխանությունը XIII—XV դդ., ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1970 թ., № 2, էջ 40—41:

խանը որոշակի ուժ և հեղինակություն պետք է ունենար, որպեսզի Որոտնեցին ոչ միայն նրան մեծարեր վերը բերված չափածո հիշատակարանում եղած խոսքերով, այլև աշխարհիկ պետի հրամանով դավանաբանական թուղթ գրեր կաթողիկոսին:

Այժմ ավելի որոշակի իմաստ են ստանում նաև ձեռագրի վերջում գտնվող «զբարի և զհաւատացեալ... զամիր Խութլուն...»[7] խոսքերը, իբրև ոչ միայն մի բարեպաշտ իշխանի նվիրված, այլ մեկին, որն իր նպաստն է բերել հայ եկեղեցու իրավունքների պաշտպանության հարցում:

Անկասկած այս իշխանի հովանավորությունն է վայելում Որոտնեցին, երբ Գրիգոր Կամախեցու վկայությամբ, իր աշակերտ Տայթնացու հետ թողած հայրենի գավառի եզերքները, ապաստան է գտնում Եկեղյաց գավառում. «Եւ ի մերձ անցեալ ժամանակի ասնուանի մեկնիչ բարունիք են ելեր բնակելով յաշխարհն ի վանորայքն մեր. որպէս Յովհաննէս Որոտնեցին եւ եռամեծ աշակերտ նորին՝ փախստեալ գոլով յարեւելից կողմանէ ի յահէ անօրէն նեղչաց եւ գերչաց և սպանողաց, բնակելով ի մեր Դարանաղեաց լերինն Սեպուհոյ ի հանգստարանի Սրբոյն Գրիգորի մեր լուսաւորչի, որ ի ներքոյ խորագոյն ծործորին, որ Անապատ կոչի անուամբ յամենեցունց...»[8]:

Նույն պատմիչը վկայում է նաև. «Վասն որոց ցանկացաւ սուրբ տեղոյն շինել զանուիկ ամրոցն ժամանակ մի բնակելով անդ ի թուի ՀԾԶ»[9]:

Հասկանալի է, որ Որոտնեցին նոր վայրում շինարարական այսպիսի աշխատանք կարող էր ծավալել տեղի հայ իշխանի օգնությամբ, ինչ անկասկած չի գլացել «աստուածասէր» Խուտլուշահը:

Փաստերի աղքատությունը այսօր հնարավորություն չի տալիս ասելու, թե Որոտնեցին իր աշակերտների հետ Եկեղյաց գավառում եղած ժամանակ շինարարական, գիտաս-մանկավարժական գործունեությունից ու ձեռագրեր ընդօրինակելուց զատ ուրիշ ինչով զբաղվեց, սակայն վերոհիշյալ գրությունը ցույց է տալիս, որ նրա ուշադրության կենտրոնում եղել են նաև դավանաբանական հարցերը և անհավանական չէ, որ իր համախոհ իշխանի օժանդակությամբ գործնական պայքար ծավալած լինի այդ գավառը թափանցելու փորձեր կատարող միարարների դեմ:

«Հաւատոյ դաւանութիւնք...»-ի գրման ժամանակի ճշտման համար բանալի է ծառայում գրության հասցեատերը՝ Կոստանդին կաթողիկոսը: Հայտնի է, որ Կոստանդին Դ Լամբրոնացի կաթողիկոսը վախճանվել է 1326 թ.[10], որից հետո ԺԴ դարում Կոստանդին անվամբ միակ կաթողիկոսը Կոստանդին Ե Սսեցին է, աթոռակալած 1372—1374 թթ., երբ Կիլիկյան հայկական թագավորությունը մի կողմից Եգիպտոսի մամլյուկների ու նրանց վասալ Էմիրությունների հարվածներից, մյուս կողմից երկրում ծայր առած գահակալական ու դավանաբանական պայքարից թուլացած, միայն հայ զինվորների և առանձին տաղանդավոր զորապետների բացառիկ հերոսության շնորհիվ էր դեռևս պահպանում իր գոյությունը:

Հենց այս Կոստանդին Սսեցուն էլ ուղղված է Որոտնեցու գրությունը: Իսկ եթե գրության մեջ եղած ակնարկը «Զի ոչ գոյ իշխան, մարգարէ և առաջնորդ, որ յայց ելեալ խնդրէր զհաշտարար քաղցրութիւն կամացն»[11] հասկանանք այնպես, թե ակնարկվում է Կիլիկիայում թագավորի բացակայությունը (մանավանդ որ Որոտնեցին թագավորի մասին ոչ մի հիշատակություն չի անում), ապա գրության ժամանակը պետք է դնել 1373 թվականի ապրիլից հետո, երբ

---

[7] Նույն տեղում:

[8] Ց. Քիւրտեան, Երիզա եւ Եկեղեաց գաւառ, հ. Ա, էջ 293: Ի դեպ այս հատվածի շարունակությունը աղերս ունի Հովհաննես Երզնկացու խրատական թղթերի հրատարակության առթիվ մեր հայտնած մի կարծիքի հետ: Գրել էինք, որ «Ի սուրբ լուսաւորիչն ի գնդեզմանէն և յանապատացս սրբոց և յամենայն եկեղեացս, որ ի սուրբ լերինս, աւրհնութիւն և պանպանութիւն...», ինչպես և՝ «Որ և նշան դալարութեան շառաւեղին երեւցաւ յայդմ գաւառի, զոր օրհնեաց սուրբն Գրիգոր Լուսաւորիչն ազգս որոյն Յովհաննու Կարապետին...» արտահայտությունները ցույց են տալիս, որ № 3439 ձեռագրում եղած նամակի հիմնական մասը Երզնկայի իշխանին գրված նամակի մի օրինակ է, թյուրիմացաբար կցված Կիլիկիայի Ռուբինյաններին Երզնկացու գրած մեկ այլ նամակի հետ: Տե՛ս Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացու թուղթը Եկեղյաց գավառի իշխանին, Բանբեր Մատենադարանի, № 10, 1971, էջ 298:

Կամախեցու վերը բերված հատվածի շարունակությունը լավագույնս հաստատում է մեր վարկածը, առհա այն. «Եւ ոչ է տեղի ունայն, այլ ի ձեռակերտ փայտեայ շինի փոքրիկ մատուռին, որ յանուն Սրբոյ Կարապետին շինեալ է Սուրբն Գրիգոր արփիւաւորիչն մեր՝ յանկուլթ փայտէ գիմիցն, որ դեռ տակաւին նորոգ է...»:

[9] Գրիգոր Կամախեցու փոր ասկա է թվականի բացահայտ սխալ, որն իրավամբ ուղղում է Հ. Քյուրտյանը, տես. Երզնկա եւ Եկեղեաց գաւառ, հ. Ա, էջ 293:

[10] Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Պոլիս, 1960, էջ 1841:

[11] Մատենադարանի ձեռագիր № 657, էջ 14բ:

սպանվեց Կոստանդին Հեթումյանը, մինչև սեպտեմբեր, այսինքն մինչև Լևոն Լուսինյանի գահ բարձրանալը:

Մաղաքիա արք. Օրմանյանը իրավամբ ուժվարանում է Կոստանդին Ե կաթողիկոսի գործունեության մասին որոշ գնահատական տալ փաստերի բացակայության պատճառով: Բայց նրան նույնացնելով այն Կոստանդին եպիսկոպոսի հետ, որը մասնակցել էր 1343 թվին Մխիթար Ա Գոշերցի կաթողիկոսի կազմակերպած Սսի եկեղեցական ժողովին, իբրև Մխիթարի գործակից, ենթադրում է, թե իբր Կոստանդինը ևս պետք է, որ հարած լիներ լատինամոլ կուսակցությանը[12]:

Սակայն վերոհիշյալ գրությունը կարծում ենք որոշակի հարցականի տակ է դնում երախտավոր գիտնականի ենթադրությունը: Հազիվ թե Որոտնեցին հարմար համարեր, իր լատինամոլությամբ վաղուց ի վեր հայտնի հոգևոր գործչին, հորդորական այսպիսի գրություն գրել, այն էլ այն պարագայում, երբ կարծես ինքն էլ շատ քիչ հույս ունի, թե կաթողիկոսը կարող է փոխել իրերի վիճակը: «Գիտեմ,—գրում է Որոտնեցին,—զի կարեն հակառակքն ճշմարտութեան, գտանել վկայութիւնս ի գիրս Աստուածաշունչս և ըստ թիւրութեան մտաց իւրեանց շեղեն: Այլ ոչ ի ճշմարտութենէն, զի բաժանումն յետ միաւորութեան եղև»: Իսկ կաթողիկոսին համարում է հայ առաքելական եկեղեցու ճշմարիտ հետևող. «Այլ դու գլուխ համալնից և ի քեզ յաղեալ անդամքս քո, նովին զմայլիմք և անմահանամք»[13]:

[12] Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 1932:

[13] Մատենադարանի ձեռագիր № 557, էջ 15բ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՐՈՏՆԵՑՈՒ «ՀԱՒԱՏՈՅ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ» ԹՈՒՂԹԸ

Այս են հաւատոյ դաւանութիւնք, զոր գրեաց մեծ վարդապետն Յոհանէս Որոտնեցի հրամանաւ պարոն Խոթլուշին, ի Հայս, առ կաթողիկոսն տէր Կոստանդին[1]

Յանեղ և յանպարագիր լուսոյն կնքեալ լոյս համատիրաց կրկին ազդմամբ վսեմական գի[տու]թեամբ և կենդանախարոյկ մաքրութեամբ հոգոյն, իբրև զակն տուընջեան ի գ[մ]բեթայլարդ խորանն եկեղեցոյ, թագ և գլուխ և կաթողիկոս ամենայն հայոց տէր Կոստանդին՝ տնեսցես յամեր[ամս] // ժամանակաց ի պարծանս եկեղեցոյ:

Ծանիցէ բ(արձրախո)հ և վեհափառ իմաստութիւնդ ձեր, զի հայեցիս ի տառապանս աղախնոյ քո և խոնարհեցուցես զուինկն քո յաղաչանս ծառայից քոց: Շաւշափեսցես մատամբ լուսաւորհոգ իբրև զիմաստուն բժիշկ զերակ կենաց մերոց և տրոհեալ դատեա դեղով կենաց, առողջութեանն պահպանութիւն տուր և հիւանդութեանն հերքումն, քանզի գլխոյ՝ իջանեն անձնական զա[ւրու]թիւնք և կենագործեն զբոլոր մարմին: Իսկ արկածք չարին և հնարք խորթացոյց յայս կարգ և էարկ հիւանդու//թիւն ի գլուխ ի նախնի կաթողիկոսն ասեմ ի Գրիգոր Անավարզեցի և յայնմհետէ հիւան[դու]թիւն, գայթակղութիւն, թերութիւն և հայոյութիւն ոչ բարձաւ յեկեղեցոյս հայոց: Կարծիս տացաւ շինելոյ և եղև հիմն ապականութեան: Զվայրի ձիթենին ոչ կարաց պատուաստել, ի բուն ոստոց իւրոց հատաւ:

Մարդով մահ, դարձեալ մարդով յարութիւն: Աղաչեմ վասն սիրոյն Քրիստոսի լեր միջնորդ խաղաղութեան ըստ նախա[..]ին քո Տեառն մերոյ և Փրկչին Քրիստոսի: Բարձ զգայթագղութիւն և զհիւանդութիւն ազգիս: Եւ մեք ծանուցանեմք զամենայն որպիսութիւնս մեր գլխոյդ հա-

[1] Ձեռագիրը տեղ-տեղ ցնցակեր է և դժվարընթեռնելի:

մայնից։ // Նախ՝ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ։ Երկրորդ՝ զառիթ տարորոշութեան մերոյ։ Երրորդ՝ զվկայութեան բազմութիւն վասն ուղղափառ հաւատոյս մերոյ։ Չորրորդ՝ զվշտագին պաղատանս, զի յաւդեսցես առողջարար դեղաւք ի գլուխ զանդամս քո։

Եկեսցուք առաջին գլուխ, և որպէս խոստացաք՝ տացուք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյս։ Հաւատամք ի Հայր և յՈրդի և ի Հոգի Սուրբ։ Յերիս աստիճանս[սն] ի մի աստուածութիւն, մի բնութիւն, մի տէրութիւն, մի իշխանութիւն և մի կամք։ Հաւատամք զՀայր անել, զի ոչ յումեքէ եղեալ։ // Անծին՝ զի ոչ յումեքէ ծնեալ։ Զի ոչ ոք նախքան զնա, այլ ինքն է նախքան զամենեսեան, անսկիզբն, անվախճան, Աստուած և Տէր, ծնաւղ Որդոյ անժամանակ և բխաւոյ Հոգոյ անվայրկեան։ Հաւատամք զՈրդի ծնեալ ի Հարէ նախքան զյաւիտեանս։ Եւ ոչ է հնար կարծել, թէ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, այլ, որքան Հայրն Հայր և Որդին ընդ նմին Որդի, հաւասարագոյ Հաւր, անսկզբնաբար սկսեալ ի Հարէ, բնութիւնակից Աստուած ընդ Հաւր։ Նոյն տէր, նոյն իշխան, նոյն կամք և նոյն զաւրութիւն, ի Հարէ, և առ Հայր։ // Հաւատամք և զՀոգին Սուրբ, բխումն ի Հարէ, Աստուած ճշմարիտ նախքան զյաւիտեանս բխեալ ի Հարէ, անսկզբնաբար բխմամբ սկսեալ զոյգ և հաւասար Աստուած, ընդ Հաւր և ընդ Որդոյ բնութիւնակից, փառաւորակից, իշխան և տէր, ի մի զօրութիւն և ի մի կամս ընդ Հաւր և ընդ Որդոյ։

Եւ որպէս անհնար է թարց լուսոյ և ջերմութեան տեսանել զհուր, այլ որքան է հուր, ընդ նմայ է լոյս և ջերմութիւն իւր։ Այսպէս անհնար է մտածել զՀայր առանց Որդոյ և Հոգոյ Սրբոյ, այլ որքան Հայրն է Հայր, ընդ նմայ է բանն և կեանք իւր, // զի ոչ երբէք կարծի Աստուած գոլ անբան և անկենդան։

Իսկ զբանին Աստուծոյ զմարդելութիւնն դաւանեմք և խոստովանիմք։ Զբանն Աստուած իջեալ յարգանդ սուրբ կուսին, կամաւ Հաւր և հաճութեամբ Սուրբ Հոգոյն, ներգործէ զաստուածասէս, անսերմն յղութեամբ, զմերս առնելով՝ զհոգի, զմիտս և զմարմին, զամենայն, որ ինչ է մարդ ճշմարտապէս, բաց ի մեղաց։ Եւ որպէս ի հոգոյ և ի մարմնոյ մի բնութիւն, այսպէս եղև յաստուածայնոյն և ի մար[դ]կայնոյն։ Մի բնութիւն անշփոթ և անբաժան, Աստուած մարդացեալ և մարդն Աստուածացեալ։ Վասն որոյ ասի, խաչն Աստուծոյ խաչ, և մարդն ընդ բանին զոյգ Աստուած։ Քանզի ի սոյն միտս // ասէ Աստուածաբանն. «Համարձակիմ ասել զոյգ Աստուած, որպէս առաւղն, նոյնպէս և առէսլն». և թէ՝ «Աստուած վասն իմ խաչեալ»։ Յայսմանէ աներկբայ հաւատով ընդունիմք զմիութիւն բնութեանն ի վեր, քան զամենայն եղանակ սիութեան։ Նոր խառնումն և սքանչելի խառնուած։ Եւ որպէս անսերմն յղութիւն և կուսութեամբ ծնանիլ, վիմովն կնքելով յառնել և դրաւքն փակելովք մտանել, Աստուածապէս ներգործութիւն և ի վեր, քան զհասումն մտաց։ Անդանաւր հաւատ և աստ այլ ոչ քննութիւն։ Յաղագս որոյ, խոստովանիմք անշփոթ և անբաժ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ մի բնութիւն, մի կամք և մի // ներգործութիւն։ Ըստ աւետարանական և առաքելական և հայրապետական վկայութեանց, որպէս կամիմք յառաջիկայս ցուցանել։ Նա և ընդ սմին՝ զխաչ, զմահ, զյարութիւն, զհամբարձումն և զնստելն ընդ աջմէ Հաւր և զմիւս անգամ գալուստն խոստովանիմք, ի մի Աստուծոյ մարդացելոյ և մարդոյն Աստուածացելոյ։

Իսկ զաւր ծննդեան Միածնի Որդոյն, որ ի կուսէն և զյայտնութիւնն,

որ ի Յորդանանի՝ միում աւուր տաւնեմք՝ յունուարի Զ(6)ն ըստ առաքելական կարգադրութեան:

Իսկ զիսորհրդաւոր պատարագն մարմնոյ և արեան՝ անչուր բաժակա կատարեմք, ըստ կանխագուշակութեան մարգարէին, // թէ՝ «Բաժակ, քո, որպէս անապակ՝ արբեցոյց զիս»: Եւ ըստ ներգործութեան Տեառն մեր, որ ասէ. «Առ զբաժակն այսոքնեաց». և թէ՝ «Ալ արբիցի ի բերոյ որթոյ». և որթն գինի բերէ և ոչ ջուր:

Այս յաղագս առաջին գլխոյն:

Բեր ձեռնարկեսցուք ցուցանել զերկրորդն՝ զպատճառ տարանջատման մերոյ ի Քաղկեդոնական ժողովոյն և ի հետևողաց նմին:

Նախ, զի ասեն՝ զՀոգին Սուրբ բխումն ի յՈրդոյ և ի Հաւրէ: Եւ երկրորդ, զի ասեն՝ Բ բնութիւն և Բ ներգործութիւն և Բ կամք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ երրորդ, զի զտաւն ծննդեանն ի դեկտեմբերի ԻԵ(25)ն կատարեն: Չորրորդ, // զի զսորհրդաւոր պատարագն մարմնոյ և արեան Տեառն ջրով կատարեն: Եւ մեք յայսցանէ կարի յոյժ որուծարեմք, վասնզի հակառակ է առաքելական կարգաց այսպիսի իմացուածս: Նաև ոչ ոք ի սրբոցն վկայէ այսմ խորհրդոցս: Եւ զի աստար է ի հին և ի նոր կտակարանաց վարդապետութեանց, որպէս կամիմք յառաջիկայսդ ուս[ուց]անել: Եւ իր, որ առանց վկայութեան է անհաստատ է, քանզի ասէ գիրն, թէ՝ «Յերկուց և յերից վկայից հաստատի ամենայն բան»: Եւ այս յաղագս այսորիկ այսքան:

Բեր տեսցուք զերրորդն, որ խոստացաք յաղագս մերոյ ուղղափառ դաւանութեանն:

Գիտելի է, // զի ունիմք մեք վկայս բազումս: Նախ՝ զաւետարանական վկայութիւն և զառաքեալսն է զհետևողսն նոցա:

Երկրորդ՝ զերիս սուրբ ժողովն՝ զՆիկիայինն, զԿոստանդնուպալսին, զԵփեսոսին:

Երրորդ՝ զսուրբ Լուսաւորչին, զորդոյ և զթոռանց իւրեանց զկանոնական կարգադրութիւնս:

Չորրորդ՝ զսուրբ հայրապետացն և զվարդապետաց ունիմք զվկայութիւն, որ ի մեկնութիւնս Աստուածաշունչ գրոց և ի բեմասացութեան իւրեանց, զնոյն ուղղադաւանութիւնս հաստատեցին:

Բեր ձեռնարկցուք ի վկայութիւն աւետարանական և առական վարդապետութեանց և ասասցուք նախ յաղագս հոգոյ: Զի ասէ Յոհաննէս աւետարանիչն, // թէ՝ «Հոգին ճշմարտութեան, որ ի Հաւրէ ելանէ». և թէ՝ «Մխիթարիչն Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր»:

Եւ Մաթէոս աւետարանիչն ասէ. «Ոչ եթէ դուք էք, որ խաւսիք, այլ Հոգին Հաւր ձերոյ»:

Եւ առաքեալ ասէ. «Ապաքէն դուք տաճար Աստուծոյ էք և Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ»: Եվ դարձեալ ասէ, թէ՝ «Մեք զՀոգին Աստուծոյ առաք»: Եւ թէ՝ «Հոգի այնորիկ, որ յարոյց զՅիսուս ի մեռելոց»:

Այս յաղագս հոգոյ աւետարանական և առաքելական վկայութիւնք, զի թէպէտ և բազում են ի գիրս սուրբս, այլ այսքան բաւական լիցի: Բայց մեք կարճ ի կարճոյ տացուք պատասխանի այնոցիք, որ ասեն. «զՀոգին ի Հաւրէ և յՈրդոյ բխեալ»:

Ով դուք կարո՞ղ // ասէք՝ զՀայր ի բխումն Հոգոյ՝ թէ անկար: Եթէ կարող է՝ կատարելապէս բխէ զՀոգին և ոչ անկատար: Իսկ թէ կատա-

րեալ՝ աւելորդ է բիւրեալն Որդոյ: Իսկ թէ անկատար ասէք՝ զՀայր և զՈրդի ազգական տալք նմայ ի բխումն Հոգւոյ, յայն ժամ, գոյ ըստ ձեզ, ոչ ոքն Աստուած, զի երկուցն անկատարից, անկատար է և յառաջ եկեալն: Իսկ թէ բաւլբաղեն զվկայութիւնքս զայս. «Հոգի Քրիստոսի». Եւ կամ թէ՝ «Երթամ և առաքեմ զնա». և կամ թէ՝ «Ցիմմէ անտի առնուցու և պատմէ». և այլ սոյնպիսիս: Այսք ամենայն և այլ սոյնպիսիք յայն սակս ասացան, զի ծաւալումն Հոգւոյն Սրբոյ յազգս մարդկան գալստեամբն Քրիստոսի եղև: // Քանզի, ոչ եթէ գիրն՝ այլ Հոգին կեցուցանէ: Իսկ մեք եկեսցուք ի միութիւն բանին, որ վկայէ աւետարանն և առաքեալք:

Աւետարանն, թէ՝ «Բանն մարմին եղև». և թէ՝ «Զնա Հայր կնքեաց Աստուած»: Եւ թէ՝ «Տեսանիցէք զՈրդի մարդոյ երթեալ յերկինս, ուր էր զառաջինն»:

Եւ առաքեալն Թովմաս մարմին շոշափելով՝ տէր Աստուած դաւանէր:

Եւ առաքեալն Պաւղոս ասէ, թէ «Էին ծանուցեալ, ոչ արդեաւք զտէր փառաց ի խաչ հանէին»:

Իսկ զծնունդն և զմկրտութիւնն Տեառն մերոյ Յիսուսի, առաքեալն Յակովբոս, ի միում աւ[ու]ց կարգեաց յընթերցուածն, տանել զտաւն ծննդեանն և յայտնութեան Քրիստոսի // Աստուծոյ մերոյ, ելեցն յունուարի, ամենայն քրիստոնէից:

Իսկ զխորհրդաւոր պատարագն, ի Քրիստոսէ հետէ, ամենայն ազգ Քրիստոնէից, անապակ բաժակաւ կատարէին, զոր ի վկայութիւն վարդապետացն յայտնի առնեմք, յաղագս սորա և ծննդեանն Տեառն: Զի սուսքելական է կարգ և ոչ նորընծայ գիտ: Իսկ վկայեն ի վերա այսմ Դ (3) սուրբ ժողովն, ԳՃ և ԺԸ (318) հայրապետքն, որ ի Նիկիա և ՄԾ (250), որ ի Կոստանդնուպալիս և Մ (200), որ Եփեսոս, զնոյն հաստատեցին կանոնաւք՝ զՀոգին բխումն ի հաւրէ և մի գոյ զբնութիւն բանին մարմնացելոյ: Այսպէս և յաղագս ծննդեանն և խորհրդաւոր պատարագին: Նայն // Սուրբն Լուսաւորիչ, որդով և թոռամբ՝ զնոյնս կարգեցին կանոնական հաստատութեամբ յաղագս հայոց: Եւ մեք ունիմք գրեալ ի սիրտս և ի ճակատս հաւատոյ՝ անշարժ հաստատութեամբ: Եւ ամենայն ազգ քրիստոնէից զնոյնս ասնէին հաստատութեամբ մինչև ի ժողովն Քաղկեդոնի:

Բեր ասասցուք այժմ զվկայութիւն հայրապետաց և վարդապետաց սրբոց, յաղագս մի բնութեան բանին մարդացելոյ:

Ասէ սուրբն Աթանաս, թէ՝ «Արդար և ճշմարիտ մարդ եղև Փրկիչն մեր և բովանդակ զբնութիւնս մեր միացոյց ընդ ինքն՝ բանն, Աստուած»: Եւ դարձեալ ասէ, թէ՝ «Էր զմեր բնութիւն և միացոյց ընդ ինքեան և եղև // մի բնութիւն Աստուածն և մարդ». վասն որոյ ծնաւղն Աստուածածին խոստովանի:

Սուրբն Կիւրեղ Աղեկսանդրացի ընդդէմ Նեստորի ասէ. «Եթէ ոք ոչ խոստովանեսցի Աստուած ճշմարիտ զԷմմանուէլն և վասն այդր Աստուածածին զսուրբ կոյսն Մարիամ, որ ծնաւ մարմնով զԱստուածն բան, որ ոք ոչ այսպէս դաւանեսցի՝ եղիցի նզովեալ»: Դարձեալ ասէ. «Եթէ ոք տէր Յիսուս Քրիստոս բաժանեսցէ երկուս երեսս յետ միանալոյն՝ եղիցի նզովեալ»:

Եւ սուրբն Բարսեղ ասէ ընդդէմ Ապողինարի. «Եթէ ես զծնունդն ի կուսէն Աստուծոյ ասեմ. զանունդն և զկերակրելն, զչարչարանս և

զմահ Աստուծոյ ասեմ. զայն, որ մարմնովն կեաց վասն իմ»: Դարձեալ ասէ, թէ՝ «Սիմէոն ընդգրկէր // ի փոքր տաղաւարում, զմեծն Աստուած երկրպագեալ ի մարմնի»:

Լուսաւորիչն մեր սուրբ Գրիգորիոս ասէ ի վարդապետութեանն իւրում, թէ՝ «Զմահկանացու բնութիւնս մեր խառնեաց յանապականութիւն Աստուածութեան իւրում, զի զբնութիւնս մեր անապական արասցէ»: Եւ դարձեալ ասէ. «Միացաւ ի մարմնի և խառնեաց զմարդկութիւնս ընդ իւրում Աստուածութեանն»:

Երանելին Եփրեմ ասէ. թէ՝ «Ի սրբոյ կուսէն Մարիամայ խոստովանիմք զբանն Աստուած մարմնացեալ և ոչ բաժանեմք յերկուս դէմս և յերկուս բնութիւն»: Եւ դարձեալ ասէ. «Ոչ թէ յերկնից ասեմք զմարմինն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այլ յԱստուածածին կուսէն Մարիամա // խոստովանիմք և զբանն Աստուած ոչ բաժանեմք յիւր մարմնոյն, այլ մի դեմ, մի բնութիւն»:

Եւ սուրբն Յակոբ Մծբնա հայրապետն ասաց ի սուրբ ժողովն Նիկիա թէ՝ «Որ ոք ասասցէ զկնի մարմնաւորութեան բանին՝ Բ (2) բնութիւն և Բ (2) դէմս և Բ (2) կերպարանս, և այդիւ չորրորդութիւն մուծանէ ի յերրորդութիւնն՝ նզովեալ եղիցի»: Դարդեալ ասէ. «Որ ոք համարձակի ասել զմարմին Աստուծոյ, յետ անճառ միաւորութեանն ապականացու և ոչ առաւել խոստովանեսցի մի դեմ, մի բնութիւն աներկբայ, մի Աստուած երկրպագեալ ի միաւորութեան՝ եղիցին նզովեալ»: Եւ այլևս բազում//ք են ի սուրբ հայրապետացն այսպիսի վկայութիւնք, այլ վասն կարճութեան բաւական համարեցաք զմասնաւորս զայս: Եւ վասն զձեզ զընդհանուրն գիտելոյ:

Կարգեցուք այժմ վկայութիւնք վասն ծննդեանն և յայտնութեանն, զոր ճշմարտութեամբ ի միում աւուր տանեն Հայաստանեայց եկեղեցիք:

Ասէ սուրբն Կղեմէոս, հետևող առաքելոցն, թէ՝ «Կարգեցին առաքեալքն Տեառն զաւուր ծննդեան Տեառն ի Զ (6)ն յունուարի»:

Ասէ սուրբն Մակար Երուսաղեմի հայրապետն, թէ «Ցերիս տաւն առաւել փափագեցին հարքն մեր՝ ի զատիկն, ի ծննդեանն և ի մկրտութեան, զոր ի // միում աւուր տանեմք»:

Ասէ սուրբն Յոհան Երուսաղեմի հայրապետն, թէ՝ «Կանոնք և սահմանք եկեղեցոյ է. զի զաւուրս Ը (8) պահեսցեն ծերք և տղայք, ընդ նմին զշաբաթ և զկիրակէ: Եւ յորում աւուր դիպեսցի կատարեսցեն զաւուր ծննդեանն և զմկրտութեան Տեառն, վասն զի Աստուածայինք են և փրկագործք»:

Աստուածաբանն Գրիգոր ասէ. թէ՝ «Կարգեսցէ եպիսկոպոսն իւրոյ եկեղեցոյն ի Զ (6)ն յունուարի զաւուր ծննդեանն Տեառն և զմկրտութեանն և ի ԺԴ (14) փետրուարի զգալն ի տաճարն»:

Այսպէս ասէ և մեծն Անանիա քաջ հռետորն Հայոց, եթէ. «Պարտ է հաւատալ Աստուածային գրոց. ի Ժ(10) թշրին ամսոյ զ//պապանձումն Զաքարիայի», որ է ԻԷ (27) սեպտեմբերի և. «ի ԻԲ (12)ն թշրին ամսոյ զլղութիւն Եղիսաբեդի», որ է Թ (9) հոկտեմբերի:

Ըստ վկայութեանն Ղուկասու, իբրև լցան աւուրք պաշտամանն՝ գնաց ի տուն իւր Զաքարիա և յղացաւ Եղիսաբեթ: Եւ անտի լինի, յետ Զ(6) ամսոյ, ավետիք կուսին: Ըստ հրեշտակին այս Զ (6) երրորդ ամիսն է նորա, որ ամուլն կոչեցեալ էր: Եւ է Զ(6) ամսոյ աւուրքն ՃՁ (180) աւր, որ ցուցանէ ի ԺՁ (16)ն նիսան ամսոյ, որ է Զ (6)ն ապ-

ոիլի։ Եւ թուեալ ասստի, Թ (Ց) ամիս և Ե(5) աւր յլութեան կուսին, կատարի ի ԻԱ. (21) տբեթ ամսոյ, որ է Զ(6)ն յունուարի, յորում ծնաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, Աստ կացց//ուք հաստատուն։

Եւ դարձեալ վկայէ Ղուկաս. «Յիսուս էր ամաց երեսնից», որ ցուցանէ ի Զ (6)ն յունուարի լինել և մկրտութիւնն, յորում ծնաւ Քրիստոս ի կուսէն։

Յակոբոս, որ քաջ գիտէր, ի Զ(6)ն յունուարի գրէ զծնունդն Քրիստոսի և զյայտնութիւնն և կարգէ յընթերցուածին։ Միաբանի նմա և Կիրեղ Երուսաղէմացին, քանզի ասէ, թէ՝ «Յայլ քաղաքս հետևեցան Արտեմոնի և հայք միայն գտան առաջինն»։

Ասացին սուրբ հարքն ի կանոնքն, զոր եդին ի Կարնոյ քաղաքն, հրամանաւ Յուստիանոսի բարեպաշտի, թէ՝ «Որպէս կարգեցին առաքեալքն ի Զ (6)ն յունուարի պարտ է // ուրախութեամբ տաւնել ի վասն Աստուծոյ։ Եւ, որ այլ ազգ խորհի և ի ԻԵ (25)ն դեկտեմբերի ծնունդ առնէ, հետևելով Արտեմոնի՝ յԱստուծոյ և ի սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի»։

Բաւական լիցի սակավաս ի բազում վկայութեանց սրբոցն, որ յաղագս ծննդեանն և յայտնութեանն ի միում աւուր կատարելոյ։ Զի գիտեմ զքեզ քաջ տեղեակ գոլ բոլորիցն ի նոցանէ։

Դիցուք այսուհետև և զվկայութիւն խորհրդաւոր սպատարագին անապակ բաժակաւ կատարել։

Ասէ սուրբ առաքեալն Թադէոս. «Արժան է զհաց պատարագին ջերմ հանել ի սեղանն և ջուր ոչ է պարտ խառնել ի գինին»։

Սուրբն Կիրեղ Աղեքսանդրացի ասէ ի Պարապմանց գիրս, եթէ՝ «Աթոռակիցն Հաւր ետ մեզ // զարիւնն վասն մեր և վասն այնորիկ առնեմք անապական գինով, զի մի ապականութեան կարծիս, յանսպական արիւնն Աստուծոյ լիցի»։

Ասէ սուրբն Յոհան Ոսկէբերան, ի «Մեկնութեան աւետարանին», թէ՝ «Ո՞ւր են այնոքիկ, որ ի սուրբ խորհուրդն ջուր արկանեն, զի որթն գինի ծնանի և ոչ ջուր»։ Ի քրիստոնէից, թէ ոք ճաշակեսցէ զհացն զայն յանգիտութեան՝ որոշեսցի յեկեղեցոյ և թէ գիտութեամբ՝ նայ իբրև զայն է, որ ի զոհիցն ճաշակիցէ և կամ մեռելոտի ինչ։

Դարձեալ Յոհան Ոսկէբերան և Աթանաս և Բարսեղ ի պատարագամատոյցսն իրեանց, ամենայն ուրեք ասեն. «Գինի անապակ և ոչ ջուր խառնեալ»։ Եւ որ ոք կամեսցի, գտցէ դիւրաւ։

Գրէ և Տիրան // վարդապետ հայոց ի թուխտն, որ վասն հաւատոյ[3],

[3] Աճառյանի անձնանունների բառարանում հիշատակված է Տիրան ոմն հետևյալ աշխատության կապակցությամբ. «Հարցմունք Կոմիտասայ և Տիրանայ Հայոց վարդապետի»։ Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 157։ Գործի հեղինակը Գրիգոր Տաթևացին է։ Տիրան վարդապետը պետք է որ նշանավոր մեկը եղած լիներ, որպեսզի արժանանար «Վարդապետ Հայոց» բարձր տիտղոսին։ Ավելին՝ Որոտնեցին նրանից մեջբերում է կատարում քրիստոնեական եկեղեցու ամենանշանավոր հայրերի՝ Կիրեղ Աղեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի և հայոց նշանավոր կաթողիկոս Ներսես Շնորհալու շարքում, իսկ Տաթևացին հավաքում է նրա գրությունները։

Արդյոք Որոտնեցու մոտ, Տիրանի վկայությունը Ներսես Շնորհալուց առաջ գնելը, թույլ տալի՞ս է ենթադրել, թե Տիրան վարդապետը ժամանակով ավելի հին է՝ դժվար է ասել։ Համենայն դեպս հավանական է, նրան նույնացնել 11-րդ դարում ապրած Տիրան կամ Տիրանուն Կապանեցուն, որը ունի «Թուղթ առ Սենեքերիմ թագաւոր վասն հաւատոյ»։ Նույն տեղում, էջ 158։ Այս թղթից էլ հավանաբար մեջբերում է անում Որոտնեցին։

թէ՝ «Որք խմորեն և խառնեն՝ այս են միտքն, զի հարկ է այսու խառնելով, յապականութիւն խառնեսցի անապական մարմին Քրիստոսի»:

Նոյնպէս և սուրբն Ներսէս կաթողիկոս Հայոց, գրէ առ Մանիլ թագաւորն յունաց, եթէ՝ «Վասն գինոյն ունիմք ի Սուրբն Լուսաւորչէն մերմէ, որպէս և ընկալաւ նայ ի նախնեացն»: Գրեալ է. «Քրիստոս գինի միայն առ ի ձեռս և ասաց՝ այս է արիւն իմ և ջուր ոչ ասաց և թէ՝ ի բերոյ որթոյ ոչ արքից»:

Իսկ ի Կարնոյ կանոնքն, Հրամանաւ Յուստիանոսի, ասեն այսպէս. «Քանզի լուաք լուր ծանրագոյն, թէ ոմանք ապականեալք ի քաղկեդոնականացն և զսուրբ խորհուրդն ապականին խմորով և ջրով: Արդ, եթէ ոք գտցի յայսպիսի // չար սովորութիւնս լուծցի ի կարգէն և ի սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի, ամէն»:

Այլ ի յաւարտ Աստուածաբան վկայութեանցս, զչորրորդն գլուխ մատուսցուք՝ երկրպագութիւն բոլոր, ամենայն անդամքս՝ գլխոյդ համայնից և խնդրեմք ի մարդասիրէդ, որոյ գործ ստեղծանելն է և նորոգել և զայն ըստ պիտոյս ժամանակի: Զի կարի նուազեցուք և եմք տուռապեալ յամենայն երկրի: Զի ոչ գոյ իշխան, մարգարէ և առաջնորդ, որ յայց ելեալ, խնդրէր զհաշտարար քաղցրութիւն կամացն: Իսկ զնըշան, փրկարար տեսեալ ի պատկերիդ, հաւատամք, բայց վասն ամենեցուն հաւատարմութեան խնդրեմք, եթէ դու ես, եթէ այլում ակնկալցուք: Աղաչեմ հազ//ար, վասն Աստուծոյ, արա զնշան նորոգութեան, զի ընթացցուք ասացցուք. կաղք գնան, կոյրք տեսանեն, խուլք լսեն, հումերք խաւսին, մեռեալք յառնեն:

Դարձեալ ծանիր տէր, զի սուրբ Լուսաւորչէն հետէ, մեք՝ ազգս Հայոց, ի վերայ այսմ վերոյ գրեալ դաւանութեանն հաստատ եմք, ի վերա առաքելական հիման: Եւ ունիմք զհրամանս առաքելական, թէ՝ «Քարոզեցաք մեք, և եթէ այլ ոք, և կամ հրեշտակ առասել ևս քարոզեսցէ, քան զոր մեքն քարոզեցաք՝ նզովեալ եղիցի»: Եւ մեք զսայս անդրդուելի հաստատութեամբ ունիմք և զսոյն հայցեմք ի քաղցրութենեդ բումմէ, զսոյն առնել և ուսուցանել յամենայն ընդհանրականքս:

Գիտեմ, զի կարեն հակառակքն // ճշմարտութեան, գտանել վկայութիւնս ի գիրս Աստուածաշունչս և ըստ թիւրութեան մտաց իւրեանց շեղեն: Այլ հեռի է ի ճշմարտութենէն, զի բաժանումն յետ միաւորութեան եղև: Գտաւ վկայութիւն և Արիոս: Գտաւ և Մակեդոն վկայութիւն ի գիրս Աստուածաշունչս: Գտաւ և Նեստոր և հետևողք նոցին, բայց ըստ թիւր կարծեացն իւրեանց: Զի գիրն սպանանող է, այլև հոգին է կեցուցանող և հոգին առաքելական մեկնութիւն է և կարգ: Այլ հերձուածողքն յայսմանէ, իբր գիսոզ, ի հոտոյ միտոնէ մեռանին:

Այլ դու գլուխ համայնից և ի քեզ յաղեալ անդամքս քո, նովին զմայլիմք և անմահանամք:

Բավ է:



Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՍՅՈՒՆԵՑԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵՐԿՈՒ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստեփանոս անունով և Սյունեցի մականվամբ հայտնի հին ու միջնադարյան մի շարք դեմքերից՝ իրենց գործունեությամբ նայ հոգևոր երգաստեղծության խնդիրների հետ առնչվում են V և VIII դարերում ապրած երկու տարբեր հեղինակներ: Երկրորդն է՝ Մովսես Սյունեցու աշակերտ ու Գուլիկ Այրիվանեցու ընկերակից՝ նշանավոր գիտնական, երգիչ ու երաժիշտ-տեսաբան եպիսկոպոսը, որի ուշագրավ վկայաբանությունը տարածվելով տակավին VIII—IX հարյուրամյակներում կազմված «սկզբնական» մի բնագրի[1], ապա և Կաղանկատվացու[2], Գանձակեցու[3], Այրիվանեցու[4], Օրբելյանի[5] աշխատությունների և տարբեր հայսմաւուրքների[6] շնորհիվ, ստվերի տակ է թողել ու մոռացության մատնել V դարի Ստեփանոս Սյունեցու անձն ու գործը:

Ճարականների հեղինակների միջնադարյան մի շարք ցուցակներում հիշատակվում է լոկ մեկ Ստեփանոս Սյունեցի, որին վերագրվում են՝ մարգարեական օրհնությունների հարաստությամբ ստեղծված հարության ավագ օրհնություններից յոթ շարք ու խաչի (դ. օրվա) «Սրբութիւն սրբոց» շարականը (երկուսն ևս ստուգելի): Այսպես՝ «զՅարութեան աւրհնութեանցն զիւրաքն ձայնին, և զխաչի Սրբութիւն սրբոցն Ստեփանոս Սիւնեցին ասաց», գրում է, օրինակ, Սարգիս Երեցը (XIII—XIV դդ.)[7]: Որպես նրաժիշտ՝ միայն մեկ Ստեփանոս Սյունեցի գիտեն նաև Առաքել Սյունեցին[8], Ստեփանոս Ձիր Ջուդայեցին[9] ու Հակոբ Սսեցին[10] (թեև սրանց կարծիքը, մասնավորապես, խաչի վերոհիշյալ շարականի հեղինակի մասին, ավելի ճշգրտված է, ինչպես կտեսնենք ստորև): Գրիգոր Տաթևացին, սակայն, իր կազմած ցուցակում Ստեփանոս Սյունեցի անունը հիշատակում է երկու անգամ: Մեկ՝ ավագ օրհնությունների («Զաւագ օրհնութիւնքն զէ. ձայնին՝ Ստեփանոս

[1] Գարեգին եպիս. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի (Նորագյուտ արձանագրություն և երկեր), Երուսաղեմ, 1931, էջ 9 (այսուհետև՝ Մխ. Այրիվանեցի):

[2] Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 364—68, 370:

[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 72—74:

[4] Մխ. Այրիվանեցի, էջ 17—29:

[5] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 181—144:

[6] Մխիթար Այրիվանեցու շարադրանը, օրինակ, տես Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6261, էջ 628բ (այսուհետև Մատենադարան): Նույն նյութի՝ Ստ. Օրբելյանի շարադրանքը պարունակող գրչագիր հայսմավուրքի մասին տես Դ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց Պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 62: Վերջապես, նախորդ երկուսից ևս տարբերվող մի խմբագրություն պարունակող գրչագրերի մասին տե՛ս Մեսրոպ վարդապետ Գ. Գրիգորյան, Ստեփանոս Սյունեցի, Բեյրութ, 1958, էջ 11—12 (այսուհետև՝ Մ. Գրիգորյան):

[7] Մատենադարան, ձեռ. № 2092, էջ 223բ («Զաղագս որո, թէ հին և նոր շարականք և երգերն յումմէ ասացան»):

[8] Տե՛ս Առաքել Սյունեցի և իր քերթվածները, ուսումնասիրությամբ հրատարակեց Հ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1914, էջ 321—323 («Լասն արարողաց»):

[9] Ի տէր Ստեփանոսէ գիտնական քահանայէ ասացեալ սակաւ ոտաւորս յաղագս շարականաց թէ յումմէ են կարգեալ, Մատենադարան, ձեռ. № 1424, էջ 247:

[10] Ոտանաւոր վասն ցուցանելոյ զերգող շարականացս, յոգեալ ըստ նախագիծ տանց, Մատենադարան, ձեռ. № 8107, էջ 188բ:

«Հոս Սիւնեցին»), ու մեկ էլ՝ ցանկի վերջում խաչի շարականի կապակցությամբ («Եւ զՍրբութիւն սրբոցն խաչի՝ Ստեփաննոս Սիւնեցին»)[11]: Ակնհայտ է, որ Տաթևացին սրբագրում է Գրիգոր Երեցի հաղորդածը, թեպետև հստակ չէ, թե ինչպես է տարբերում նա երկու համանուն հեղինակներին: Վերջապես, ավելի ուշ, նաև Տաթևացու արձանագրած տվյալները վերարտադրվում են նոր ու կարևոր ճշգրտումներով, որոնց, մեզ զբաղեցնող ցուցակներից, հանդիպում ենք՝ XVIII դարի վերջին ու XIX դարի սկզբներին կազմված, «անանուն խմբագրություն» կոչվող[12] ընագրում: «Ստեփաննոս Սիւնեցի առաջինն,— կարդում ենք այնտեղ,— որ յաշակերտաց անտի սրբոց թարգմանչաց, զեօթն ճայնսն աւագ օրհնութեանց»: Եվ ապա՝ «Ստեփաննոս Սիւնեցի երկրորդն՝ զՍրբութիւն սրբոց խաչին, զոր ոմանք Ստեփաննոսի Մոկաց եպիսկոպոսի տան, որ Ապարանցի ևս կոչի»[13]:

Խաչի շարականի հեղինակի հարցին կանդրադառնանք դեռևս: Իսկ այժմ նշենք, որ V և VIII դարերում ապրած Լիւնեցի համանուն երկու երաժիշտներ այնքան հստակ տարբերելու և ավագ օրհնությունները առաջինին հատկացնելու գաղափարին գրեթե միաժամանակ (XVIII հարյուրամյակի վերջերում) հանգել էր նաև առհասարակ հայ պատմա-բանասիրական միտքը, հին աղբյուրների քննական վերլուծության հիման վրա: Աղբյուրներ, որոնց արձանագրած մի շարք տարտամ և կամ ակնհայտորեն սխալ տեղեկություններն իսկ, տվյալ դեպքում, միտք էին շարժում:

Այսպես, ոչ այլ ոք, քան Հ. Մ. Չամչյանը նկատեց, որ Կիրակոս Գանձակեցին, օրինակ, փաստորեն երկու տարբեր դեմքեր է մտաբերում, թող որ տարտամ որոշմամբ, երբ, Ստեփանոս Սյունեցու մասին պատմելիս, մեկ խոսում է՝ թարգմանչաց շրջանին վերաբերող կապակցության մեջ, ու մեկ էլ՝ ասենք՝ Գերմանոս պատրիարքի (VIII դ.) թուղթն ու նրան տրված պատասխանը հիշատակելիս[14]: Չամչյանը ձեռքի տակ ունեցել է նաև (ի թիվս այլոց), Թովմա Մեծոփեցու, Հայսմավուրքի ու Ղազար վարդապետ Ջահկեցու հաղորդած տվյալները: Ջահկեցին ևս խարխափում է: Հայ հին ու միջնադարյան մատենագիրների՝ իր կազմած ցանկում, Ստեփանոս Սյունեցուն տեղադրելով Մամբրե Վերծանողից հետո, նրան համարում է «յաշակերտաց սրբոյն Մովսէսի Քերթողահայրն» ու նրան հատկացնում պունյաց երկրորդ եպիսկոպոսի գործերը, այն էլ ուղղելի կարևոր սխալով, որին կանդրադառնանք տակա-

[11] Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն, Կ. Պոլիս, 1729, էջ 888:

[12] Արդեն նշել ենք մի առիթով, որ բանասիրության մեջ որպես «անանուն խմբագրություն» օգտագործվող սույն ցուցակը (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ LXVIII), հավանաբար կազմել է բանիմաց Գրիգոր վարժապետ Փեշտրմալճյանը (տե՛ս մեր հոդվածը՝ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բանբեր Մատենադարանի» № 7, Երևան, 1964, էջ 178):

[13] Շարակնոց, Կ. Պոլիս, 1815, էջ 2: Շարականների հեղինակների ցուցակներում բացահայտվող այս աստիճանական ճշտումներն ու սրբագրությունները նորից ու նորից են հիշեցնում մեզ, որ դրանք ժամանակին կազմվել են (միջնադարի չափացույցով) գիտական պրպտումների հիման վրա, և որ միանգամայն ճիշտ է վարվել պատմաբան-աղբյուրագետ Հ. Անասյանը, հիշյալ ցուցակները հրատարակելով որպես մատենագիտական ընագրեր, ընդունիր մատնանշելով սկզբնական մի ընագրի հետագա «մշակումն ու զարգացումը» (տե՛ս Հայկական մատենագիտություն, հատ. Ա., էջ XVIII—XIX):

[14] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ. ը, էջ 28. «Որոց վարդապետք և ուսուցիչք՝ սուրբն Սահակ և Մեսրոպ, և գլխաւորք յաշակերտացն՝ սուրբն Յովսէփ, և Յովհան, և Ղեւոնդ, և Սահակ, և Մովսէս Քերթողահայր, և Մամբրէ Վերծանող, Նորուն եղբայր, Եզնակ և Կորիւն, սուրբն Եղիշէ, Դաւիթ փիլիսոփայ և Յովհաննէս, տէր Աբրահամ, Արձան, Մուշէ, Արձան, Խոսրով, Ղազար, և յետոյ Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս, և որ զգիրսն յարմարէր գեղեցիկ՝ Հոռոփանոս Սամոստացի, և այլք բազումք, յորոց ոմանք և յեպիսկոպոսութեան աստիճան հասին, և այլք առաջնորդք ժողովրդոց կարգեալք: Եւ ի նոցանէ ոմանք ի վերայ թարգմանութեան և գիրս լինքեանց շարադրեցին, որպէս սքանչելին Մովսէս զհայոց պատմութիւնն»: Այստեղ մեր կողմից ընդգծված «և յետոյ» խոսքը առաջին հայացքից կարծես առանձնացնում է պունեցի եպիսկոպոսին՝ նախապես հիշատակված V դարի մյուս գործիչներից, բայց լոկ առաջին հայացքից: Քանի որ հեղինակի մտքերի շարունակությունը ևս ամբողջությամբ վերաբերում է թարգմանչաց շրջանին, որով տվյալ կապակցության մեջ կորչում է պարզապես «և յետոյ» խոսքի ժամանակատարբերիչ նշանակությունը: Մինչդեռ ստորև բերվող երկրորդ հատվածում նույն «և յետոյ» խոսքի օգնությամբ փաստորեն երկու պատմաշրջաններ են իրարից զատորոշվում: Հմմտ., նույն տեղում, էջ 29, «Նմանապէս և Մամբրէ Վերծանող ասաց Ներբողեանս ի յաւուրն արմատեանցաց, ի գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ յաւանական: Եւ յետոյ մեծն Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, բազում մեկնութիւնս գրոց սրբոց եթող՝ աւետարանացն համառօտ, և Յոբայ, և Գանիէլի, և Եզեկիէլի, և զպատասխանին թղթոյն Գերմանոսի պատրիարքի Կոստանդնուպօլսի»: Դիտելի է նաև «մեծն» ածականի գործածությունը, որ բացակայում է առաջին հատվածում: Այնպես որ, երբ Գանձակեցին իր աշխատության շարունակության մեջ վերադառնալով Ստեփանոս Սյունեցի Բ.-ին, ու նորից «մեծն» անվանելով նրան, ասում է՝ «զոր ի վերագոյնն յիշատակեցաք» (էջ 72), ընթերցողը դա բնականորեն կապում է վերը բերված հատվածներից երկրորդի հետ միայն:

վին[15]: Հայսմավուրքում (հատկապես ճնատիպ «սովորական համարվածում, որի հիմքում ընկած է Գրիգոր Խլաթեցու խմբագրությունը[16]), փաստորեն երեք անգամ հիշատակվում է Ստեփանոս Սյունեցի առաջինը, բայց երեք տարբեր ձևերով. Ստեփանոս Ասողնիկ (գուցե՝ հենց երգի՞չ իմաստով[17], որն և ի վերջո առիթ է տվել նրան շփոթելու պատմչ Տարոնեցու հետ), Ստեփանոս Ասողնիկ պատմագիր (արդեն ուղղակի շփոթելով Ստեփանոս Տարոնեցու հետ[18]), և պարզապես Ասողնիկ[19]: Ի լրումն այս բոլորի, Թովմա Մեծոփեցին էլ սյունեցի առաջին Ստեփանոսին Ասողիկ թարգմանիչ է անվանում, մինչ երկրորդին կոչում է հենց Ստեփանոս Սյունեցի[20]:

Եվ չնայած այս մեծ խառնաշփոթին, Չամչյանը նախանձելի հստակատեսությամբ պարզում է հարցը (ըստ բոլոր տվյալների՝ օգտագործելով գրչագիր այլ աղբյուրներ էլ, առանց հիշատակելու դրանք). «Բայց սա՝ որպէս յայտնի տեսանի,— գրում է նա,— այս բանք յանհնարին խառնեալ են. առ որով որոշումն գիտելի է, զի Ստեփաննոս Սիւնեցի ոչ է մի կամ երկու, այլ՝ բազում: Մին է սոյն այս Ստեփաննոս, զոր յիշեն սոքա. որ և եղե սիւնեաց եպիսկոպոս, որում և յաչորդեաց Մուշէ. և յետ նորա Պետրոս Քերթողն կոչեցեալ: Երկրորդն էր յաւուրս Յովհաննու իմաստասիրի, որ ի Դաւթէ կաթողիկոսէ ձեռնադրեցաւ եպիսկոպոս սիւնեաց... և սոյն սա էր աշակերտ Մովսեսի Քերթողի երկրորդի՝ եպիսկոպոսին սիւնեաց, և ոչ թէ Մովսեսի Քերթողահօր խո-



Մատ. ձեռ. 591. էջ 116բ—117ա

[15] Իսկ «Ստեփաննոս երկրորդ պետն Սիւնեաց,— գրում է Ջանկեցին, խորացնելով սխալը,— որդի Տարսայիճ հայոց իշխանին»: Տե՛ս Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարո աստուածաբան վարդապետէ Ճանկեցւոյ, Կ. Պոլիս, 1735, էջ 621:

[16] Տե՛ս Հ. Մ. Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, Վենետիկ, 1810—15, հատ. ԺԱ, էջ ՀԷ:

[17] Ասող բայից, որի արմատը՝ աս ազգակից է հունարեն ἄσμα (=երգ)-ին, և որի առաջին նշանակությունն է՝ ոգել (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի):

[18] Որովհետև սա ևս մականվանված էր Ասողնիկ (կամ Ասողիկ), որ դարձյալ, ու Մաղաքիա արքեպ. Օրմանյանի համոզմամբ, հասկացվում է իբրև քաջ խոսող (այսինքն հռետոր), բայց «ավելի սովորաբար՝ իբրև քաջ երգեցողդ» (տե՛ս Ազգապատում, հատ. Ա. մասն Գ., Բեյրութ, 1959, էջ 1184:

[19] Հմմտ.՝ Գիրք որ կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, 1730: Հոկտ Ը և Սեպտեմբերի ԺԷ («Վերստին տօն է Սուրբ Խաչին. եւ յիշատակ սրբոց թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ և աշակերտաց նոցա»): Տրէի ԺԷ և Նոյեմբերի ԻԵ («Դիւտ գրոյն Հայոց որ ի Բալուս»): Մեհեկի ԺԳ և փետրվարի ԺԹ («Վարք և յիշատակ Սուրբ Հօրն մերոյ Վարդապետին Մեսրոպայ»):

[20] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 38:

րենացոյ: Երկրորդն էր յաւուրս Լամբրոնացւոյն» ...և այլն: Եվ ապա՝ «յայսմաւուրքն և Կիրակոս և այլք ոմանք յետին քան խառնեալ զսոսա ընդ միմեանս, զգործս երկրորդին տան առաջնոյն, և զգործս առաջնոյն տան երկրորդին... Եւ զի՝ որպէս ասացաք, Ստեփաննոս Տարոնեցի պատմաբանն երևելի եղև, որ և մականուամբ Ասողիկ կամ Ասողնիկ կոչեցաւ, զայս մականուն նորա տան առաջնոյն, և կոչեն Ասողնիկ, որ է յայտնի սխալ. ...Եւ զայս ոչ որոշելով յայսմաւուրքն, յետ ասելոյ վասն առաջնոյն Ստեփաննոսի Սիւնեցւոյ՝ Ստեփաննոս Ասողնիկ, յտեղւոյ և զքառող պատմագիր, որ է կրկին սխալ: Արդ՝ որպէս երևի ի կարգէ պատմութեանց հայոց, առաջին Ստեփաննոս արար ուշարսկանս աւագ օրինութեանց, և զայլ ճառս ինչ: Երկրորդն թարգմանեաց զգիրս, և արար վմենկնութիւնս. և գրեաց պատասխանի առ Գերմանոս»...[21]:

Պետք է նշել, որ հեղինակն այստեղ նպատակ չի ունեցել պարզելու նաև Ստեփանոս Սյունեցի Բ.-ի երաժշտական վաստակը: Չանց առնելով այս պարագան, կարող ենք հաստատել, որ գրեթե մնացած ամեն ինչում համոզիչ են թվում մեզ Չամչյանի կատարած քննության արդյունքները, որոնք գիտությանը ժամանակին բերել են երկու կարևոր պարզաբանում. Ստեփանոս Սյունեցի Ա.-ի զատորոշումը

[21] Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա., Վենետիկ, 1784, էջ 780—782:



Մատ. ձեռ. 8503, էջ 234բ

ոչ միայն համանուն երկրորդ եպիսկոպոսից, այլև Ստեփանոս Տարոնեցուց, ում հետ նույնպես շփոթված է եղել։ Միակ դիտողությունը, որ պետք է անել մեծանուն հայագետի վերը բերված խոսքերի կապակցությամբ, թերևս հետևյալն է։ Ինչո՞ւ թաքնված համարել, որ Ստեփանոս Սյունեցի Ա.-ն ևս ժամանակակիցների թե հետնորդների կողմից, անվանված լինի Ասողիկ (այսինքն՝ երգիչ երաժիշտ)։

Հայագիտության մի շարք երևելի մշակներ, սակայն, զարմանալիորեն անտեսեցին Չամչյանի հետևությունները (ամբողջությամբ առած)։ Մասնավորապես ավագ օրհնությունները նրանք վերագրեցին Ստեփանոս Սյունեցի Բ.-ին, առանց հիմնավորելու իրենց տեսակետը, թայց այդ երգաշարքերի ամբողջականության ու խաչի վերոհիշյալ շարականի հեղինակային պատկանելության հարցի շուրջ անելով առանձին շահեկան դիտողություններ, որոնք պետք է հաշվի առնենք։

Տեսանք, որ շարականների հեղինակների վկայակոչված ցուցակներում ավագ օրհնություններին վերաբերող խոսքը տարաձևվում է լոկ յոթ ձայների (կամ երգաշարքերի) վրա։ Մինչդեռ այդ օրհնությունները ներկայացնում են ամ-դկ ութ շարքեր։ Ցուցակների կազմողների կարծիքով՝ «վառ ձայնը» (կամ գկ երգաշարքը) հորինել է Ներսես Շնորհալին որ, ըստ բոլոր տվյալների, պատմական թյուրիմացության արդյունք է։

Դա մատնանշողներից առաջինը եղավ Հ. Գ. Ավետիքյանը։ «Ցորինող ուրագ օրհնութեանցս ասի լինել Ստեփաննոս Սիւնեցի,— գրել է նա,— որ եկաց ի վերջ եօթներորդ դարուն, բաց ի վառ ձայնէն՝ զոր ասեն արարեալ Ներսեսի Շնորհալւոյն... Բայց ընդ այս թերևս տարակոյս արկանիցէ այն, զի ի Մագիստրոսի թուղթս բերի բան երկրորդ տան իններորդ շարականին. «Որ յաթոռս քերովբէականս բազմեցաւ ընդ հօր», թէպէտ նա ոչ իբրև բան շարականի բերէ զայս[22]»։

Շատ ավելի հստակ եզրակացության է հանգել Ավետիքյանը՝ «Սրբութիւն սրբոց» շարականի հեղինակի մասին։ Արդեն ցուցակագիրներից երեքը՝ Առաքել Սյունեցին, Ստեփանոս Ջիք Ջուղայեցին և Հակոբ Լսեցին այս ստեղծագործությունը հատկացրել են Ստեփանոս Ապարանցուն[23], և ճիշտ են վարվել, ինչպես ակնարկեցինք վերևում նաև։ Բանն այն է, որ քննարկվող շարականը նվիրված է ապարանից խաչին։ Միջնադարյան գրչագիր շարակնոցներից մեկում հանդիպում է նույնիսկ՝ «զՍրբութիւն սրբոց՝ Ստեփաննոս եպիսկոպոս, ի պատիւ Ապարանցիցն» ցուցմունքը[24]։ Արդ, ապարանից խաչի պատմությունը վերաբերում է Գր. Նարեկացու և Մոկաց եպիսկոպոս Ստեփանոս Ապարանցու ժամանակներին, որով և ղեկավարվում է Ավետիքյանը։ «Ի կանոնիս դնի,— պարզաբանում է նա, խոսելով խաչի կամ եկեղեցվո դ. օրվա կարգի մասին,— իբրև երկրորդ օրհնութիւն գերապանծ շարականն, Սրբութիւն սրբոց, յորում սկզբնագիրք տանցն կապեն զանունս Ստեփաննոս. և է նա Ստեփաննոս Ապարանցի՝ եպիսկոպոս Մոկաց... առ որ յղեաց Նարեկացին զպատմութիւն ապարանից խաչին և զճառսն[25]»։

Ավագ օրհնությունների ութ շարքերի ամբողջականության մասին վճռական նշանակություն ունե-

[22] Հ. Գ. Ավետիքյան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 872։ Իմանալի է, որ Ավետիքյանը, դարձյալ առաջինը, բարձր գնահատեց քննարկվող շարականների գրական արժեքը. «Կազմութիւն շարականացս յայտնաբարբառ վկայ է մեծի հմտութեան և ճարտարութեան յօրինողին, այլև ջերմեռանդն պարապմանն նորա ի հոգևոր իմաստս» (և այլն, նույն տեղում)։

[23] Հմմտ.՝ (նշվ. հերթակարգով)՝ «Եւ Ստեփաննոս այն Մոկացին, որ զՍրբութիւն ասաց խաչին»։ «ԸզՍրբութիւն սրբոց խաչին՝ մեծ Ստեփաննոսն Ապարանցին»։ «Եւ Մոկացի Ըստեփանոս՝ խաչին սրբութիւնն սրբոց»։

[24] Հ. Հ. Տաշյան, Ցուցակ... էջ 799։

[25] Բացատրութիւն շարականաց, էջ 615։ Սրան համամիտ է Սահակ վրդ. Ամատունին էլ, որ առաջ բերելով խաչի նույն օրվա մի պարականոն հարց (իր սարքով), ենթադրում է, թե դա ևս կարող է գրած լինել Ապարանցին (տե՛ս նրա՝ Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, էջ 128—29։)։ Հավանական է, քանի որ Ապարանցին խաչին նվիրված շարական հորինելով, հազիվ թե բավարարվեր լոկ օրհնությամբ։

ցող դիտողություն արած մյուս հեղինակը Հ. Ղ. Ալիշանն է։ Մի քանի անգամ անդրադառնալով հիշյալ ստեղծագործություններին, և միշտ՝ որպես Ստեփանոս Սյունեցի Բ.-ի վաստակին[28], Հ. Ալիշանը, այդուամենայնիվ, նախ խորամուխ եղավ երգերի գրական խոսքերի գեղարվեստական արժանիքների մեջ, տալով մի բացառիկ գնահատական[27], ապա և հանգեց՝ դրանց ոճական միասնության վերաբերյալ միանգամայն ճիշտ հետևության։ «Ըստ ոմանց և օրհնութիւն վառ ձայնի Ցարութեան,— գրում էր նա, խոսելով Ներսես Շնորհալու հորինած շարականների շուրջ,— որպէս թէ Ստեփանոս Սիւնեցի քերդողն մէկայ եօթն ձայնիցն երգած ըլլայ, և այս մնացած, որ հաւանական չերևիր, մանաւանդ որ ամենուն ոճն ալ համանման է»[28]։

Վերջապես, ավագ օրհնությունների աճ-դկ ութ շարքերի ներքին կառուցվածքի վերաբերյալ դիտողություն է արել Հ. Վ. Հացունին, Ստեփանոս Սյունեցի Բ.-ին (որպես կարծելյալ հեղինակի) ուղղելով մի մեղադրանք, ըստ որի՝ նա՝ հայոց հնագույն Սաղմոսարան-ժամագրքի «ութ կանոններու քով տասն շարական շինելու անտեղությունն» է գործել։ «Օրհնությունները չափով բաժնված էին,— պնդում է Հացունին, ակնարկելով մարգարեական օրհնությունները,— իսկ ինք անոնց թիվն խարխիցավ»[29]։ Նատ մտածեցինք հմուտ ծիսագետի այս խոսքերի վրա, բայց այնպես էլ չկարողացանք արդարացնել դրանք։ Դժվար անհասկանալի է, թե ի՞նչ է ուզում ասել հեղինակը, բարձրացնելով մարգարեական օրհնությունների չափի հարցը։ Այդ օրհնությունները իրարի՞ց, թե՞ սաղմոսներից են բաժանվում տաղաչափական կազմությամբ։ Համեմատելով դրանց գրական խոսքերն իրար ու նաև դավթյան սաղմոսների հետ, դրանք բաժանող տաղաչափական աչքի զարնող յուրահատկությունների չենք հանդիպում։ Եվ Զամչյանն էլ, որ հատուկ գրաղվել է մարգարեական (ու նոր կտակարանի ևս) օրհնություններով, և առանձին գրքով հրատարակել դրանք, տաղաչափական ա-



Մատ. ձեռ. 3503, էջ 226ա

ռանձնահատկությունների խնդիրը դնում է թեական ձևով և անցնում վրայից։ Որովհետև իրոք չափազանց դժվար է այս առումով հստակ բաժանել օրհնությունները սաղմոսներից[30]։

Ինչ վերաբերում է հայոց հնագույն Սաղմոսարան-ժամագրքում ընդգրկված նույն մարգարեական օրհնությունների թվաքանակին, Հացունին ևս քաջ

[28] Տե՛ս օրինակ՝ Ցուշիկք Հայրենեաց Հայոց, հատ. Ա., Վենետիկ, 1820, էջ 252։

[27] Առաւել քան զքսան գրաւորական գործք յիշատակին Ստեփանոսի, շատք մեկնողականք, կարծեմ բոլորին Հին և Նոր կտակարանաց, և թարգմանութիւնք Ս. Հարց, այլ և արտաքին ինչ գրոց, յորոց սակաւ ինչ մասն եհաս կամ ծանուցաւ մեզ։ Բայց՝ ըստ բաղդի, գեր ի վերոյն բնաւից այդոցին՝ սաւառնացեալ բարձրանայ անկորուստ և անկորընչելի յեկեղեցւոջ մերում, անգուգական կանոն Ավագ օրհնութեանցն ի Ցարութիւն Քրիստոսի. որք բաւական էին ոչ նմա միայնոյ ի փառս, եթէ և չէր այլ ինչ մնացեալ յերկոց Նորին, այլ և համօրէն ազգի նորին՝ եթէ ջնջեալ բարձեալ էր բնաւ այլ դպրութիւն սորա» (տե՛ս Սիսական, Վենետիկ, 1893, էջ 128)։

[28] Տե՛ս Շնորհալի և Պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 445։

[29] Հ. Վ. Հացունի, Պատմութիւն Հայոց Աղոթամատույցին, Վենետիկ, 1965, էջ 153։

[30] Հ. Մ. Զամչեան, Նուագարան Օրհնութեանց (Համնմատութեամբ բնագրին Երրայեցւոց և թարգմանութեան զանազան ազգաց։ Եւ յարմարադրութեամբ բանից աւագ օրհնութեանցն շարականի), Վենետիկ, 1801, էջ Գ («Այլ թէ որով զանազանին սաղմոսք և սոսկ օրհնութիւնք՝ որք են արտաքոյ ԾԾ սաղմոսաց, այլևայլ են կարծիք։ Երրայեցիք պատճառս տան, թէ վասն զի սաղմոսք ի տաճարի երգեալ լինէին, իսկ օրհնութիւնք ոչ։ Այլք ասեն՝ թէ սաղմոսք նուագարանօք հանդիսանային, իսկ օրհնութիւնք առանց նուագարանի։ Ոմանք թէ սաղմոսք ի Դաւթայ յօրինեցան, իսկ օրհնութիւնք յայլոց...։ Ոմանք ի չափմունս ոտիցն նային, և ասեն՝ թէ ըստ չափմանց ոտիցն՝ նոքա սաղմոսք կոչեցան, և սոքա օրհնութիւնք։ Բազումք ևս ասեն, թէ որ հաւաքեաց զսաղմոս, միայն ԾԾ եղ ի սաղմոսարանի...։ Կէսք ասեն՝ թէ այս որոշեցաւ ի սովորութենէ. ապա թէ ոչ՝ բազումք օրհնութեանց ամենեին նման են սաղմոսաց, և կարէին դասել ընդ նոսա»)։

գիտե, որ ութ սաղմոսականոնների կցված են եղել տաս օրհնություններ, որովհետև Դ. ու Է. կանոնները ընդունել են երկուական օրհնություն[31]: Այնպես որ, մարգարեական կանոնացված օրհնությունների հարաստությամբ ինքնուրույն նոր ստեղծագործություններ (կցուրդներ, որոնք հետագայում կոչվեցին շարականներ) հորինած բանաստեղծ-երաժիշտը, բնականաբար, տաս տիպի երգեր ստեղծած պիտի լիներ և ճիշտ այդպես էլ արել է[32]: Բայց եթե խոսքն այն մասին է, թե ինչու այդ տաս երգերը իրենց տիպով կրկնվել են ութ շարքերում, ըստ ութ ձայնեղանակների, ապա դա այլ (և, թվում է, ավելի երաժշտական) հարց է[33]:

Առավել մեծ թյուրիմացությունների ու ապարդյուն վեճերի դուռ է բացել՝ կարծեցյալ (V դարի) Ստեփանոս Տարոնեցու վերաբերյալ Շամչյանի եզրահանգումները անտեսումը: Եզրահանգումներ, որոնք մատնանշում էին հարցը Ստեփանոս Սյունեցի Ա.-ի անձի ու գործի մոռացման ու շփոթի հարթության վրա քննելու անհրաժեշտությունը, և անգամ բացահայտում այդ շփոթի աստիճանական խորացման հետևյալ փուլերը. Ստեփանոս (Սյունեցի Ա.), Ստեփանոս Ասողիկ (որն ըստ էության տակավին պակաս է, այլ լոկ՝ սխալանքի առիթ տալու ընդունակ կետ), և, վերջապես, Ստեփանոս Ասողիկ պատմագիր (որով և կարծեցյալ Տարոնեցի): Եթե հաշվի առնված լինեին սրանք, պարզ է, որ խնդիրը երբեք չէր քննարկվի մեկնելով շփոթի խորացման վերջին աստիճանից, ընդունելու կամ մերժելու համար V դարի մի կարծեցյալ Ստեփանոս Տարոնեցու, մինչդեռ հենց այդ ճանապարհով գնացին շատ գիտնականներ:

Դրան առիթ ծառայեց 1888 թ. «Արարատ»-ում Արտազի ու նաև Կեսարիո առաքելական հաջորդության գրչագիր հին ցանկի հրատարակությունը[34], որի (վերջինիս) հեղինակը, այն օգտագործած միջնադարյան գրչի կարծիքով, եղել է՝ «Ստեփանոս Տարոնացի, որ էր աշակերտ սրբոյն Մեսրովպայ»[35]: Գրվածքիս վրա ուշադրություն դարձրեց Հ. Գ. Զարպհանալյանը և Սահակ Մեսրոպյան առաջին աշակերտների թվին դասեց V դարի մի Ստեփանոս Տարոնեցի[36]: Սրանով հետաքրքրվեց Նորայր Բյուզանդացին և այն կապեց՝ Սեբեոսի անունով հայտնի Պատմության երրորդ գլխի խորագրում հանդիպող Ստեփանոս Տարոնեցի անվան հիշատակության հարցի հետ[37], որն առանց այդ էլ հրապարակի վրա էր արդեն[38]: Ստ. Մալխասյանցը ավելի ամբողջական մտահղացք ստեղծեց քննարկվող խնդրի շուրջ[39], որին թեթևակի առարկեց Գալուստ Տեր Մկրտչյանը[40]. և այսպես՝ միշտ անտեսելով Ստեփանոս Սյունեցի Ա.-ի ու V դարի կարծեցյալ Ստեփանոս Տարոնեցու առնչակցությունը[41]: Ուստի զարմանք չէ, որ

[31] Այսպես՝ Ա. Օրհնեցուք զտէր, զի փառաւորեալ [Մովսէսի], Բ. Նայեցարուք երկինք և խօսեցայց [Մովսէսի], Գ. Զի հուր բորբոքեցաւ [Մովսէսի], Ծաներուք և տեսէք [Նորին Մովսէսի], Դ. Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր [Անննայի մօրն Սամուէլի], Ե.-ի գիշերաց կանխէ հոգի իմ [Եսայեայ], Զ. Ես ասացի ի վերանալ յինէն [Եզեկիայ], Է. Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն նոր [Եսայեայ մարգարէի], Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի [Յովնանու մարգարէի], Ը. Տէր զլուր քո լուայ և երկեայ [Ամբակումայ մարգարէի]: Ըստ որում իմանալի է նաև, որ Բ. և Գ. կանոնների երեք օրհնությունները՝ փաստորեն Մովսեսի մինևնույն ձավալուն օրհնության («Նայեցարուք»-ի մասերն են:

[32] Դա շատ պարզ երևում է նույնիսկ արդի ձայնագրեալ շարականոցից, ուր ավագ օրհնությունները (ի տարբերություն մնացած բոլոր շարականների), որպես երգի տիպ կամ տեսակ ցուցանող լուսանցանշումներ ունեն վերոբերյալ մարգարեական օրհնությունների սկզբնաբառերի կրճատումները (համապատասխանաբար) հետևյալ կերպ. «Աւրհ.», «Նայ.», «Զի հ.», «Ծան.», «Հաս.», «Գիշ.», «Ես ա.», «Օրհ.», «Ի նեղ.», «Տէր լ.», (տե՛ս Ձայնագրեալ Շարական, Վաղարշապատ, 1875, էջ 1021—1071):

[33] Ավագ օրհնությունները Ստեփանոս Սյունեցի Բ.-ին վերագրող ուրիշ հեղինակներ ևս կան, որոնց մի մասը դարձյալ՝ պարզապես իր կարծիքն է հայտնել այդ մասին: Տե՛ս, օրինակ, Սահակ վրդ. Ամատունի, Հին և Նոր պարականոն կամ անվավեր շարականներ, էջ 80—81: Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա., մասն Բ., Բեյրութ, 1959, էջ 884—86: Ուրիշ հեղինակներ, փորձելով հիմնավորել իրենց պնդումը, վկայակոչում են պատմիչ Օրբելյանի խոսքերը, չհասկանալով, սակայն, որ դրանք փաստորեն բոլորովին այլ բան են հուշում: Հմմտ.՝ Եղ. վրդ. Խաչերյան, Ստեփանոս Սյունեցի, «Տաճար», Կ. Պոլիս, 1910, էջ 548;

[34] [Վահրամ եպս. Մանկունի], Անընդհատ շարունակութիւն առաքելական յաջորդութեան ուղղափառ ս. եկեղեցւոյ Հայաստանեայց, «Արարատ», 1888, էջ 27, 39, 56, 86 և 102:

[35] Նույն տեղում, էջ 104 (թեև հրատարակիչը փորձել էր մեկնաբանել սա, ցանկը համարելով «Սիւնեաց եպիսկոպոս Ստեփանոս Տարօնեցիէն կամ Սիւնեցիէն հեղինակուած և կամ թարգմանուած», նույն տեղում, էջ 41:

[36] Հ. Գ. Զարպհանալյան, Պատմութիւն հայ հին դպրութեան, Վենետիկ, (դ. տպագր.), 1932, էջ 294:

[37] Ն. Բյուզանդացի, Իմ կարծիք զկրկին հայ թարգմանութեանց եկեղեցական պատմութեան, «Հանդէս ամսօրեայ», 1889, էջ 278:

[38] Թ. Միհրդատյան, Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Կ. Պոլիս, 1861, էջ ԺԲ—ԺԵ:

[39] Ստ. Մալխասյանց, Սեբեոսի Պատմությունը և Մ. Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 53—80:

[40] Գ. Տեր-Մկրտչյան, Հայկականք, Վաղարշապատ, 1899, էջ 74—75:

[41] Կարծեցյալ Ստեփանոս Տարոնեցուն վերջերս մերժեց Գևորգ Աբգարյանը ևս, բավական մանրամասն քննելով հարցը Սեբեոս-Ասողիկ հարաբերությունների պարզաբանման շրջանակներում, բայց դարձյալ՝ առանց հարուցելու Ստեփանոս Սյունեցի Ա.-ի խնդիրը: Տե՛ս Գ. Աբգարյան, «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1985, էջ 53—71;

Աճառյանն էլ, վկայակոչելով նաև Հ. Տաշյանի ցուցակի մի քանի էջերը[42], արձանագրեց թե՛ կարծեցյալ Ստեփանոս Տարոնեցու, և թե՛ Ստեփանոս Սյունեցի Ա.-ի մասին առկա տվյալները[43]:

Շամչյանից հետո մեզ զբաղեցնող խնդիրների լուրջ հետազոտությամբ հանդես եկավ Մ. Աբեղյանը: Ճիշտ է, նրանից շատ առաջ, տակավին Հայկազյան բառգրքի հեղինակներն հստակ շարադրեցին իրենց միանգամայն ուշագրավ համոզումը, որն հիմնված էր բազմազան գրչագրերի ծանոթության վրա[44], և սակայն հարցն հատուկ ուսումնասիրելով տեղիք շարժողը Աբեղյանը եղավ[45]:

Նախ ասենք, որ Աբեղյանը կանգ առնելով Սեբեոսի ու նրա պատմության հետ առնչվող հարցերի վրա, ընդունելի է համարում Մալխասյանցի տեսակետները (վկայակոչում է պատմության՝ վերջինիս աշխատությամբ իրագործված դ. տպագրությունը), ու մասնավորապես այն, թե երրորդ դպրության խորագրում հիշատակված Ստեփանոս Տարոնեցին XI դարի պատմագիրը չէ, այլ «մի հին հեղինակ»[46]:

Ստեփանոս Սյունեցի Ա.-ի մասին ուղղակի խոսք չունի Աբեղյանը: Բայց քննելով VIII դարի սյունյաց համանուն եպիսկոպոսի երաժշտա-բարեհորդչական գործունեությունը, գրականության պատմաբանը նրան անվանում է «Ստեփանոս Սյունեցի (երկրորդը)»[47], որով ինքնըստինքյան հաստատվում է առաջինի ևս գոյությունը: Արդ՝ համաձայն Աբեղյանի համոզիչ նշումների, որոնք բխում են պատմության գիտնական եպիսկոպոսի երաժշտական գործունեության մասին պատմիչ Օրբելյանի խոսքերի վերլուծությունից[48], Ստեփանոս Սյունեցի Բ.-ը հայ հոգևոր արվեստում արմատավորելով եկեղեցական միևնույն տոնին վերաբերող 8—9 ինքնուրույն երգերից բաղկացած կանոնի նոր ժանրը, սաղմոսների, մարգարեական օրհնությունների և ավետարանական պատումների հարատությամբ հորինված «կցուրդ» տիպի հին ազատ ստեղծագործությունները կանոնացնելով, շարում, կարգում է դրանք, որպես տարբեր կանոնների բաղկացուցիչներ (այսինքն՝ որպես օրհնություններ, հարցեր-գործքեր, մեծացուսցեներ, ողորմյաներ, տերերկնիցներ, մանկունքներ, ճաշուներ և համբարձիներ):

Եվ որովհետև հիշյալ բաղկացուցիչներից առաջինն ու կարևորագույններից մեկը[49] օրհնությունն է, այդ

---

[42] Հ. Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 80 ու 84 (Հայսմավուրք) և 344 (Հավաքումն քերականության) ու 479 (Ժողովածու):

[43] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ., էջ 601—602:

[44] «Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս՝ ոչ մի,— գրում էին նրանք,— այլ բազում ի զանազան դարս. և գործ նոցա խառն ընդ իրերաց. այլ ոճ և ոճ տարբեր յոյժ յիրերաց՝ մատամբ ցուցանեն զհնութիւն և զյետնութիւն միոյ միոյ ի նոցանէ. զոր օրինակ՝ առաջնոյն, որ մի էր յաշակերտաց սրբոց թարգմանչաց, անկ են գերապանծ շարականք աւագ օրհնութեանց: Միջնոյն՝ որ էր ի Է դարու, յայտնի են թարգմանութիւնք քանի մի գրոց... Սմա ընծայէ և Ուղեղեանն զշարականսն: Կան և տաղք պէսպէս, է որ վսեմ ոճով, և է որ միջակ կամ ստորին՝ առաջնոյն կամ միջնոյն ի դէպ եկեալք» (տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. Ա., էջ 19): Այստեղ հիշատակվող տաղերին, այլև Օրբելյանի խոսքերին (Սյունեցու մասին) կանդրադառնանք իր տեղում: Իսկ այժմ նշենք, որ մեջբերման մնացած մասն ուշագրավ է այն առումով ևս, որ ցույց է տալիս, թե բառգրքի հեղինակներից, մասնավորապես, Գ. Ավետիքյանը, «Բացատրութիւն շարականաց» աշխատության հրատարակությունից հետո, հիմնովին վերանայել էր իր կարծիքը քննարկվող խնդրի շուրջ:

[45] Ստորև Աբեղյանի աշխատություններից վկայակոչելու ենք, հիմնականում, «Հայոց հին գրականության պատմության» Ա. հատորը, միշտ ի մտի ունենալով, սակայն, «Արարատ» ամսագրում 1912 թ. նրա հրատարակած «Շարականների մասին» մեծ հոդվածաշարքը ևս (որի ամփոփումն է ներկայացնում հիշյալ հատորի՝ «Հոգևոր երգ. սկիզբն ու զարգացումը» բաժինը):

[46] Մ. Աբեղյան, Երկեր, Գ. հատ. (Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա.), Երևան, 1968, էջ 430:

[47] Նույն տեղում, էջ 587:

[48] Խոսքեր, որոնք անցյալում կամ անուշադիր ընթերցված, և կամ էլ ուղղակի սխալ են հասկացված եղել: Կարծվել է, թե Օրբելյանը ավագ օրհնությունները հատկացնում է Ստեփանոս Սյունեցի Բ.-ին, մինչդեռ վերջինս, պատմիչն ասելով, հանդես է գալիս որպես այդ օրհնությունների վերակարգավորողը: Հմմտ.՝ «Արար և ճաոս բազումս. բաժանեաց և զութն ձայնսն և կարգեաց, շարեաց զնարութեան օրհնութիւնսն» (տե՛ս Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբէլեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթութեամբք Կարապետ վրդ. Շահնազարեանց):

[49] Սույն ոլորը (իսկ հարցերին կից գործքերն էլ հաշվելով՝ ինը) երգերից միայն օրհնությունը (Մովսիսյան առաջին օրհնության կցուրդ-շարականը) վերաբերում է գիշերային (խոր անցյալում՝ կես գիշերին հանդիպած) ժամի նշանակալի պաշտոներգությանը, որը (ամբողջությամբ առած) երբեմն վերապահված է եղել կիրակի և տոն օրերի համար: Ժամերգության զարգացմամբ, որևէ տոնի հատուկ նվիրված մեկ օրհնության կատարումը անբավարար նկատվելով (սկզբնապես գուցե նաև հետևած լինելու համար հենց հարության ավագ օրհնությունների ութ շարքերից յուրաքանչյուրում ամփոփված երգերի տաս թվին), դրան՝ նույն օրվա խորհրդի հետ այս կամ այն չափով ու ձևով առնչվող ուրիշ օրհնություններ էլ են ավելացրել, որով, ի վերջո, գոյացել է օրհնություններ «քաղելու» ուշ միջնադարյան ավանդույթն ու «քաղվածք օրհնութեանց» կոչվող ցանկերը կազմելու սովորույթը:

Հարցը, գործքի հետ միասին (աստվածաշնչային երից մանկանց օրհնության երկու մասերի կցուրդ-

գործը Այուեցին սկսում է մարգարեական օրհնությունների հարաստությամբ վաղուց արդեն ստեղծված «կցուրդների» վերադասավորումից, ընդ ամին իրագործելով նաև ութ-ձայնի նոր (հոգևոր ինքնուրույն երգերին վերաբերող) կարգավորումը: Այսպիսով նախ գոյանում են ավագ օրհնությունների սահ-դդ հայտնի ութ շարքերը (ընդհանուր առմամբ երեք-երեք տնից՝ տասական երգերով): Թե ամբողջական ինչպիսի շենք են ներկայացրել սույն 80 երգերը VIII դարում իրագործված վերադասավորությունից առաջ, դժվար է ասել: Մանրամասն քննելով, սակայն, այդ երգերի գրական խոսքերը, Արեղյանը ցույց է տալիս, որ դրանք կազմությամբ համատիպ լինելով հնագույն Սաղմոսարան-Ժամագրքում ընդգրկված ու մինչև մեր օրերը հասած մաղթանքներին (որոնք նմանապես մարգարեական տվյալ օրհնության այս կամ այն մասի հարաստություններն են), նույնորեն՝ սկզբնապես երգվել են մարգարեական ոսմապատասխան օրհնություններից հետո, որպես դրանց «կցուրդները»[50]:

Անհրաժեշտ է հավաստել. ավագ օրհնությունները գոյացնող կցուրդների երաժշտական բաղկացուցչի քննությունը ևս բերում է համոզման, որ դրանք ստեղծվել են հայ հոգևոր երգարվեստի VII—VIII դարերին վերաբերող երկրորդ ճաղկումից շատ առաջ, մասնավորապես V հարյուրամյակի երկրորդ

շարականները), մեծացուցեն (աստվածածնի երգի կցուրդ-շարականը), ողորմեան (Ծ սաղմոսի կցուրդ-շարականը), տեր երկնիցը (ՇԽԸ սաղմոսի կցուրդը) և մանկունքը (ՇԺԲ սաղմոսի կցուրդը) առավոտյան ժամի երգերից են և ուրույն շարք, կարգ կամ սարք են կազմում, գլխավոր ունենալով հարցը: Այստեղից է՝ մի հարց «իր սարքն» ասել արտահայտությունը, այլև հարցերի ընդհանուր թվաքանակը ճշտելու ձգտումը՝ «Վասն Թուոց շարականացն և նոցին հարցից՝ ըստ ձայնից» կամ նման ցանկերի կազմումով: Սույն կարգից մեծացուսցեները վաղ միջնադարում լոկ կիրակի ու տոն օրերին են երգվել, և հետո միայն, մյուսների նման դարձել հանապազօրյա ու նշվել առանձին ցանկերով (Ցանկ Մեծացուսցէ-ից»):

Վերջապես՝ ճաշուն (հավուր պատշաճի այլնայլ սաղմոսների կցուրդ-շարականը) վերաբերում է ճաշի ժամի կամ կեսօրվան երգեցողության, իսկ համբարձին (ՄԻ սաղմոսի կցուրդը), երեկոյան ժամերգության:

Վերոհիշյալ, այլև միջնադարից հկող զանազան ուրիշ ցանկեր տե՛ս, օրինակ, Շարական հոգևոր երգոց..., Կ. Պոլիս, 1858, էջ 852—899:

[50] Տե՛ս Մ. Արեղյան, Շարականների մասին, «Արարատ», 1912, № 8, էջ 823—836 (ուր կարելի է գտնել ավագ օրհնությունների գրական խոսքերի մասնագիտական մանրամասն ուսումնասիրությունը, և ուր առաջ բերված փաստերից ու դատողություններից հնացած պետք է համարել միայն ծիսագիտական հարցերի հետ առընչվողները):

կեսին: Շատ պարզ է այդ ստեղծագործությունների յուդային հիմքը: Բոլոր 80 երգերի մեջ չկա մեկը, որ ներկայացնի բազմաձայն-ստեղի, կամ զարտուղի, և կամ մոդուլյացիայի միջոցով բարդացված նմուշ: Դարձվածք տիպի ձայնեղանակներից (որոնք, ի դեպ, մինչև VIII դարը քավական բարգավաճած լինելով, ընդգրկվել են ութ-ձայնի նոր համակարգում, ուի հարկին, երևացել՝ առանց հատուկ նշման) հանդիպում են ակ և գձ դարձվածքները (որպես ամբողջապես դարձվածք կտորներ): Անպաճույճ է նաև մեղեդիների ելևէջային կողմը: Երգերի ընթացքն է (բացառապես) միջակ կաս չափավոր (և ոչ մի ծանր կտոր): Խոսքի մեկ վանկի հետ հաճախ է զուգորդվում չափական միավորի արժեքով մեկ ձայն: Հյուսվածքի առումով ավելի արտահայտիչ հատվածներում նկատվում է չափական միավորի դիսում (այսինքն՝ կշռույթի կոտորակում) և երկար վանկերի փոքր-ինչ անկաշկանդ կիրառում: Իսկ ութի ու եռաձշտության նման կապերի պայմաններում էլ տակայն (և սա՝ է կարևորը), լրիվ ապահովվում է ստեղծագործությունների ընդհանուր երգային, իր ժամանակի համար նոր ոճը: Եղանակները ծավալվում համեմատաբար փոքր են և յուրաքանչյուրը զարգանում է երաժշտական մեկ թեմայի հիման վրա, սակայն բովանդակալից են՝ ձայների փոխհարաբերությունների առումով: Դրանք (եղանակները) տարբերվում են նաև իրենց «դիմող ձայներին» վերապահված աչքառու դերով[51]:

Հատկանշական է, որ ինչպես նշված գլխավոր կողմերով, այնպես և բուն մեղեդիական կերպարների գծով ավագ օրհնությանց մեջ մտած երգերը շրջման ընդհանուր եզրեր ունեն սահակ-մեսրոպյան շարականների՝ հետսամուտ փոփոխություններից զերծ մնացած մասի հետ: Այսպես, ստորև մեր առաջ բերած ութձայն նմուշներից առ կտորը, օրինակ, որոշակի կապերի մեջ է սահակյան շարականներից՝ Ղազարի հարության կանոնի օրհնության երկրորդ

---

[51] Գձ և Դձ շարքերում «դիմող ձայներով» են ավարտվում նույնիսկ ամբողջական երգերը, բացի տասերորդ կտորներից, որոնց հանգաձևերում հատատվում են «վերջավորող ձայները»: Իսկ ակ և բձ շարքերում յուրաքանչյուր երգի առաջին ու երկրորդ տներն են ավարտվում «դիմող ձայնով»: Այս հնարանքի շնորհիվ (հնարանք, որը հետագա դարերի ստեղծագործություններում կիրառվել է լոկ դեպքից դեպք), կարևորվում է ոչ միայն «դիմող ձայնը», այլ «վերջավորողը» ևս, հատկապես հաստատվելով երկար նախապատրաստումից հետո:

Քննարկվող երգերի գեղարվեստական արժանիքների մասին այն միայն ասենք, որ դրանք մինչև օրս էլ պահել են իրենց ներգործության ողջ ուժը: Այլ հարց է, որ միապաղաղ շնչով և բարձրաթռիչ քնարականությամբ աչքի ընկնող դրանց գողտրիկ եղանակները գուցե որոշ չափով զիջում են գրական գեղեցիկ ու իմաստալից խոսքերին (հմմտ.՝ Զայնագրեալ Շարական, էջ 1021—71):

պատկերի («Կենդանությանց բաշխող» երգի) հետ[52], դձ կտորը՝ նույն օրհնության երրորդ պատկերի հետ («Ցաստուածային ձայնէ»)[53]. գկ կտորը՝ մաշտոցյան «Անկանիս առաջի քո» շարականի հետ[54]. դձ կտորը՝ դարձյալ մաշտոցյան «Մաքսաւորն հառաչանօք» երգի հետ (մինչև «դարձը»[55]) և այլն:

Ամբողջությամբ առած, սակայն, ավագ օրհնությունները զգալի տարբերվում են դարերի ազդեցությանը ենթարկված սահակ-մեսրոպյան շարականներից այնու, որ իրենց գլխավոր գծերի մեջ մեզ հասել են ճախնական մակարդակով: Իրոք, ավագ օրհնությունների 80 երգերի մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ դրանց ամբողջությունը հայկական շարականների ոնգույն շերտերը գոյացնող այն նշակի նյութերից է, որոնց վրա ժամանակը ներգործել է նվազագույն չափով: Հետագա հարյուրամյակներին հատուկ որոշ պտույտներ ներթափանցել են, ասենք՝ դձ շարքի առաջին երգում. գուցե նաև գկ շարքի առաջին կտորում, բայց ավելի հաստատ ու որոշակի՝ գկ տաս երգերից առաջին երեքի ու չորրորդ կտորի «դարձի» մեջ, ուր պարզ նկատելի են մասնավորապես Ներսես Շնորհալու գկ շարականներից ու պատարագի երգերից եկող մելոդիական բնորոշ դարձվածքներ[56]: Սրանք այնքան անհնչան կետեր են՝ նույն սահակ-մեսրոպյան երգերի վրա միջին դարերում բարդված շերտավորումների համեմատությամբ, որ նույնիսկ այդ (պատմականորեն ավելի վաղ ստեղծված) երգերի եղանակների ճախնականության որոշման կապակցությամբ ծագող տարբեր կասկածներ լուծվում են՝ ավագ օրհնությունների մեղեդիական նյութին ծանոթանալու միջոցով[57]:

[52] Հմմտ.՝ Զայնագրեալ Շարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 374 (տե՛ս հատկապես երգի երրորդ տունը):

[53] Նույն տեղում, էջ 375:

[54] Տե՛ս մեր հոդվածը՝ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բաներեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 199:

[55] Նույն տեղում, էջ 200:

[56] Հատկապես՝ աղուանցից երրորդ կիրակիի կանոնի օրհնության պատկերից («Լույս ի լուսոյ») և պատարագի «Բարեխօսութեամբ» համարից: Հմմտ՝ Զայնագրեալ Շարական, էջ 230, 1058—55 ու 1057. և Զայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 54—55: Մեր հոդվածում, Շնորհալու ստեղծագործություններից եկող սույն ակնհայտ ազդեցությունն է, որ, ի վերջո, տեղի է տվել ավագ օրհնությունների գկ շարքը մեծ հրաժիշտ-բանաստեղծին վերագրելու:

[57] Այսպես, հատուկ կանգ առնելով մաշտոցյան շարականներից՝ «սղորմեա»-ների վրա, ժամանակին կասկած էինք հայտնել ամբողջապես դարձվածք ձայնեղանակում ընթացող ապաշխարության ակ շարքի վերաբերությամբ. նկատելով, որ շարքիս բոլոր ոլորմյաները կարծես կաղապարված են մեկ երգի՝ «Ծով կենցաղոյս» կտորի եղանակով (տե՛ս մեր հոդվածը՝ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բաներեր Մատենադարանի», № 7, էջ 198): Այժմ, ակ դարձվածք եղանակի ինքնույն ձևերը գտնելով ավագ օրհնություններում, և դրանց մեջ հանդիպելով նույնիսկ «Ծով կենցաղոյս» կտորի մեղեդիի մի նմանակին (հմմտ. ակ շարքի 8-րդ երգը, Զայնագրեալ Շարական, էջ 1032), կարող ենք հաստատել, որ ապաշխարության ակ «սղորմեա»-ները ևս (դրանց եղանակները) միանգամայն հնավանդ նմուշներ են:

[58] Տե՛ս մեր հոդվածը Հանդիսավոր օրերի կանոնագրությունները, «Էջմիածին», 1971, ժ:

[59] Ն. Աբեղյանը իրավացիորեն նշում էր, թե այն, որ Ստեփանոս Սյունեցին «ամենից առաջ Հարության օրհնություններ իրենց սարքով պիտի կարգեր, այդ հասկանալի է այն պատճառով, որ Հարության կարգը անհրաժեշտ էր ոչ միայն «Ցինանց» համար, այլև սովորական կիրակի օրերի համար: Դա ամենօրյա (իմա՝ մի ամբողջ շաբաթի—Ն. Թ.) ժամերգության մեջ բռնում էր ամենից կարևոր տեղը» (տե՛ս նրա Երկեր, Գ., Երևան, 1968, էջ 540):

[60] Հոգևոր ինքնուրույն երգերը կանոնացնելով դրանց կատարումը կարգավորելու ձգտումը VII—VIII դարերում համակել էր ժամանակի գրեթե բոլոր

Կասկածից դուրս է, որեմն, ավագ օրհնություններն ստեղծողի ոճն, և հատկապես V դարի հեղինակ լինելը: Իսկ այն հարցին, թե ով է նա՝ այդ ոճն հեղինակը, մենք կպատասխանենք այսպես (հաշվի առնելով ոչ ճախնությունը). ամենայն հավանականությամբ՝ սահակ-մեսրոպյան կրտսեր աշակերտներից մեկը, Սյունիքի Ստեփանոս անունով առաջին եպիսկոպոսը, որը նաև բանաստեղծ-երաժիշտ-երգիչ լինելով, թերևս «սաղմիկ» էլ է կոչվել, ու հետագայում շփոթվել է, մի կողմից՝ VIII դարի Ստեփանոս Սյունեցու (Բ.-ի), մյուս կողմից՝ Ստեփանոս Ասողիկ պատմչի հետ: Նկատելով, որ հայկական հոգևոր ինքնուրույն երգերը («կցուրդները») V—VIII դարերում ստեղծվել են՝ ընդհանրապես առած՝ կիրակի և տոն օրերի համար[58], կարող ենք ավելացնել նաև, թե ավագ օրհնությունների մեջ մտնող 80 երգերը Ստեփանոս Սյունեցի Ա.-ը հորինել է՝ Զատկին և առհասարակ բոլոր կիրակիներին (այսինքն՝ հարությունը խորհրդանշող օրերին) կատարելու դիտավորությամբ:

Զևոք զարկելով այդ ստեղծագործություններին, Ստեփանոս Սյունեցի երկրորդը հատուկ դասավորել է դրանք՝ ա) կիրակնօրյա կցուրդները կանոնացնելու, բ) հինգ ժամանակամիջոցի երգեցողությունները կարգավորելու, գ) առհասարակ կանոնի ժամերը ներմուծելու, և դ) ութ-ձայնի նոր (հոգևոր ինքնուրույն երգերին վերաբերող) համակարգը օրինակացնելու նպատակներով:

Կիրակիներին կատարվող կցուրդների մեջ առաջին տեղերից մեկը գրավել են մարգարեական տաս օրհնությունների հարությամբ ստեղծված երգերը, այնպես որ դրանք դարձան կիրակնօրյա օրհնություններ կանոնացնելու ձգտումը ավելի քան բնական է[59], մանավանդ VIII դարի պայմաններում[60]:

վեստը, «Բաներեր Մատենադարանի», № 7, էջ 198): Այժմ, ակ դարձվածք եղանակի ինքնույն ձևերը գտնելով ավագ օրհնություններում, և դրանց մեջ հանդիպելով նույնիսկ «Ծով կենցաղոյս» կտորի մեղեդիի մի նմանակին (հմմտ. ակ շարքի 8-րդ երգը, Զայնագրեալ Շարական, էջ 1032), կարող ենք հաստատել, որ ապաշխարության ակ «սղորմեա»-ները ևս (դրանց եղանակները) միանգամայն հնավանդ նմուշներ են:

Հիշյալ երգերն հնչեցնելու հատուկ ժամանակը, սակայն, Զատիկն է եղել ու հինգշաբաթ միջոցը[61], որով Սյունեցին էլ դրանք կարգել է, առաջին հերթին, իրեն հարության աւ-դկ ութ երգաշարքերի[62] օրհնություններ[63]։ Այդ շարքերից ամեն մեկը բաղկացած է երգերի 3—7 առանձին խմբերից, սրանցից յուրաքանչյուրը՝ «հարց (գործ)+մեծացուցէ+ողորմեա+տէր յերկնից» (իսկ շարքի վերջում՝ նաև «ճաշու») տիպի կտորներով, որոնց նախակցելով համապատասխան ավագ օրհնությունը, լրացնում է օրվա կարգը կամ կանոնը։ Սա արդեն իսկ բավական է ընդունելու համար, որ հայ իրականության մեջ կանոնի ժանրի ներմուծողն իրոք եղել է Ստեփանոս Սյունեցի Բ.-ը։ Սակայն հիմքեր կան նաև ենթադրելու, թե նա որպես տարբեր կանոնների մասեր կարգել, շարել է իրեն ծանոթ մյուս գրեթե բոլոր հին երգերը (կամ «կցուրդները») ևս[64]։

Վերջապես, ավագ օրհնությունների եղանակները Սյունեցու կողմից հատուկ դասավորված ձևով ներկայացրել են նաև ութ ձայնի նոր համակարգը[65]։

եկեղեցիների երաժիշտ գործիչներին, որոնցից շատերը աշխատանքներն սկսում էին կիրակնօրյա երգեցողության կարգավորումից։ Հատկանշական է, որ նետտորական եկեղեցու հայրերը, տարվա բոլոր կիրակիների երգեցողությունները կարգավորելով, դրանք նույնիսկ ամփոփել են «Hudrā» կոչված ծիսական առանձին մատյանի մեջ (տե՛ս The Book of Governors, by Thomas bishop of Margā, vol. I ed. by E. A. Wallis Budge, London, 1893, էջ X։

[61] Զատկից մինչև Հոգեգալուստն ընկած 50 օրերը, որպես եկեղեցական տարվա նախորդ (ու դարձյալ շուրջ 50 օր տևող) պահոց շրջանի մի տեսակ հակակշիռ ժամանակահատվածը։

[62] Սրանց բաղկացուցիչներն ևս, սկզբնապես մինչև VIII դարի առաջին քառորդը հորինված կցուրդներ են, որոնք Սյունեցին շարել է որպես հարցեր (իրենց սարքով) և ստեղծել՝ ձնական հատկանիշներով ճիշտ ապաշխարության շարականների կարգերն հիշեցնող ութ խոշոր միավորներ։ Դրանք են՝ «Որ եկիր ի փրկութիւն տիեզերաց թագաւոր» (աձ), «Որ եկիր ի փրկութիւն վասն ազգի մարդկան» (ակ), «Որ ի յերկնից իջեր» (ըձ), «Որ յերկնային զինուորութեանցդ» (բկ), «Փառաւորեմք ըզքեզ տէր» (գձ), «Անճառելի բնութիւն» (գկ), «Որ եկիր կամաւ հօր» (դձ) և «Որ զամենազօր զօրութիւնդ» (դկ)։ Սույն շարքերի մեջ մտնող երգերի մի մասի հատկապես երաժշտական բաղկացուցիչը ենթարկված է դարերի զգալի ազդեցությանը։ Բացի այդ, ժամանակի ընթացքում սրանց ընդելուզվել են նոր միավորներ էլ. Գրիգոր Վկայասերի (Շնորհալու եղբոր) «Մեծարիաշ այս խորհուրդ»-ը (երկրորդ Մաղկազարդի կանոնը), Ներսես Լամբրոնացու «Այսօր յարեաւ»-ը (Զատիկի կանոնը), «Նորոգեալ կղզիք»-ը (Նոր կիրակիի կանոնն) ու «Համբարձաւ տէրն մեր»-ը (Համբարձման կանոնը), ինչպես և հեղինակային պատկանելության առումով տակավին պարզելի՝ Աշխարհամատրաց կիրակիի կանոնն («Երկրպագեմք քեզ Քրիստոս») ու Հովհաննու Մկրտչի գլխատման հիշատակին նվիրված հարցը (սարքով՝ «Նախայաւիտեան բանին պատմող»)։

[63] Դա երևում է հայոց Տոնացույցի ցուցմունքներից էլ։ Տե՛ս Տօնացոյց (Նախապես կարգեալ և սամանեալ սրբոյն Սահակայ...), Էջմիածին, 1887, էջ 67—110։ Դիտելի է, որ այստեղ մերթ համապատասխան ավագ օրհնությունը ընդգծումով հիշատակվում է նույնիսկ այն դեպքում, երբ դրան նախորդում է մի նոր, ամբողջական միավոր։ Այսպես, Նոր կիրակիի կապակցությամբ նշված է «Նորոգեալ կղզիք»-ը և ավելացված է. «զաւագ օրհնութիւնն զհետ ասա» (էջ 78)։

[64] Մ. Աբեղյանը գրում է. «Ստեփանոս Սյունեցին մտցնելով կանոնը, կարող էր ուրիշ կանոնների շարականներ ևս կարգել. բայց այդ չգիտենք» (Երկեր, Գ., էջ 540)։

Ղ. Զահկեցին հետևյալ տեղեկությունն է թողել Ստ. Սյունեցի Բ.-ի մասին. «Երգեաց զերգս շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով՝ զԾննդեանն Քրիստոսի և զՄկրտութեան, և Եկաւորութեանն ի Բեթանիա և յԵրուսաղէմ, և զՄեծի շաբաթու չարչարանացն, և զՑարութեանն, և զՀամբարձմանն, և զՀոգւոյն սրբոյ գալստեանն, և զԵկեղեցւոյ, և զաւագ օրհնութեանն երգս... և այլ տօնից տէրունականաց և սրբոց բազմաց, զոր մինչև ցայսօր պաշտի յԵկեղեցի Հայաստանեայց» (Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, էջ 825)։

Այստեղ Զահկեցին թվարկում է համարյա այն բոլոր ստեղծագործությունները, որոնք ժամանակին հիշատակել է Կիրակոս Գանձակեցին, խոսելով Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և նրանց ավագ ու կրտսեր աշակերտների երաժշտա-բանաստեղծակուս հեղինակությունների մասին։

Աբեղյանի կատարած պրպտումների լույսի տակ քննելով Զահկեցու մեջբերված խոսքերը, Մ. Ե. Վ. Գրիգորյանը հանգել է բնական ու տրամաբանական մի եզրակացության, գրելով. «Անշուշտ սխալ է Ստ. Սյունեցին հեղինակ համարել հիշյալ շարականներուն. բայց սխալ չլլար, Մ. Աբեղյանի ենթադրությունը կհիմնավորվի և Ղ. Զահկեցիի վկայությունը կարբագրվի՝ եթե ընդունինք, որ Սյունեցին ոչ թե գրեր, այլ «կարգեր, շարեր է», կանոնի վերաձեր՝ Քրիստոսի Ծննդյան, Մկրտության, Բեթանիա և Երուսաղեմ գալստյան, Չարչարանաց, Հարության, Համբարձման, Հոգեգալստյան, Եկեղեցվո, և այլ տերունի տոներու և սուրբերու շարականները» (Ստեփանոս Սյունեցի, Բեյրութ, 1958, էջ 43—44)։ Մենք բաժանում ենք այս կարծիքը։

[65] Նաև սրանով է բացատրվում, կարծեմ, Հարության օրհնությունների հատուկ տեղը հայ Շարակնոցում. ո՛չ թե հինգշաբաթի երգերի կարգում, վերոհիշյալ ութ երգաշարքերին նախադասված, այլ առանձին համախմբված ու տեղադրված՝ մատյանի ամենավերջում (չհաշվելով «Արնելք գերարվին»), «Մարտիրոսաց» ու «Ննջեցելոց» կանոններից հետո։

Հանդիսադրելով կանոնի ժանրի հետ միասին տարածվող և ծեսի ու արարողության մեջ ավելի ու ավելի արմատավորվող հոգևոր ինքնուրույն ստեղծագործությունների նորոգաձև (սկզբունքորեն երգային բնույթի) երաժշտության մեղեդիական տիպարները, այդ համակարգը շուտով բռնել է հայոց հնամենի սաղմոսարան-ժամագրքի ութ կանոն սաղմոսերգություններին կապված չափանմուշ եղանակների միակցության տեղը[66]: Միաժամանակ հետագա զարգացումն են ստացել անցյալից եկող երաժշտատեսական ավանդույթները: Մեղեդիական տիպարները զանազանելիս հաշվի են առել արդեն ոչ միայն եղանակն սկսելու, ծավալելու և ավարտելու կայունացած բանաձևերը[67], այլև «դիմող» ու «վերջավորող» ձայների այլազան հարաբերությունները[68]:

Ամեն ինչից երևում է, որ սա հնուց եկող ավանդույթ է: Նույնիսկ XII դարից մեզ հասած գրչագիր հնագույն շարակնոցում քննարկվող օրհնությունները գաղափարված են «Մարտիրոսաց» կարգից հետո (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 9838, էջ 111ա): Հնարավոր է, որ ավագ օրհնությանց ութ երգաշարքերը սկզբնապես հրապարակվել են առանձին մատյանով ևս, որպես յուրատեսակ Oktoēchos, ասենք՝ նման այն փոքրիկ երգարանին, որ կազմած է եղել տակավին Սեվերիոս Անտիոքացի պատրիարքը (VI դ.): Հիմք ընդունելով դա, Այուենցին կարող էր իրեն ծանոթ մյուս երգերն էլ նույն ձևով բաժանել ութ խմբի: Ամենայն հավանականությամբ, ճիշտ այդ աշխատանքն է, որ հասնելով իր տրամաբանական ավարտին, գոյացրել է հայ շարակնոցի՝ մեր մատնանշած ու հակիրճ նկարագրած տեսակներից մեկը (տե՛ս մեր հոդվածը՝ Կոմիտասը և հայկական խազերի վերծանության խնդիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 4, էջ 48): Այն իր կառուցվածքով հիշեցնում է բյուզանդական μεγάλη Ὀκτώηχος կամ Παρακλητική կոչված ձիսական հույժ կարևոր գիրքը (նմմտ. E. Wellesz, A History of Byzantine Musik and Hymnography. 2-nd. ed., էջ 139—140:

[66] Այդ հին եղանակների ձայնային նշումները սկսում են մեկնաբանվել որպես «օրվա ձայնի» ցուցիչներ: Վերջին հասկացության լրիվ բովանդակությունը (բուն երաժշտական, պալմանական ու ծիսական եռակի նշանակությամբ) կաշխատենք պարզել մի ուրիշ անգամ:

[67] Դրանց հաշվառման փաստին բախվում ենք դեռևս V հայրուրամյակի հայ երաժշտական կյանքում (տե՛ս մեր հոդվածները՝ Հասարակ օրերի կանոնագլուխները, «Էջմիածին», 1971, դ, և՝ Հանդիսավոր օրերի կանոնագլուխները, «Էջմիածին», 1971, Ժ):

[68] Դրանք եղանակների լադային բնութագրությանը վերաբերող կարևորագույն կետեր լինելով՝ հստակ ու ցցուն են, ինչպես նշեցինք վերը, ավագ օրհնություններում, որոնք այդ պատճառով ևս պետք է ընտրվեին որպես մեղեդիական նոր չափանմուշներ: Ստեփանոս Այուենցի Բ-ը գիտական նպատակներով

Ամփոփելով նախընթացը, հարկ է գնել հպանցիկ կերպով շոշափել նաև Ստեփանոս Այուենցի Բ-ի ստեղծագործական ժառանգության հարցը: Վերը տեսանք, որ սխալ են՝ ավագ օրհնությունները ու խաչի «Սրբութիւն սրբոց» շարականը նրան վերագրող տեղեկությունները: Նույնը պետք է ասել ձեռագրական այն տվյալի կապակցությամբ ևս, որի համաձայն՝ Այուենցուն են Մարտիրոսաց շարականները[69], և որը հավանական համարեց Սահակ վրդ. Ամատունին[70]: Որով մեր երաժիշտ-տեսաբանի գրչին պատկանող առ այսր հայտնի գործերն են. Օրբելյանի հիշատակած՝ հինանց և աղուհացից ստո-

---

մեկնելով նաև հոռմ, ուր VIII դարում առաջին քայլերն էր անում երաժշտա-տեսական միասնականացնող (ինտեգրացնող) մտածելակերպը, ամենայն հավանականությամբ, այնտեղ էլ կոահել էր մեղեդիական ամբողջական տիպարներ զանազանելիս՝ լադային բնութագրությունները ևս հաշվի առնելու անհրաժեշտությունը: Այդուամենայնիվ, Հայաստանում այդ ժամանակաշրջանում (ու ավելի ուշ ևս) երաժշտական տեսությունը զարգացել է, հիմնականում, տարբերացնող մտածողության հունի մեջ:

[69] Տե՛ս Հ. Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 442 («Մարտիրոսաց... Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսը»):

[70] Սահակ վրդ. Ամատունի, Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, էջ 176: Այստեղ արժեքավորն այն է, որ հեղինակը միանգամայն տեղին հաստատում է, թե Մարտիրոսաց (ու նաև հանգստյան) շարականները Պետրոս Գետադարձին հատկացնելը ակնհայտ թյուրիմացություն է: Իրոք, այդ շարականները հնագույն ծագում ունեն: Նվ սկզբնապես ստեղծվել են ոչ միայն XI, այլև VIII դարից շատ առաջ: Խոսքը մասնավորելով Մարտիրոսաց հարցերի շուրջ, որոնք նույնպես ան-ոկ ութ շարքեր են ներկայացնում, կարող ենք հավաստել (մանրամասն ուսումնասիրելուց հետո դրանք), որ այն, ինչ վերն ասել ենք ավագ օրհնությունների ստեղծման ժամանակի ու երաժշտական բաղկացուցչի բնութագրման կապակցությամբ, լիովին պատշաճում է նաև հիշյալ հարցերին: Ավելին, Մարտիրոսաց հարցերը կերպարային բովանդակությամբ նույնիսկ պարզագույն են, քան ավագ օրհնությունները (ուստի և՝ հանրամատչելի), և զարմանք չէ, որ դրանք էլ որոշ առումով նկատվել են յուրատեսակ չափանմուշներ. հնուց ի վեր՝ մինչև Խաչատուր Էրզրումացին (հմմտ. մեր հոդվածը՝ Խաչատուր Էրզրումացին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսաբան, ԳԱ-ի «Լրաբեր», 1986, № 11, էջ 67):

ԱՍԱՑ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ



Ջափաւոր-Բ



Ջափաւոր-Բկ



Ջափաւոր - Գ




Միջակ-գծ
Հո - գի իմ յա - մե - ցայց ժամ զքեզ փա - ռա - ւո - ր տէր.
վա - սըն - զի լոյս են հրա - մա - նըք քո ի վե - րայ երկ-րի.
Միջակ-գկ
Հաս - տա - տե - ցաց սիր - տըք մեր առ քեզ փա - ռաց թա - գա - ւոր.
որ ի յերկ - նից խո - նարհեալ ի - ջեր փըր-կել զա - րա - ռածս.
Միջակ. Դծ
Որ կա - մա - ւոր մահ-ուամբ քո մե-ռա - ցեր ըզ-մահ Քրիս-տոս Աս-տը-ուած
եւ լու - սա - փայլ յա - ռու - թեամբ քո կե - նա - գոր - ծե - ցեր զաշ-խարհս.
կե - նա գոր-ծեա եւ զիս զմե - ղաք ըզ - մեռ - եալս.
Միջակ-դկ
Ծափս նա - ռէք ա - մե - նայն հե - թա - նոսք եւ օրհ-նե - ցէք
զԱս - տը - ուած. զի հուրն աստ-ուած թա - գըն մարմ-նա - ցաւ ի կու - սէն
ա - ւեր - եաց ըզ - դը - ժոխս եւ զզո - ռու - թիւն մա - հու ե - լոյծ.

դոգիական սաղմոսները[71] (դրանց եղանակները)[72], որոնց խազավորումները պահպանվել են մաշտոցման գրքերում[73], և խաչի երկու տաղ, որոնք նրա անունով հանդիպում են կիլիկյան ընտիր գանձարաններից մեկում[74]:

[71] Հմմտ. մեր հոդվածը՝ Գրիգոր Գոգիկը և Հայաբյուզանդական երաժշտական կապերը, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1968, № 3, էջ 199 և 201:

[72] Յոթ եղանակ՝ Զատիկից մինչև Հոգեգալուստ ընկած յոթ շաբաթների ընթացքում երգվելու համար (Հմմտ.՝ Ստ Օրբելյան, Ճշմ. աշխ., էջ 88—89. «երգեաց և կցուրդս քաղցրանամս, յարմարեաց և կստորոգին Ցինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր, և զպահոցն որ յաղուհացսն երգի»):

[73] Տե՛ս, օրինակ, Մատենադարան, ձեռ. № 759, էջ 90ա և 141բ, կամ ձեռ. № 591, էջ 116բ—117ա:

[74] Մատենադարան, ձեռ. № 8503, էջ 226ա և 234բ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ*

(1771—1850)

ԺԴ

Սաղմոս Դաւթի, որ կոչի Սաղմոսարան, Էջմիածին, 1818 թ., 417 էջ։

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Սաղմոս Դաւթի։ Որ և կոչի Սաղմոսարան։

Տպագրեցեալ ի Մեծի Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի հրամանաւ Տեառն Եփրեմի Սրբազնագոյն Կաթուղիկոսի Հայոց... ոմկը։ (1818) (անվանաթերթը չկա)

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Շնորհիւ ամենազօրին Աստուծոյ և օգնականութեամբ ընդունական մաղթանաց սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին, տպագրեալ աւարտեցաւ սուրբ Գիրքս սաղմոսաց ի ոմկթ յուականութեան մերում և յամսեանս մայիսի ի լուսակաւոյց և ի բարձրագահ մայր Աթոռոյս ամենայն Հայոց ի սուրբ Կաթուղիկէն Էջմիածին. վասն որոյ գոհացողական փառատրութիւն ամենազօր կարողութեան Տեսան Աստուծոյ այժմ և յանվախճան յաւիտեանս։ Արդ որք յանդիման լինիք սովաւ Առաջի Աստուծոյ՝ մի՛ ձանձրասջիք յիշել ի խնկանուէր մաղթանս ձեր զնուխկին հանգուցեալ Տէր Սիմէոն Սրբազնագոյն և յոգնաշխատ Կաթուղիկոսն Եւ զյաջորդ Գահակալ նորին զՏէր Ղուկաս լուսաւորի Հայրապետն։ Եւ մանաւանդ զվերանորոգօղն տպարանիս զՏէր Եփրեմ յոգնավիշտ Սրբազնագոյն Վեհապետն, որ ի նեղութեանս ժամանակի գերագոյն քան զառաջինն պայծառացոյց և գրեթէ ի հիմանէ նորոգեաց զտպարանն՝ սրբոյ Գահիս, ի յոյս մանկանց նորոյ Սիոնի՝ զխանգարեալն ի բազում ամաց հետէ։ Յիշեսջիք և զտուօղն ծախուց նախկին շինութեան տպարանիս զջուղայեցի առ Քրիստոս փոխնցեալ Խոջաջանեան Զակիկեանց լուսաւորի Գրիգոր աղայն Միքայելեան հանդերձ համայն ազգայնովք նորին կենդանեօք և ննջեցելովք։ Եւ զնորոգ նորիրողն ծախուց վերահաստատութեան տպարանիս ի Հնդիկս ի Բաւիա վանականաւ՝ մահտեսի Յակոբեան լուսաւորի Եդիայն և զնորին կտակակատար ջուղայեցի աղայ Վարդան Գասպարեանն զբնակեալն ի մատրաս քաղաք, մաղթելով ի Քրիստոսէ վարձահատոյց լինիլ նոցա յանսպառ գանձարանէ Աստուածային անհոգ ողորմութեան իւրոյ։ Եւ ես յիշեսջիք զգանձակու գնտաշէնցի սարգիս քեռվխայեան լուսաւորի յարութինի որդի զ'ի բարիլօն բնակեալ՝ օրհնեալ պարոն Յակոբն. հանդերձ բարեպաշտուհի թամար խաթուն մարքն իւրով՝ Կիրակոս եղբարքն և պարկեշտուհի Մարիամ քեռքն և այլ ամենայն ազգականօք նորին կենդանեօք և ննջեցելովք։ Զանգի նոյն օրհնաժառանգ յիշեալ պարոն Յակոբն մինչ եկեալ ի սուրբ գահս՝ ետես զմեծարկութիւնս մեր ի նորոգութիւն տպարանիս, խընդրեաց յատկապէս՝ նախ զսադմոսարանս զայս տպագրեալ արդարավաստակ արդեամբն իւրով ի յիշատակ ինքեան և համայն իւրայնոցն։

Արժանի համարեսջիք յիշման այլ և զՍրբազնագոյն վեհապետի հարազատ պաշտօնեայ իսկ և հոգեւոր որդեակ՝ զսրբազարդ Գրիգոր վարդապետն աշտարակցի վարդապարեանց։

Նա և զկոստանդնուպօլսեցի յոհաննիսեան պատուելի վարպետ Մարտիրոսն՝ որ ևս ոչ սակաւ աշխատանս կրեաց յաղագս պէսպէս հանդերձանաց վերանորոգեալ տպարանիս, և զաշակերտսն նորին զգրաշար Գրիգորն, զԳալուստն և զԳէորգն, զմելանահար մահտեսի Պետրոսն վանեցի, և զտպիչ տիրացու Յակոբն, և որք յիշէքդ յիշեալ լիջիք յանշափ ողորմութիւնս և յանքաւ գթութիւնս մարդասիրին Քրիստոսի ի միւսանգամ գալստեան նորին։ Ամէն։

* Շարունակյալ «Էջմիածնի» սմսագրի 1979 թվականի № Ա-ից։

ԺԵ

Զայնքաղ շարական։ Էջմիածին, 1835 (—1835), 580 էջ, 2 չհ. էջ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Զայնքաղ Շարական

Ցորում որովնոկին հոգևորական պաշտոնկերգութիւնք սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց ի փառաբանութիւն Աստուծոյ և ի մեծարանս սրբոց նորա։

Կարգաւորեալ ըստ պատշաճի իւրաքանչիւր աւուր նանդերձ խորհրդաւոր քառասնամեայ ի դիւրութիւն երգեցողաց։

Ի Հայրապետութեան Արարատեան մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Տեառն և Տեառն ութերորդ Յովհաննու կարգեցեալ Աստուածընտիր Կաթուղիկոսի ամենայն Հայոց, և Ասպետի սրբոյն Աղէքսանդրի Նեվացւոյ՝

Որոյ

հրամանաւ իսկ Տպագրեալ՝

Ծախիւք կարգեցի տէր մարդեանց Ասպետ Յովսէփ Եպիսկոպոսի փեսային Սահակայ, և քեռն Եղիսաբեթի հանգուցելոյ, և մօրն Հռիփսիմէի։

Ի սուրբ Կաթուղիկէն

Էջմիածին

Յամի Տեառն 1835, և Հայոց ռմձ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Տպագրողի

Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ և օժանդակութեամբ Աստուածահաճոյ աղօթիւ սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի Հայաստանեայց Լուսաւորչի՝ յաւարտ նմաս տպագրութիւն երաժշտական հոգևորին սբ. Տաղիս Շարակնոցի՝ ընդ հովանաւոր յասմիմն և երկնահանգէտ Արարատեան գերագահ Մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Յամի տեառն 1835 ի Հայոց ռմձդ. որ վասն և անտեսի գոհարանութեամբ վերամատուցի փառք և երկրպագութիւն ի գլուխ սլաակողին զայս գործ տպագրութեան եռանձնեայ Տերութեան և մի Աստուածութեան այժմ և յանգրաւ յաւիտեան։

Արդ՝ որ վայելէք զհոգեշունչ երգարանս փառաւորութեամբ ամենասուրբ Անուան Արարողին երկնի և երկրի՝ յիշեսջիք զարժանաւոր մաղթանս ձեր զվերահաստատողն Տպարանիս պարագայիցն հանդերձ՝ զվեհափառ Ասպետ սրբոյն Աղէքսանդրի Նեվացւոյ՝ զՍրբազնակատար Ութերորդ Յովհաննէս կիլիկեցի զարժանընտիր Կաթուղիկոսն ամենայն Հայոց. որ յետ վճարելոյն զմեծ մասն պարտուց սրբոյ Աթոռոյս՝ հոգ կալաւ մեծաջան աշխատութեամբ և վասն շինութեանն և պայծառութեան Սորին. որ ահա իրոն զիւր առաջին ճախախայծ պտուղ զսոյն Երգարան ի լոյս ընծայեաց վերստին տպագրութեամբ ի վայելս Քրիստոսազարդ Եկեղեցւոյ Հայաստանեայց և ուխտի մանկանց Սորին։ Յիշեսջի՛ք զնուիրեալսն ծախուց տպագրութեանս. զկարգեցի տեր մարդեանց Ասպետ Յովսէփ Սրբազան Արք Եպիսկոպոսի փեսայ Սահակն. և զքոյր նորա Եղիսաբեթ հանգուցեալսն ի Քրիստոս. և զմայր նորա Հռիփսիմէն. և իսնդրեսջիք վասն նոցա զողորմութիւն Ամենաբարեսիրին Աստուծոյ։ Ընդ որս յիշեսջիք զվերակացու և զսրբագրիչն Տպարանիս զՅովհաննէս վարդապետն յոհաննիսեան Էջմիածնեցի. որ բաց ի հիւրընկալական պաշտօնէն իւրմէ՝ ակիւոնք ջանիւք աշխատ եղև. և ի լրումն էած զսոյն։

Յիշեսջիք և զաշխատաւորսն Տպարանիս՝ զառաջին և զերկրորդ վարպետսն զ12 կլաս Աստուածանաւոր պարոն Կէորգն Աբարատեանց. և զվլասիոսն յակոբեան. զգրաշար Յովհաննէսն տեր մկրտչեան և զԳրիգորն ժամարեան. զմարգարկ Կարապետն գրիգորեան. և զտպիչ Ադամն յոհաննիսեան և զՕնանն բալասանեան։ Եւ յիշողքդ յիշեալ զիջիք Աստուծոյ ամենակալէ. որ է օրհնեալ ի բնաւից սարաածոց ընդ ամենայն յաւիտեանս։

ԺԶ

Սիմէոն Երևանցի. Գիրք հանդիսադրութեանց տանից կայսերականաց

Էջմիածին, 1839, 21 էջ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Գիրք Հանդիսադրութեանց Տանից
Կայսերականաց.

Շարակարգեալ ի Սիմէոն Կաթուղիկոսէ ամենայն հայոց Երևանցւոյ՝ յաւելուածովք Նորահիս շարականաց և աղօթից։

Յամի Տեառն 1771. յուլիսի 10

Տպեալ երրորդ անգամ։

ի Հայրապետութեան Տեառն Յովհաննու Արքեպիսկոպոսի ամենայն Հայոց։

Յամի տեառն 1839. հոկտեմբերի 9։

Ի Տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ չունի։

ԺԷ

Տօնացոյց։ Էջմիածին, 1835, 576 էջ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Տօնացոյց

Նախասէր կարգեալ և սանմանեալ սրբոյն Սահակայ Պարթևի Հայրապետին հայոց ըստ աւանդութեան հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ։

Եւ զկնի յոգնաջան կարգաւորութեամբ և աշխատասիրութեամբ Տեառն Սիմէոնի Սրբազնագոյն Կաթուղիկոսին՝ յերկուս հատորս բաժանեալ, և յԱստուածնկերտ Աթոռս սուրբ Էջմիածին տպագրեալ։ Արդէն ևս՝ ըստ նմին օրինակի ի վեհափառ Հայրապետութեան Արարատեան Մայր Աթոռոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի Տեառն ութերորդ Յովհաննու կարգեցեալ Աստուածընտիր Կաթուղիկոսի ամենայն Հայոց, և Ասպետի սրբոյն Աղէքսանդրի Նեվացւոյ, և Նորին իսկ։

Բարձրագոյն հրամանաւ վերստին եղև տպագրեալ։

Յամի Տեառն 1835։ և ի թուին հայոց ռմձդ։

Ի սուրբ Էջմիածին։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ (էջ 575—78)

Փառք, պատիւ և երկրպագութիւն Ամենասուրբ Երրորդութեանն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որ յաջողեաց օգնականութեամբ մաղթոր հայցուածոց սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի հայաստանեայց

Լուսաւորչի՝ գործարանի տպագրութեան լուսահիմն գերագահ Մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի ի կատար հասուցանել զվերստին տպագրութիւն Տօնացոյց գրքոյս յամի Տեառն 1895. և Հայոց ռմձդ ի Փառս Անուան սուրբ Աստուածութեան իւրոյ և ի յօգուտ յեկեղեցւոյ Հայաստանեայց և ուխտի մանկանց նորին:

Ապաքէն՝ որք վայելէք զսոյն՝ յիշեսջիք յԱստուածահաճոյ աղօթս ձեր զվերահաստատօղն Տպարանիս պարագայիւքն հանդերձ՝ զվեհափառ Ասպետ սրբոյն Աղէքսանդրի Նեաքւոյ՝ զսրբազնակատար Ութերորդ Յովհաննէս Կարբեցի՝ զարժանընտիր Կաթուղիկոսն ամենայն Հայոց, որ բարենախանձ գովանի իմն ազգասիրութեամբ և մեծաջան աշխատութեամբ հոգ կալաւ վասն շինութեան և պայծառութեան սորին:

Յիշեսջիք նաև զկառուցարիչն Տպարանիս, և զկարգաւորիչն սրբագրութեան զհիւրընկալ Յովհաննէս վարդապետն յօհաննիսեան Էջմիածնեցի:

Ընդ նմին յիշեսջիք և զվարպետ Գործարանիս զՎլասիոսն յակոբեանն, և զամենայն աշխատաւորսն՝ զգրաշար Գրիգորն ժամհարեան, զՎարդանն բունիաթեան, զԳէորգն կարապետեան, զմրազարկ Կարապետն գրիգորեան, զտպիչ Աւետիսն յօհաննիսեան, զՕհանն բալասանեան և Աստուածատուրն դաւթեան. և յիշօղքդ յիշեալ լիջիք յԱստուծոյ ամենակալէ. որ է օրհնեալ այժմ և յանվախճան յաւիտեանս:

ԺԸ

Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան (Պոլոժենիե), Էջմիածին, 1836 թ. 80 չ8. էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Բարձրագոյն Կարգադրութիւն

Յաղագս կառավարութեան գործոց Լուսավորչական Հայոց Եկեղեցւոյ ի Ռուսաստան:

Տպեալ ի սուրբ Էջմիածին:

Յամի տեառն 1836:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ չունի:

ԺԹ

Գիրք, որ կոչի Մաշտոց: Էջմիածին, 1886 թ. 447 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Գիրք որ կոչի Մաշտոց

Յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան սուրբ եկեղեցւոյս Հայաստանեայց: Ի Հայրապետութեան Արարատեան գերագահ մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Տեառն Ութերորդ Յովհաննու Կարբեցւոյ Աստուածընտիր Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Ասպետի սրբոյն Աղէքսանդրի Նեաքւոյ:

Որոյ և Վեհափառ հրամանաւ արդ նս ի տիպ արձանացաւ:

Յամի Տեառն 1836: և ի թուին հայոց ռմձե:

Ի Տպարանի մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Փառք, պատիւ և երկրպագութիւն Ամենասուրբ Երրորդութեան Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որ յաջողեաց օգնականութեամբ մաքուր հայրենասէր սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի հայաստանեայց Լուսաւորչի՝ գործարանի տպագրութեան լուսահիմն գերագահ Մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի ի կատար հասուցանել զտպագրութիւն Մաշտոց գրքոյս յամի Տեառն 1836 և Հայոց ռմձե ի փառս Անուան սուրբ Աստուածութեան իւրոյ և ի յօգուտ սրբոյ եկեղեցւոյ հայաստանեայց և ուխտի մանկանց նորին:

Ապաքէն՝ որք վայելէք զսոյն՝ յիշեսջիք յԱստուածահաճոյ աղօթս ձեր զվերահաստատօղն Տպարանիս պարագայիւքն հանդերձ՝ զվեհափառ Ասպետ սրբոյն Աղէքսանդրի Նեաքւոյ զսրբազնակատար Ութերորդ Յովհաննէս Կարբեցի՝ զարժանընտիր Կաթուղիկոսն ամենայն Հայոց, որ բարենախանձ գովանի իմն ազգասիրութեամբ և մեծաջան աշխատութեամբ հոգ կալաւ վասն շինութեան և պայծառութեան սորին:

Յիշեսջիք նաև զհիւրընկալն սրբոյ Աթոռոյս, զկառավարիչն Տպարանիս, և զկարգաւորիչն սրբագրութեան զՅովհաննէս Վարդապետն յօհաննիսեան Էջմիածնեցի:

Ընդ նմին յիշեսջիք և զվարպետ Գործարանիս զՎլասիոսն յակոբեան. և զամենայն աշխատաւորսն՝ զգրաշար Գրիգորն ժամհարեան, զՎարդանն բունիաթեան, զԳէորգն կարապետեան զմրազարկ Կարապետն գրիգորեան, զտպիչ Աւետիսն յօհաննիսեան, զԱստուածատուրն դաւթեան. և յիշօղքդ յիշեալ լիջիք յԱստուծոյ ամենակալէ. որ է օրհնեալ այժմ և յանվախճան յաւիտեանս:

Ի

Ժամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Էջմիածին. 1897 թ. 544 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Ժամագիրք

Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ

Արարեալ սուրբ և աստուածաշնորհ թարգմանչացն մերոց՝

Սահակայ և Մեսրովպայ, և երանելի Հայրապետացն մերոց՝ Գիւտոյ

և Յովհաննու մանդակունւոյ, և սրբոյն Ներսէսի շնորհալւոյ:

Ի Հայրապետութեան Տեառն Յովհաննու ութերորդի կարբեցւոյ՝ Սրբազնակատար Կաթուղիկոսի ամենայն Հայոց, և Ասպետի Աղէքսանդրի Նէվաքւոյ և Վլադիմէրի Առաջնոյ:

Որոյ

ե բարձրագոյն հրամանաւ վերստին տպագրեցաւ

յամի Տեառն 1887: իսկ ի թուին հայոց ռմձզ ի հոկտեմբերի 5: ի Տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, որ յԱստուածակերտ գերագահ սուրբ Աթոռս Էջմիածին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ չունի

ԻԱ

Գիրքերեան Յովհաննէս: Հարիւր և չորս սուրբ պատմութիւն, հաւաքեալ ի Հին և ի Նոր Կտակարանաց յօգուտ մանկանց: Էջմիածին, 1838 թ. 189 էջ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Հարիւր եւ Չորս Սուրբ Պատմութիւն

Հաւաքեալ ի Հին և ի Նոր կտակարանաց յօգուտ մանկանց

Աշխատասիրութեամբ Յովհաննու Գիրքերեան հանդերձ յաւելուածովք հոգեշահ խրատուց և պտղոց բարեպաշտութեան.

ի Ռուս լեզուէ Հայացոյց

Առաջ քահանայ Հայոց տփխիսայ Իսահակ Սահառունեանցը:

Ի Հայրապետութեան Արարատեան գերագահ մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Տեառն ութերորդ Յովհաննու Կարբեցւոյ սրբազնակատար Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Կայսերապսակ Ասպետի. որոյ և վեհափառ Հրամանաւ Տպագրեցաւ:

1838—ուն ձ է

ի Տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին

ի Սուրբ Էջմիածին

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ չունի

ԻԲ

Մաշոց գիրք: Էջմիածին, 1839 թ. (1840), 811 էջ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Մաշոց Գիրք

Որ ըստ խորհրդոյ և ըստ պատշաճի հրաքանչիւր աւուրց տարւոյն զհին և զնոր զկտակարանացն բանս ի սուրբ եկեղեցիս Հայաստանեայց ընթեռնելիս ընդ այլ հարկաւոր աղօթից և ճառից շարսկակարգեալց ի հոգեկիր նախնեացն մերոց ըստ առաջի առնելոյ տօնացուցին՝ որ ի Սիմէօն արժանայիշատակ Կաթուղիկոսէ հաւաքեալ պարունակէ յինքեան:

Տպեալ

Առ այժմ ի նորոյ ըստ օրինակին տպագրելոյ ի Կոստանդնուպօլիս յամի տեառն 1799. վասն հարկաւորութեան հայաստանեայց եկեղեցւոյ: Վեհափառ Հրամանաւ Սրբազնակատար Կաթուղիկոսի սրբոյ գերագահ Աթոռոյ Կաթուղիկէ Էջմիածնի ե ընդ հանրական Հայրապետի ամենայն հայոց տեառն Յովհաննու Ութերորդի և զանազան նշանաց Ասպետի:

Յամի տեառն 1839. և հայոց ռմձ:

Ի Տպարանի Գերագահ Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Փառք, պատիւ և երկրպագութիւն Ամենասուրբ Երրորդութեանն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որ յաջողեաց օգնականութեամբ մաքուր հայցուածոց սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի հայաստանեայց Լուսաւորչի՝ գործարանի տպագրութեան լուսահիմն գերագահ Մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի ի կատար հասուցանել զտպագրութիւն Մաշոց մատենիս, յամի տեառն 1840, և Հայոց ռմձթ, ի Փառս անուան սուրբ Աստուածութեան իւրոյ և ի յօգուտ սրբոյ եկեղեցւոյ հայաստանեայց և ուխտի մանկանց նորին:

Ապաքէն՝ որք վայելէք զսոյն՝ յիշեսջիք յԱստուածասնաճոյ աղօթս ձեր զվերահաստատօղն Տպարանիս պարագայիւքն հանդերձ՝ զվեհափառ Ասպետ սրբոյն Աղէքսանդրի Նեանցւոյ՝ զսրբազնակատար Ութերորդ Յովհաննէս Կարբեցի՝ զարժանընտիր Կաթուղիկոսն ամենայն Հայոց, որ բարեխնամն գովանի իմն ազգասիրութեամբ և մեծաջան ուշխատութեամբ հոգ կալաւ վասն շինութեան և պայծառութեան սորին:

Յիշեսջիք նաև զկառուարիչն Տպարանիս, և զկարգաւորիչն սրբագրութեան զՅովհաննէս վարդապետն Նախիջևանցի:

Ընդ նմին յիշեսջիք և զվարպետ վլասիոսն յակովբեան, զգրաշար Գրիգորն ժամհարեան, զԹադէոսն մկրտչեան Կարնեցի, զՍիմէօնն վարդանեան, զԱնտօնն սանվէլեան, զտպիչ Աստուածատուրն դաւթեան, զՅՕհաննն բալասանեան, զմրազարկ Աւետիսն յովհաննէսեան, և յիշողդ յիշեալ լիջիք յաստուծոյ ամենակալէ որ է օրհնեալ այժմ և յանվախճան յաւիտեանս:

ԻԳ

Խորհրդատետր Սրբազան Պատարագի ըստ արարողութեան սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց: Էջմիածին, 1840 թ. 35 էջ:
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Խորհրդատետր

Սրբազան Պատարագի Ըստ Արարողութեան

Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց

Տպագրեցեալ ի Գրիգորիոսասիմն և ի Լուսանկար Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

Հրամանաւ Տեառն Ղուկասու Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

Յամի մարդեղութեան Փրկչին, ռչձ:

Վերստին տպեալ եղև Հրամանաւ Տեառն Յովհաննու Ութերորդ

Կարբեցւոյ Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց

զսանազան նշանակրի և ասպետի:

1840 ամի. ի 18 օգոստոսի

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ չունի.

ԻԴ

Յովհան Միրզայեան Վանանդեցի: Կերակուր քահանայից: Էջմիածին, 1841 թ. 104 էջ:
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Կերակուր Քահանայից

Թարգմանեալ յառաջագոյն ի լատին լեզուէ ի հայ բարբառ ի ձեռն Վարդանայ ուրումն կրօնաւորի:

Եւ ապա նորոգ շարադրեալ ըստ հայկարանութեանն կարգի՝ յաւելմամբ ի նոյն և այլ ևս վկայութեանց և բացատրութեանց ի Միրզայեան տէր Յով-

գրված է հետևյալը. «ՏՐ. ԵՓՐԵՄ. ԿԹՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՀԱՑՈՑ ՌՄԹԹ (1810 թ.—Ն. Մ.) ԾՆՈՐՀԻՒ ՏՆ.»: Կնիքը, որպես արևգակ, լույսի գունավոր ճառագայթներ է արձակում, ոսկեգույն և այլ գույներով: Կոնդակի ամենավերևում եռանկյունի մեջ ընկարված մի փոքր աչք կա, որ նույնպես ճառագայթներ է արձակում:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Եփրեմ Զորագեղցի կաթողիկոս (1810—1831 թթ.):—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 28 մարտի 1831 թ.:—**Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:—**Ծանոթություն՝** Մայր Աթոռիս Ջեռագրատունը 18 հոկտեմբերի 1885 թ. նվեր է ստացել Աստրախանից Գրիգոր Գերասիմի Սվյեշնիկյանից, ձեռամբ Վարդան Սարգսի Սիրվանյանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յիսուսի Քրիստոսի ճառայ Տէր Եփրեմ և շնորհիւ նորին Կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի, նաև Սրբոյ Աթոռոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Հայրապետական բազմաշնորհ օրհնութիւն և տիրական կենսաձիր սուրբ զողջոյն առաքեմք ամենաբարեպաշտ ջերմեռանդից և հարազատ որդւոց սրբոյ Մայր Աթոռոյս պատուելի աճձանց յատկացելոց և հանդիսացելոց նուիրատուութեամբ եկեղեցական զարդուց յանուն Սրբոյ Աթոռոյս՝ որ ի կայսերահնանց յԱստրախան, և աղօթս առնեմք զի շնորհք, ողորմութիւն, գթութիւն և պահպանութիւն ամենաբարձրելոյն Աստուծոյ հանդերձ գերազօր շնորհօք սրբոյ Տաճարիս Աստուծոյ և ի սմին գանձեալ աստուածաբնակ սրբութեանց եղիցին ի վերայ հոգւոց և մարմնոց ձերոց, և ի վերայ զաւակաց և ընտանեաց ձերոց և զօրացուսցեն զձեզ ի գործս բարիս և ի բարեվայելուչ յաջողուածս բարօրութեանց անփորձ ի չարէ և անվտանգ ի դիպուածոց աշխարհի, ամէն:

Զկնի ողջունի և օրհնութեանս յայտ առնեմք ջերմեռանդ բարեսիրութեամբ ձերում զբան սուրբ գրոյն, երկիր որ բերէ զպտուղ, օրհնեսցի զի մատուցանէ ըստ բնատուր յատկութեամբ իւրում զբերս բարիս ի վայելս բանաւոր վաստակողի իւրում մարդկան ըստ արարչադիր հրամանին. վասն որոյ օրհնի անտի իբր ի Տեառնէ, զի առաւել ևս լիցի պտղաբեր բարեաց: Ապաքէն եթէ երկիր և որ ի նմին բոյսք և ուռնկք ի գոյատրել և ի մատուցանել զբերս բարիս ըստ իւրաքանչիւր յատկութեամբ օրհնին ի Տեառնէ և ի մարդկանց, որչափ ևս առաւել մարդիկ բանաւորք վերացեալքն ի նմանութիւն և ի պատկեր հաւորց գոյացուցչին, որոց բարեզգեաց վարուց ընթացք, և քաջատիպ գործնական առաքինութեանցն բերք և արգասիք վերաբերեալք առ բարձրիալն Աստուած անշուշտ եղիցին ճառք օրհնութեան և շնորհակալութեան արարչապետին զնոցուցն:

Ըստ որոյ ահա դուք ամենաբարեպաշտ հարազատ որդիքդ լուսածին ծնողիս ձերոյ Սրբոյ Մայր Աթոռոյս զոհնապազ տքնիք և ճգնիք ուրախ առնել զսա առաքինի գործովք ձերով ջերմեռանդութեամբ լցուցանելով զթերին բարեզարդութեամբ և պայծառութեամբ մեծի Տաճարիս Աստուծոյ: Որպէս ահա յայտնի ծանուցաւ մեզ գրութեամբ Հոգևոր Կոնսիստորի տեղւոյդ, որ առ սրբազան Սինօդն ամենաջերմեռանդ Հոգով նուիրատուութիւն ձեր յանուն Սրբոյ Աթոռոյս և վասն Սրբոց եկեղեցեացն, որ շուրջ կան զմեզ. և բարեջան աշխատակցութիւն ձեր ի նոյն սակս վասն եկեղեցական շապկացն ասեմք և աշտանակացն: Վասն որոյ և մեք տեսեալ զբարի պտուղս արդիւնաւոր ասաքինի վաստակոց ձերոց օրհնեցաք զձեզ լիարբերան օրհնութեամբ, և մատուցեալ առ Աստուածային սրբազան խորանսն զենման գասինն անմահի զջերմեռանդութեան մուէրս ձեր, մատչիմք ի մաղթանս հայցուածոց առ մարդասէր Սուրբ Հոգին Աստուած ընկալցուցէ զմուէրս տրոց ձերոց ի հաճոյս բարերար Սրբոյ Աստուածութեանն իւրոյ, և օրհնել զձեզ զամենեսին զպտղատուս բանաւոր զտունկսդ եկեղեցւոյն Քրիստոսի, և առնել հաստատմամբ ի խորս գիտութեան քրիստոնէական հաւատոյս, և փոխարինել ի ձեզ զշնորհս և զնման քաղցր բարեգութեամբ իւրոյ. յաջողել ձեզ զգործս ձեր ի բարին և ի վայելուչն, և հանգուցանել զձեզ զամենեսին հանդերձ որդւովք և ընտանեօք ձերովք ի իւաղաղաւէտ կեանս և ի խաղաղութիւնս աւուրց կենաց ձերոց. և լուսաւորել զմոգիս մամայն ննջեցելոցն ձերոց լուսով տեսութեան սուրբ աստուածութեանն իւրոյ, ամէն:

Ողջ լերուք, և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի եղիցի ընդ ձեզ և ընդ հոգւոյդ ձերում, ամէն:

Վասն ձեր միշտ ջերմեռանդ աղօթարար Կաթողիկոս ամենայն Հայոց:

1831 մարտի 28, ԵՓՐԵՄ Ա

ի Սուրբ Էջմիածին:

№ 307

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Թերթերը՝ 76:—**Գրակները՝** անհավասարաչափ են:—**Մեծությունը՝** 21×14,5×1,5 սմ.: **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ:—**Կազմը՝** թղթակազմ ստվարաթուղթ:—**Պահպանակներ՝** սկզբից կան երկու թերթ հաստարակ թուղթ:—**Վիճակը՝** թղթերը դեղնած են, իսկ կազմը մի քիչ քայքայված:—**Գրությունը՝** միապյուն:—**Տողերը՝** 23:—**Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:—**Գիրը՝** շեղագիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** Ռ. Գ. Կիրակոսյան:—**Ժամանակը՝** 1 օգոստոսի 1913 թ.:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից (Հին Վեհարանի դիվանատան սենյակից):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա և 1բ էջերում տրված է գրքի առաջաբանը, ապա տրված են տասը քարոզներ, որոնց ցուցակը հեղինակը տալիս է 73բ և 74ա էջերում:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—Բաղտասարյանց հնոցից և նորոց. ի շարադրութենէ Ռ. Դ. Կիրակոսեան, Մաս Բ.

1913 օգոստոս 1-էն սկսեալ:

№ 308

ՑՈՒՇԵՐ

Թերթերը՝ 687+9=696 (494-րդ թերթն ունի 9 հավելվածական թերթ, համարակալված 494ր—494ժ)։—**Պրակները՝** գոյություն չունեն, ձեռագիրը գրված է առանձին թերթերի վրա, որոնք տեղ-տեղ կպրված են սոսինձով։—**Մեծությունը՝** 29,2×20,5×0,5 սմ։—**Նյութը՝** դեղնած հասարակ բարակ թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական ստվարաթուղթ կա։—**Վիճակը՝** անբավարար, վերջից թերթեր են պակասում, որովհետև նախադասությունը կիսատ է մնացել։—**Գրությունը՝** միասյուն։—**Դատարկ թերթեր՝** չկան։—**Տողերը՝** անհամաչափ, տարբերվում են 23—33-ի միջև։—**Գծումները՝** տեղ-տեղ մատիտով և տեղ-տեղ էլ առանց գծումի։—**Գիրը՝** շեղագիր։—**Ձարդագրություն՝** չունի։—**Գրիչն և պատվիրատուն՝** Բենիկ Եղիազարյան։—**Ժամանակը՝** 1942 թ.։—**Վայրը՝** Երևան։—**Մանոթություն՝** 1953 թ. ձեռագիրը գնված է նախկին վարդապետ Բենիկ Եղիազարյանի կնոջից։ Մատյանը համարակալված է նույն ինքն գրչի կողմից այսպես՝

էջ 1—553 գրված է թղթի մի երեսին,
էջ 554—803 գրված է թղթի երկու երեսին։

Նպատակահարմար համարվեց 554-րդ էջից սկսյալ համարակալումը շարունակել ըստ թերթի, և ոչ թե ըստ էջի, որով գրչի 554—803 էջերի համարակալումը փոխարինվեց 554—687 համարներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Էջմիածնի նախկին միաբան Բենիկ վարդապետ Եղիազարյանն իր սույն հուշերը գրել է ընդգրկելով իր ծննդից՝ 1867 թվականից մինչև 1912 թ., որից հետո կիսատ է թողել այն։ Սկզբում նա գրել է իր գերդաստանի, իր ծննդավայրի (Ապարանի Ղազնաֆար գյուղ), տեղվույն կենցաղային սովորությունների և վարք ու բարքի մասին, պարզ և հստակ լեզվով։ Մանրամասն գրում է գյուղական դպրոցի, Էջմիածնի ճեմարանի և Օդեսայի հոգևորարանի իր ուսման տարիների մասին։ Մանրամասն և շատ հետաքրքիր տեղեկություններ կան Էջմիածնի վանքի ներքին կյանքի և անցուդարձերի մասին, որոնք ընդգրկում են Գեորգ Դ կաթողիկոսից մինչև Գեորգ Ե կաթողիկոսի ընտրության ժամանակաշրջանը։ Հետաքրքիր կերպով պատմում է իր սարկավագության ժամանակ վանքից արտաքսման և հետագայում վարդապետ ժամանակ Օրենբուրգ աքսորվելու, ինչպես նաև Երևանի և ապա Շուշու թեմական դպրոցների իր տեսչական տարիների մասին։ Գեորգ Դ, Մակար, Մատթեոս Բ և Գեորգ Ե կաթողիկոսներից բացի տալիս է Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի բնութագիրը, մանրամասն տեղեկություններով և հետաքրքիր դրվագներով։ Ականատեսներից լսելով նկարագրում է Խրիմյանի 1895 թ. տեսակցությունը Ռուսաստանի կայսեր հետ։ Պատմում է, թե գյուղում ինչպես իր վրա մահափորձ են կատարել։ Բազմաթիվ էջերում հետաքրքիր տեղեկություններ է տալիս Կոմիտաս վարդապետի և իր նկարագրած ժամանակաշրջանի ս. Էջմիածնի զանազան միաբանների և թեմական առաջնորդների կյանքի և վարքի մասին։

Բենիկ Եղիազարյանի այս հուշերն ընդարձակ և հետաքրքիր նյութեր են տալիս նկարագրված այդ ժամանակաշրջանի մասնավորապես ս. Էջմիածնի վանքի, Գեորգյան հնավարանի և հոգևորականության, և ընդհանրապես հայ ժողովրդի պատմության մասին։

Գրիչն իր ամբողջ պատմությունը գրել է կարծես մեկ շնչով, շարունակական կերպով։ Տեղ-տեղ միայն ընդգծելով տվել է մի քանի վերնագրեր և ենթավերնագրեր, որոնք հետևյալներն են.—

(Գրիչն սկզբում գրել է նոր ուղղագրությամբ, ապա փոխել է հնին, տեղ-տեղ թողնելով նորը։ Պահվում է գրչի ուղղագրությունը)։

Թ. 1.—Նախաբան.
Թ. 6.—Ցուշեր—իմ մանկությունը.
Թ. 37.—Ես իմ պատանեկությունը.
Թ. 143.—Գեորգեան Ճեմարանը.
Թ. 167.—Գևորգ Դ. Մեծագործ կաթողիկոսի մահը.
Թ. 179.—Մեր Ճեմարանը.
Թթ. 564ա/564բ.—Ս. Էջմիածնի կալվածների գրավման օրերը և հայ ժողովրդի համատարած բողոքավոր շարժումը ցարական իշխանության դեմ (1903 թ.)։
Թ. 588բ.—Խարկովում.
Թ. 591բ.—Դեպի Օրենբուրգ.
Թ. 598բ.—Օրենբուրգում.
Թ. 618ա.—Դարձ դեպի հայրենիք.
Թ. 639բ.—Վերադարձս Էջմիածին.
Թ. 640բ.—Կաթողիկոսական նոր ընտրությանն պատրաստությունը.
Թ. 644բ.—Իզմիրլեան Մատթէոս Բ-ի կաթողիկոսությունը.
Թ. 670ա.—Գեորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը՝ Տեղական։

№ 309

ԼՈՐԴ ԲԱՅՐՈՆԻ «ԿԱՅԷՆ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Թերթերը՝ 78։—**Պրակները՝** 5, անկանոն, Ա պրակը 16, Բ՝ 14, Գ՝ 16, Դ՝ 12 և Ե՝ 18 թերթ։—**Մեծությունը՝** 22×14,6×0,9 սմ.։—**Նյութը՝** դիմացկուն լավ թուղթ։—**Կազմը՝** սովորականից հաստ թուղթ։—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական թերթ թուղթ։—**Վիճակը՝** լավ։—**Գրությունը՝** միասյուն։—**Դատարկ թերթերը՝** 4ա, 4բ, 77ա, 77բ, 78ա և 78բ։—**Տողերը՝** 27։—**Գծումները՝** տոլավոր թուղթ։—**Գիրը՝** նոտրգիր։—**Ձարդագրություն՝** չունի։—**Գրիչն և թարգմանիչը՝** Տիրայր վարդապետ Տեր-Հովհաննիսյան, միաբան Մայր Աթոռ ս. Էջմիածնի։—**Ժամանակը՝** 1905 թ.։—**Վայրը՝** անհայտ։—**Մանոթություն՝** Վեհափառ Հայրապետի 1960 թ. ամռան Ամերիկա այցելության առթիվ սույն ձեռագրի

գրիչ Տիրացր սրբազանի եղբոր որդին՝ Տիգրան Մելիքը (Նյու-Յորքից) ընծայել է այն Մայր Աթոռի Ձեռագրատանը, Մայր Աթոռի դիվանապետ Հայր Աստրիկյանի միջոցով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Սույն ձեռագիրը հանդիսանում է անգլիացի գրող Լորդ Բայրոնի (1788—1824 թթ.) «Կայեն» ողբերգության հայերեն գեղեցիկ թարգմանությունը կատարված Տիրայր վարդապետի կողմից 1805 թ.։

Թ. 2ա.—Նախաբան (Լորդ Բայրոնի).

Թ. 5ա.—«Կայեն»—Առաջին արարուած.

Թ. 27ա.—Երկրորդ արարուած.

Թ. 52ա.—Երրորդ արարուած.

Թ. 74ա.—Մանօթութիւններ։

(Ողբերգությունը ընդգրկում է ընդամենը 3212 տող)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—Լորդ Բայրոն—Կայէն.

Միստերիա երեք արարուածով.

«Եւ օձն էր խորամանկ (իմաստնագոյն) քան զամենայն կենդանիս, որ ստեղծ Տէր Աստուած»։

Ծննդ. Գ. 1.

Թարգմ(անեց) բնագր(ից)

Տ(իրայր) Վ(արդապետ)

1805

Lord Byron

Cain.

Թ. 1բ.—«Կայէն» միստերիա

ձօնում է

Բարոնէտ Սըր Վալտէր Սկոտտին

իր շնորհապարտ և հաւատարիմ ծառայ

Հեղինակը։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Գրված է Տիրայր վարդապետի ձեռքով կոնակի կազմի վրա, ներսի կողմից)

Ֆրիկի Դիւանը

Խրատական, այլաբանական տաղեր

Ձեռագրերի համեմատութեամբ

բնագիրը

քննական ուսումնասիրութեամբ

հրատարակեց

Տ(իրայր) Վ(արդապետ)

(Գրված է Տիրայր վարդապետի ձեռքով կոնակի կազմի վրա, դրսի կողմից)

Տպուած

1. Գաղափարական քահանայ (սպառած).
2. Մի մանկան հոգու պատմութիւն.
3. Հերոստրատ.
4. Բանակն ինչպե՞ս ազատեցի.
5. Գրազ.
6. Նոր կոտոր.

Անտիպ

1. Մ. Պիտրոսի յարաբերութիւնները Հայ ազգի հետ.
2. Կայէն.
3. Լ. Ըէլլըս—Բէն-Հուր։

№ 310

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1։—**Մեծությունը՝** 29,7×23,1 սմ.։—**Նյութը՝** ցեցակեր դեղնած հաստ թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** առնված է ապակյա շրջանակի մեջ։ Կոնակում կպցված է հաստ թուղթ։—**Վիճակը՝** անբավարար։—**Գրությունը՝** միապուն։—**Տողերը՝** 16։—**Գծումներ՝** չունի։—**Գիրը՝** նոտրգիր։—**Ձարդագրություն՝** Կոնդակն ունի երկու սիրուն գունավոր մեծ ծաղկագրեր։ «Կաթողիկոս» բառի վրա նկարված է գունավոր խաչազարդ մի գմբեթ։ Կոնդակի վերևի կենտրոնում կա Եփրեմ կաթողիկոսի կարմիր կնիքը, 3,5 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված են Քրիստոսը և Աստվածամայրը, իսկ երկնքից իջնում է ս. Հոգին աղավնու կերպարանքով։ Շրջանակում գրված է հետևյալը. «ՇՆՈՐԻՆ. ԱՅ. ՏՐ. ԵՓՐԵՄ ԿԹԻՂԿՈՍ ԱՄ. ՀԱՅՈՑ ՌՈՄԵՈՅ» (1810 թ.—Ն. Մ.)։ Կնիքը, որպես արեգակ, լույսի ոսկեգույն և այլ գույնի ճառագայթներ է արձակում։ Կոնդակի ամենավերևում եռանկյունի մեջ նկարված մի փոքր աչք կա, որ նույնպես ճառագայթներ է արձակում։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** Եփրեմ Ձորագեղցի կաթողիկոս (1810—1891 թթ.)։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1 հունիսի 1890 թ.։—**Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք։—**Ծանոթություն՝** Ձեռագիր կոնդակն ստացված է որպես նվեր վերջին տարիներս մերքին թեմերից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Եփրեմ կաթողիկոս (հետագայում անունը խունացած լինելուն մեկը վրայից հասարակ թանաքով գրել է. «Էփրէմ կաթուղիկոս»—Ն. Մ.) ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, նաև Մայր Աթոռոյս Սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Հայրապետական օրհնութեամբ մերով տամք զայս վկայական գրեղոցս ինքնայօժար կամօք ի ճորտութիւն Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի (հետագայում մեկը գրել է հասարակ թանաքով հետևյալը. «Կաթուղիկէ Էջմիադզին»—Ն. Մ.) հայազգի օրհնեալ Պրն. Թամրազայ և որդւոց իւրոց Պապային և Ստեփանին, որով և յաղտնեմք ամենեցուն որոց միանգամ ունիցին ինչ բանս ի մասին ճորտութիւն սոցա, զի սոքա յերեսնաւոր ամաց հետէ գոլով ազատեալ ի ճորտութեան ...աց որպէս և ցուցանէ վկայական նոցին ազատութեան, զոր ստացեալ ունին յիւրեանց պարոնէն, մտեալ են ի ճորտութիւն Սրբոյ Աթոռոյս, և մինչև ցայժմ ըստ սովորութեանն յիւրաքանչիւր ամի մին մին չարէք մոմ նուիրեալ նը և նուիրեն անխափան ամին Աթոռոյ, բայց ըստ պատահմանն չունելով վկայագիր ի Հայրապետէ Աթոռոյս ի մասին ճորտութեան իւրեանց, խնդրեցին և տուաք

նոցա զսոյն վկայական դրոշմամբ նշանի Հայրապետական մեր կնքով, և ձեռագրութեամբ, զի ոչ ոք ի տեսանելն զայս՝ ունիցի իրաւունս պանանջողութիւն ինչ առնել ի սոցանց ի մասին ճորտութեան, զի են սեպհական ճորտք Սրբոյ Աթոռոյս՝ գրեալք զորդւոց յորդիս որպէս ինքեանք նոյնպէս և ժառանգք նոցին։ Գրեցաւ յամի Տեառն 1830, յամսեանն ի յունիսի 1 ի Սուրբ Կաթուղիկէն Էջմիածնի։

Համար 99. Կաթուղիկոս ամենայն Հայոց

ԵՓՐԵՄ

№ 311

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

Թերթերը՝ 133։—**Պրակները՝** ձեռագիրը գործարանային կազմված մատյան է, որով կարելի չեղավ պրակները հաշվել։—**Մեծությունը՝** 31,7×21,5×1,7 սմ.։—**Նյութը՝** դիմացկուն դեղնած թուղթ։—**Կազմը՝** հաստ ստվարաթուղթ։—**Պահպանակները՝** սկզբում և վերջում կա մնկական կապույտ հասարակ թուղթ։—**Վիճակը՝** շատ լավ։—**Գրությունը՝** միասյուն։—**Գատարկ թերթերը՝** 1ա, 1բ, 2բ, 3բ, 4բ, 131բ, 132ա—133բ։—**Տողերը՝** 14։—**Գծումներ՝** չունի։—**Գիրը՝** նոտրգիր, իսկ նոտաները գրված են հայկական նոր ձայնանիշերով։—**Զարդագրություն՝** գրեթե չունի։ Միայն երկու տեղ թ. 10բ և 130ա վերնագրերը («Հարցք Յարութեան» և «Յանկ») գրված են մնացյալներից տարբեր, կարմիր և սև գույներով, շատ հասարակ զարդագրությամբ։—**Գիչը՝** Հարություն Աստվածատուրյան, պանտրմացի (1873—1909 թթ.)։—**Ժամանակը՝** 18 հունիսից մինչև 31 օգոստոսի 1891 թ.։—**Վայրը՝** շատ հավանաբար Նիկոսիայում (Կիպրոս)։—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը Լոնդոնից 1909 թ. նվեր է ուղարկված Մայր Աթոռի ձեռագրատան Ոսկիանակի որդի Արմենակ Ասատուրյանի կողմից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 1ա—129բ.—Ծանր հարցք Յարութեան։
Թ.թ. 130ա—131ա.—Յանկ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 129բ.—Սոյն Յարութեան հարցերը սկսել ընդօրինակել 1891 Յունիս 18-ին և լրացել օգոստոս 31-ին 2բ. օրը։

Յարութիւն Աստուածատուրեան

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.—Հակիրճ կենսագրական ծանօթութիւններ հօրս Յարութիւն Աստուածատուրեանի (Ասատուրեանի) գրի առնուած իր որդւոյն Արմենակ Ասատուրեանի կողմէ։

Հայրս, Յրթ. Ան.ատուրեան ծնած է ի Պանտրմայ (Թուրքիա) 1873 Մարտ 17-ին։

Իր փոքրիկ հասակին կորսնցնելով իր ծնողքը, զինք դրկած են Երուսաղէմ, Ժառանգաւորաց վարժարան։

Հոն դաստիարակուեցաւ Խրիմեան Հայրիկի, Սահակ կաթողիկոս Խապաեանի և Յրթ. պատրիարքի կողմէ։

Երուսաղէմի իր դասընկերներուն եղած են հետևեալները.—

Պետրոս Սարաճեան (Կաթողիկոս Կիլիկիոյ)

Մեսրոպ Արք.եպս. Նշանեան (Պատրիարք Երուսաղէմայ)

Գէորգ Վրդ. Դուրեան (Առաջնորդ Տրապիզոնի, սպանեալ)

Վարդան Արք.եպս. Գալիֆորնիոյ (վերջերս մահացեալ)

և ուրիշներ (10 հոգի ամէնքը)։

Ինք կրօնաւոր ըլլալ չի փափաքելուն, զինքը Կիպրոս դրկած են իր Տնօրէն-ուսուցիչ Նիկոսիոյ ազգային Վարդանանց վարժարանի և նոյնպէս իբր դպրապետ Ս. Ան.ածին եկեղեցւոյ։

Հայրս 14 տարիներ պաշտօնաւարեց Նիկոսիայ և հպարտ եմ ըսելու որ հայրս եղած է առաջին ուսուցիչը հայերէն լեզուն ներմուծելու և ուսուցանելու ի Կիպրոս—իրմէ առաջ դպրոցի լեզուն թրքերէն էր հայերէն գրերով։

Այս 14 տարուայ ժամանակամիջոցին հասցուցած է շատ ընտիր, հայրենասէր, ազգասէր և ազնիւ աշակերտներ, որոնք մինչև քայսօր պատիւ կը բերեն Կիպրահայութեանն։

Հօրս ազնիւ, ուղղամիտ և ամբասիր բնաւորութեամբը շատ սիրուած ու յարգուած էր Կիպրահայոց կողմէ։

Կիպրոս եկած է 19 տարեկանին (1891-ին) և 20 տարեկանին ամուսնացած է մօրս Նազլը Կիվէզեանի հետ և ունեցած է 3 մանչ զաւակ, Հայկ, Արմենակ և Արամ։

Ինք եղած է նոյնպէս Հնչակեան գործիչ (Ատենադպիր)։

1905-ին մեկնած է Եգիպտոս և հոն պաշտօնաւարած Գահիրէի Գալուստեան վարժարանի մէջ Պրն. Վահան Գիւրջեանի օրով, մինչև 1907։

Ինք եղած է նոյնպէս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան առաջին քարտուղար, երբ այս Միութիւնը կը հաստատուէր 1908-ին (տես իր ձեռագիրը Բարեգործականի (թ. 3ա) Ոսկեմատեանի առաջին էջերը, որուն տակ ստորագրած են Պօղոս Բաշա Նուպար և ուրիշներ։

1907-ին կանչուած է Հնդկաստան և պաշտօնաւարած է իր Տնօրէն Կալկաթայի Հայ Մարդասիրական Ճեմարանի իբր գրավարագէտ—բայց Հնդկաստանի շատ տաք կլիմային չի տոկալով հրաժարած է 1909-ին (14 ամիսէն) և վերադարձած է Կիպրոս իր ընտանիքին քով։

Կիւրեղ պատրիարք Երուսաղէմայ եղած է մին իր Հնդկաստանի աշակերտներէն։

Նոյն տարին մեկնած է Եւրոպայ, բայց Աթէնքի մէջ կոյր աղիքի բորբոքումէ բռնուելով (բէրիթոնիթիս) գործողութենէ վերջ միայն 4 օր ապրելով իր մանկանացուն կնքած է, 28 հոկտեմբեր 1909-ին, 36½ տարեկաց ծաղիկ հասակին մէջ, հոն իր ընտանիքէն ու զաւակներէն։

Հարս ձայնը ըլլալով շատ անուշ, Երուսաղէմայ մէջ սորված է հայկական ձայնանիշերը (նոթաները) և ահա այս 8 գրքերն են. գրի առնուած իր իսկ ձեռքով, որ իր գաւակները Հայկ ու Արմենակ (Արամ մեռած է Նիւ Եորք 1968-ին) կը նուիրեն Սուրբ Էջմիածնայ, վստահ ըլլալով որ այս հին Երուսաղէմական եղանակները որոնք կերգուէին Խրիմեան Հայրիկի, Սահակ Կաթողիկոսի և Ցրթ. Պատրիարքի օրով և հիմայ բոլորովին կորսուած, օգտակար պիտի հանդիսանան մեր Լուսաւորչական Սուրբ եկեղեցւոյ։

Մնամ յարգանօք,
Արմենակ Ցրթ. Աստուրեան

Լոնտոն, 28 Սեպտեմբեր 1969.
39 Gladstone Park Gardens,
Cricklewood, London, N. W. 2,
ENGLAND.

(1966-էն ի վեր փոխադրուած ենք ընտանեօք Կիպրոսէն ի Լոնտոն)։

Ց. Գ. (տես էջ 9)։

Թ. 4ա.—Ի գրեանց
Ցրթ. Ան.ատուրեան.

Երուսաղէմ, 1891.
Նուէր Հայաստանի
իր որդւոյն
Արմենակ Աստուրեանի կողմանէ.

Նիկոսեա, Կիպրոս, 1969։

Ց. Գ. Այս պատեհ առիթով կուգամ աւե(ն)ցնելու որ ստորագրեալս 1966-ին կրցայ կտակ մը յաջողցնել ի նպաստ Հայաստանի ատամնաբուժարանին Տոքթ. Գա(ր)ռիէլ Թորոս Ռէյիսեանի (Ակնցի, Կասմա գիւղէն) կողմէ, և իր մահէն վերջ, իբր կտակակատար, Հայաստանի կառավարութեան առաջարկին, Լոնտոնէ Հայաստան ուղարկուեցան 22 մեծ սնտուկ ատամնաբուժական շատ ընտիր գործիքներ և 4 „Սոմ.ներ իրենց աթոռներով, իմ կողմէ ընտրուած, որոնք Երևան հասան 1989-ի սկիսքները և տրամադրուեցան զանազան հիւանդանոցներու։

Ուրախ եմ որ այս փոքրիկ ծառայութիւնովս կրցայ մի քիչ օգտակար հանդիսանալ իմ հայրենիքիս և հայրենակիցներուս։

Մնամ յարգանօք
Արմենակ Ցրթ. Աստուրեան

Լոնտոն
28 Սեպտեմբեր 1969
AAss.

№ 812

ՏԱՂԵՐ ԵՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Թերթերը՝ 50։—**Գրակները՝** քայքայված, անկանոն։—**Մեծությունը՝** 26×20,5×0,2 սմ. (թթ. 1—30) և 30×21×0,2 սմ. (թթ. 31—50)։—**Նիւթը՝** շատ բարակ դեղնած թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** չկան։—**Վիճակը՝** անբաւարար։—**Գրությունը՝** միապուն։—**Գատարկ թղթերը՝** 22բ—24բ։—**Տողերը՝** անկանոն 10—24։—**Գծումներ՝** չունի, բացի առաջին երկու թերթերը, որոնք գծաւոր են։—**Գիրը՝** նոտագիր, իսկ նոտաները գրված են հայկական նոր ձայնանիշերով։—**Գրիչը՝** Հարությունն Աստվածատուրյան։—**Ժամանակը՝** 19—20-րդ դարեր։—**Վայրը՝** անհայտ։—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը Լոնդոնից նվեր է ուղարկված Մայր Աթոռի ձեռագրատան հեղինակի որդի Արմենակ Աստուրյանի կողմից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ—Նէհավէնտ։

Թ. 2ա.—Անբաժանելի զկնի յիշեսցուքին եղանակ (Սապա) Թաշճեան։

Թ. 4ա.—Կանոն Մեծի հինգշաբաթին. Օրհնութ. Գձ. ծանր։

Թ. 7բ.—Կանոն Մեծի ուրբաթուն. Օրհնութիւն Բձ. ծանր։

Թ. 10ա.—Կանոն Պէնտէկոստէի Առաջին աւուր. Օրհնութիւն Դձ. ծանր։

Թ. 11ա.—Հարց երկրորդ աւուր Աստուածայայտնութեան. Գձ. Ծ.։

Թ. 12ա.—Կանոն Մեծի երկուշաբաթին. Օրհ. Բձ. Ծ.։

Թ. 16ա.—Կանոն Մեծի երեքշաբաթին. Հարց. Բձ. Ծ.։

Թ. 18ա.—Մանկունք Մեծի երեքշաբաթին. Գձ. ծանր։

Թ. 16բ.—Հայոց Մեծի չորեքշաբաթին. Գձ. ծանր։

Թ. 17ա.—Մանկունք Գձ. ծանր։

Թ. 17բ.—Կանոն Ղազարու Յարութեան. Հ. Բձ. Ծ.։

Թ. 19ա.—Հարց ապաշխարութ. Ակ. Առաջին. ծանր։

Թ. 20ա.—Հարց. Բ. ապաշխարութ. ծանր։

Թ. 21ա.—Հարց Գ. Ակ. ծանր։

Թ. 21բ.—Հարց Դ.։

Թ. 26ա.—Օրհնութ. Վարագայ Խաչի։

Թ. 27ա.—Հարց Գիւտ Խաչի։

Թ. 31ա.—Կանոն Շողակաթին։

Թ. 32բ.—Հարց. Խաչի Ա. աւուր. ԳՁ. Ծ.։

Թ. 34ա.—Օրհնութ. Բ. աւուր Վարդավառի։

Թ. 35բ.—Ակ. Բ. աւուր. Վարդավառի. ԻԿ. ստեղի։

Թ. 36բ.—Կանոն Վարդավառի Գ. աւուր. Օրհ. Գձ. Ծ.։

Թ. 37բ.—Տէր յերկնից. Ծ. Բձ. Ապաշխարութեան։

Թ. 38ա.—Որ դասուց հարցին վերջին տունը։

Թ. 39ա.—Տէր յերկնից ապաշխարութ. Բձ. Ծանր. մասնաւոր եղանակ։

Թ. 39բ.—Կանոն հրեշտակապետաց։

Թ. 41բ.—Հարց Նորին. Հրեշտակապետաց։

Թ. 42բ.—Կանոն Յակովբայ Մծբնայ Հայրապետին. Օրհ. Գձ. Ծ.։

Թ. 45բ.—Համբարձի Սրբոց Ղևոնդեանց։

Թ. 46բ.—Հատուածք Խաչի Անապականին։

Թ. 49ա.—Շարական գիւտի Սրբոյ Խաչին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 7ա.—Յաջորդ տուներն՝ յաջորդ երեսի՝ յաջորդ երեսն գրուած են սխալմամբ. գալիք երեսն

«Արձաթսիրությամբ»ի 9 տողերն գրուած են։

Թ. 49ա.—Այս գրուածն սխալ ըլլալուն՝ ուղիղ մեկ տուն յաջորդ երեսը պիտի տեսնեմք որ գրեթէ միւս տուներն ալ առած ոճով ճիշդ կերգուին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 25ա.—(Կրսուի)։

Թ. 27ա.—Կրսուի։

(Բարակ թղթյա ծրարի վրա գրված է)

Նուէր Հայաստանի, Գրթ. Ան.ատուրեանի որդւոյն Արմենակ Ասատուրեանի կողմանէ։

Նիկոսեայ, Կիպրոս, 1969։

№ 818

ԳԻՐՔ ԽՐԱՏՈՑ

Թերթերը՝ 492։—**Պրակները՝** 42, յուրաքանչյուրը 12-ական թերթից։—**Մեծությունը՝** 30×21,5×6,2 սմ.։—**Նյութը՝** դեղնած դիմացկուն հաստ թուղթ։—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ոսկեգույն զարդեր են տպված։—**Պահպանակները՝** սկզբում հաստ սպիտակ մեկ թուղթ։—**Վիճակը՝** շատ լավ։—**Գրությունը՝** Երկսյուն։—**Դատարկ թղթերը՝** 1ա—3բ, 487բ—492բ։—**Տողերը՝** 50։—**Գծումներ՝** չունի։—**Գիրը՝** մանր նոտրգիր։—**Զարդագրություն՝** ձեռագրի մանրանկարչությունը միջին որակի է։ Առաջին էջում (4ա) կա մի հատ լուսանցազարդ, մի հատ թոչնագիր և մեկ գլխազարդ, որի տակ գրված է «Էկլէսիաստիկոս»։ Սրանցից բացի ձեռագրում կան ընդամենը 49 հատ թոչնագրեր, որոնցից երկուսը միայն թոչնագիր-մարդագիր է (թթ. 183բ և 407բ)։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 16—17-րդ դարեր։—**Վայրը՝** անհայտ։—**Ծանոթություն՝** Մայր Աթոռի Ձեռագրատունը տույն ձեռագիրն ստացել է վերջերս նեղինն թեմերից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թթ. 4ա—472բ.—Էկլէսիաստիկոս (խրատների գիրք)։

Թթ. 473ա—487ա.—Ճանգ մատենական (այբբենական ընդհանուր ցուցակ բոլոր գլուխների և եզրաբաժինների)։

Ընդհանուր ձեռագիրը բաղկացած է 51 գլուխներից։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 9բ.— Книга З. А. Мелкотина тел. 90—38—11.

(Նույնը գրված է նաև պահպանակի առաջին երեսի վրա)։

(Շարունակելի)

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՑ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄՅԱԿԸ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթը-ը իր 29 հունվար 1973 թվակիր նամակում, ուղղված Ամենայն Հայոց կաթողիկոսին, հաղորդում է, որ այս տարի լրանում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնադրման 25-ամյակը՝ միաժամանակ տեղեկացնելով, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեն ծրագրել է սույն թվականի օգոստոսի 28-ին, կրոնական հատուկ մի արարողությամբ, պաշտոնապես նշել այդ հոբելյանը Հելսինկիում, ուր նույն ամսին գումարվելու է կենտրոնական կոմիտեի տարեկան ժողովը:

Այս առթիվ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարը կենտրոնական կոմիտեի անունից անդամ բոլոր եկեղեցիներին խնդրում է, որ Եկեղեցիների ազգային խորհուրդների հետ գործակցաբար մշակեն համապատասխան միջոցառումներ՝ նույն թվականին պատշաճ հանդիսավորությամբ նշելու համար այդ տարեդարձը:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆԿՖՈՒՐՏՈՒՄ

Սույն թվականի հունվարի 30—31 օրերին Ֆրանկֆուրտ քաղաքում տեղի է ունեցել հանդիպում հռոմեական կաթոլիկ եկեղեցու Եվրոպայի եպիսկոպոսաց ժողովների կոնսիլիում կազմակերպության և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս կազմակերպության պատվիրակությունների միջև:

Հռոմի եկեղեցու կողմից հանդիպմանը մասնակցել են Մարսելի արքեպիսկոպոս Ռոժե Էչեգարայը, Հանս Մարտենսոն եպիսկոպոսը, պրոֆ. Ալոիզ Սուստարը և ուրիշներ. իսկ Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի նախագահությունը ներկայացվել է Էռնեստ Վիլմի, Տալլինի միտրոպոլիտ Ալեքսիի, Ռոժե Վիլսոն եպիսկոպոսի և հիշյալ կոնֆերանսի գլխավոր քարտուղար Գլեն Գարֆիլդ Վալլամսի կողմից:

Սույն հանդիպումը վերոհիշյալ էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչների երկրորդ հանդիպումն է: Առաջինը տեղի է ունեցել 1972 թվականի մարտին Ժենևում:

Հանդիպման ընթացքում երկու կողմի ներկայացուցիչները մանրամասնորեն քննության են առել Եվրոպայի և ամբողջ աշխարհի խաղաղության և անվտանգության ապահովման ուղղությամբ իրենց անդամ եկեղեցիների ծավալած գործունեությունը: Նրանք գոհունակությամբ նշել են, որ վերջին ժամանակներում այդ հարցերի վերաբերյալ մի նոր աշխույժ հետաքրքրություն է առաջ եկել Եվրոպայի եկեղեցիների և քրիստոնյաների մեջ: Որոշում է ընդունվել հետագայում շարունակել և առավել զարգացնել երկու կազմակերպությունների համատեղ ջանքերը Եվրոպայի անվտանգության և աշխարհի խաղաղության ապահովման գործում:

Ժողովում առանձին ուշադրությամբ ուսումնասիրվել են նաև հյուսիսային Իռլանդիայի եկեղեցիների միջև գործակցության հարցը և այդ կապակցությամբ երկու կազմակերպությունների առաջիկա համատեղ գործունեության հնարավորությունները:

Երկու պատվիրակությունները որոշել են իրենց հաջորդ ժողովը գումարել 1974 թվականի հունվարին:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ՏՆՕՐԵՆԸ

Հայտնի եկեղեցական գործիչ, Ուրուգվայի Մեթոդական միացյալ եկեղեցու նախագահ պաստոր Էմիլիո Կաստրոն վերջերս ընտրվել է Եկեղեցիների համաշխարհային

խորհրդի Առաքելություն և ավետարանչություն հանձնաժողովի տնօրեն: Դոկտ. Կաստրոն, որը ծանոթ է որպես ժամանակակից էկումենիկ շարժման եռանդուն գործիչներից մեկը, սույն թվականի հունվարի մեկից անցել է իր նոր պաշտոնին՝ փոխարինելով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի այժմյան ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթրին նրա նախկին պաշտոնում:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Գրքին քաջահմուտ կաթոլիկ, բողոքական և օրթոդոքս 111 գիտնականներ են մասնակցել Նոր կտակարանի ֆրանսերեն առաջին էկումենիկ թարգմանությանը, որը վերջերս լույս է տեսել և ընթերցող հասարակության լայն խավերին ներկայացվել Փարիզում և Ֆրիբուրգում:

Սույն թարգմանության հրատարակության կապակցությամբ Աստվածաշնչի շվեյցարական ընկերության քարտուղար Պոլ Ֆուետերը Ֆրիբուրգում կայացած Աստվածաշնչի գիտնականների հանդիպման ժամանակ հայտարարել է. «Համաշխարհային քրիստոնեական պատմության մեջ առաջին անգամ լինելով կարող ենք հաստատել, որ այժմ մեր ձեռքի տակ ունենք այնպիսի մի թարգմանություն, որը արդյունքն է մեծ հըմտությամբ և ձեռնհասությամբ կատարված ընդհանրական մի աշխատանքի»:

Փարիզում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվո նախագահ դոկտ. Վիսերտ Հուֆտը, ներկայացնելով Նոր կտակարանի սույն թարգմանությունը, ասել է. «Այս թարգմանությունը ինքնին ապացուցում է, որ այն միությունը, որը գոյություն ունի քրիստոնյաների միջև, շատ ավելի մեծ է, քան մենք կարող էինք ենթադրել»:

Հին կտակարանի էկումենիկ թարգմանությունը ծրագրվել է լույս ընծայել 1975—78 թվականներին:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ալեքսանդրիայի հունաց Պատրիարք Նիկողայոս Զ-ը հերքել է Աթենքի պահպանողական թերթերից մեկի կողմից տարածված այն լուրը, որի համաձայն նա իբր պահանջել է, որ իր եկեղեցին անհապաղ դուրս գա Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմից:

«Նորին Ամենապատվության դիրքը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընկատմամբ եղել է դրական և վճռական ամեն անգամ, երբ հարց է առաջադրվել տիեզերական պատրիարքության և հունադավան մյուս ինքնագլուխ եկեղեցիների հետ միասնաբար հանդես գալու Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմում»:

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարքության սույն հայտարարությունը անուղղակի խոստովանությունն է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի շրջանակներից դուրս գտնվող որոշ հոգևորականների հակաէկումենիկ այն ձգտումների ու տրամադրությունների առկայության, որոնք վերջին ժամանակներում զգալ են տալիս իրենց օրթոդոքս եկեղեցու ներսում:

ԲԵՌԼԻՆ-ԲՐԱՆԴԵՆԲՈՒՐԳԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Բեռլին-Բրանդենբուրգի (Արևելյան Գերմանիա) բողոքական եկեղեցու Սինոդը անցյալ նոյեմբեր ամսին Բեռլինում ընտրել է իր առաջին եպիսկոպոսը հանձին պաստոր Ալբերտ Ցյոնների՝ հաստատելով այդպիսով վերոհիշյալ եկեղեցու գոյությունը, որպես վարչականորեն ինքնուրույն և անկախ եկեղեցի:

Սինոդը, բացի այդ, մշակել է եպիսկոպոսի ընտրության մի նոր եղանակ և վերասահմանել նրա իրավասությունները համաձայն տվյալ եկեղեցու սահմանադրության:

Այս ընտրությամբ Բեռլինի բողոքական եկեղեցու եպիսկոպոս Կուրտ Շարֆի իրավասության տակ մնում է միայն Արևմտյան Բեռլինը:

ԼՈՒՐԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ

ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ

Բեթղեհեմի քաղաքագլուխը՝ Էլիաս Ֆրեժին, վերջերս ս. Ծննդյան առթիվ հրապարակել է մի հատուկ ուղերձ: Ուղերձում հայտնվում է, որ Քրիստոսի ծննդավայրում շուտով հիմնադրվելու է համաշխարհային քրիստոնեական մի նոր հոգևոր կենտրոն: «Սույն կենտրոնի ստեղծման նպատակն է լինելու,—ասվում է ուղերձում,—ամբողջ աշխարհում տարածել Քրիստոսի պատգամի լույսը և այդպիսով հնարավորություն ընձեռել, որ աշխարհի բոլոր քրիստոնյաները առիթ ունենան մշտապես խորհրդածելու այն իմաստի և կարևորության մասին, որ ունի Քրիստոսի ծնունդը մարդկության համար»:

Բեթղեհեմի քաղաքագլուխը սույն որոշումն ընդունել է տեղի համայնքային խորհրդի վարչության հետ համախորհուրդ:

Այսպիսով, վերոհիշյալ հոգևոր կենտրոնը Երուսաղեմից Բեթղեհեմ տանող ճանապարհի կեսին, Թանթուրի բլրի վրա, բարձրացած Էկումենիկ ինստիտուտից հետո, այս շրջանում հանդիսանալու է համաքրիստոնեական երկրորդ հաստատությունը, որտեղ աշխատելու են աշխարհի տարբեր երկրների բազմաթիվ քրիստոնյա գիտնականներ:

* * *

1972 թվականի դեկտեմբերի 18-ին ռուսաց եկեղեցու սուրբ Սինոդը լսել է Տուլայի և Բելևիայի միտրոպոլիտ, Մոսկվայի Պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Յուվենալիի զեկուցումը, որը նվիրված է եղել Պիմեն Պատրիարքի և նրան ուղեկցող անձանց այցելությանը հայ առաքելական եկեղեցու կենտրոն ս. Էջմիածին:

Սինոդը որոշել է արտահայտել խոր գոհունակություն երկու Հայրապետների միջև ս. Էջմիածնում տեղի ունեցած հանդիպման առթիվ, հանդիպում, որը քրիստոնեական համագործակցության և փոխադարձ սիրո մի վառ ապացույց հանդիսացավ:

Միաժամանակ Սինոդը արտահայտել է իր սրտագին շնորհակալությունը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին՝ Պիմեն Պատրիարքին և նրան ուղեկցող անձանց ցույց տրված եղբայրական ընդունելության և հյուրասիրության համար:

* * *

1972 թվականի դեկտեմբերի 7—9-ը Վարշավայում տեղի է ունեցել Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի Տնտեսություն և քաղաքականություն հանձնաժողովի նստաշրջանը, որին մասնակցել են աշխարհի 4 ցամաքամասերից ժամանած բազմաթիվ ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նախագահ է ընտրվել պրոֆ. Ժ. Գախարդոն: Հանձնաժողովը զբաղվել է մի շարք տնտեսական և տեխնիկական հարցերի քննարկմամբ:

* * *

1972 թվականի դեկտեմբերի 11—13-ը Ցվեյցարիայում անց են կացվել Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի քարտուղարության նիստերը, որոնք նվիր-

ված են եղել աշխարհի խաղաղության պահպանմանն ու ամրապնդմանը:

* * *

1973 թվականի հունվարի 31-ից փետրվարի 5-ը Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Պիմենը այցելել է չեխոսլովակյան ուղղափառ եկեղեցի:

ԴՈԿՏ. ԼԵՈՊՈԼԴՈ ՆԻԻԼՈՒՍԻ ԱՅՑԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունվարի 20—29-ը, որպես Մոսկվայի Պատրիարքարանի պաշտոնական հյուրը, Սովետական Միությունում է եղել Նկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովի տնօրեն դոկտ. Լեոպոլդո Նիիլուսը:

Սովետական Միությունում գտնվելու ընթացքում դոկտ. Նիիլուսը այցելել է Մոսկվա, Լենինգրադ, Զագորսկ և ծանոթացել երկրի կրոնական և մշակութային կյանքին:

Հունվարի 22-ին մեծարգո հյուրը Մոսկվայի Պատրիարքարանում ընդունվել է Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենի կողմից:

Դոկտ. Նիիլուսը հանդիպումներ է ունեցել նաև ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության միջազգային կազմակերպությունների բաժնի վարիչ Վ. Ս. Պոժարսկու, ՍՍՀՄ կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Վ. Մակարցևի հետ, եղել է Եվրոպայի անվտանգության սովետական կոմիտեում, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ինստիտուտներում և Լոմոնոսովի անվան համալսարանում:

Հունվարի 28-ին Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմը, ի պատիվ դոկտ. Նիիլուսի, կազմակերպել է պաշտոնական ընդունելություն:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՂՈԹԱԺՈՂՈՎԸ

Սույն թվականի հունվարի 19-ին Ալեքսանդրիայի ս. Կատարինե Մայր տաճարում տեղի է ունեցել Ալեքսանդրիայի եկեղեցիների խորհրդի միջդավանական տարեկան 15-րդ աղոթաժողովը քրիստոնյաների միության համար:

Համատեղ աղոթքի հանդիսավոր արարողություններին իրենց մասնակցությունն են բերել ղպտական ուղղափառ եկեղեցին, Հայաստանյայց առաքելական եկեղեցին, հույն օրթոդոքս եկեղեցին, անգլիկան եկեղեցին, ավետարանական եկեղեցին, ասորական կաթողիկե եկեղեցին, ռուս պրավոսլավ եկեղեցին, ղպտական կաթողիկե եկեղեցին և այլ քրիստոնեական եկեղեցիներ՝ գլխավորությամբ հիշյալ եկեղեցիները ներկայացնող բարձրաստիճան հոգևորականների:

Սույն աղոթաժողովին անգլերեն լեզվով արտասանված բացման ճառով հանդես է եկել Եգիպտոսի առաջնորդական տեղապահ գերաշնորհ տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանը:

Աղոթաժողովի ընթացքում քրիստոնեական տարբեր եկեղեցիների ներկայացուցիչների կողմից արտասանվել են քարոզներ, կատարվել են ընթերցվածներ Ավետարանից և առաքելական թղթերից զանազան օտար լեզուներով: Համատեղ աղոթքի կրոնական արարողություններին մասնակցել են նաև տարբեր եկեղեցիների երգեցիկ խմբերը, այդ թվում և տեղի հայ եկեղեցու երգչախումբը:

Մի պահ համատեղ աղոթքի արարողությունից

Ալեքսանդրիայի եկեղեցիների խորհուրդը, որը հիմնադրվել է 1958 թվականին, քրիստոնեական եկեղեցիների համագործակցության և միության ի նպաստ ծավալած հետզհետե առավել արդյունավետ իր գործունեությամբ կարևոր տեղ է գրավում էկումենիկ ընդհանուր շարժման մեջ: Ուրախալի է արձանագրել, որ սույն կազմակերպության մեջ, սկսած նրա ստեղծման թվականից, գործոն դեր է ստանձնել Զավեն եպիսկոպոս Չինչինյանը: Վերջին չորս տարիներին, ընդհանուր ժողովների ընթացքում, գերաշնորհ սրբազանը միաձայնությամբ հաջորդաբար վերընտրվել է վերոհիշյալ կազմակերպության նախագահ՝ ամենայն ձեռնհասությամբ վարելով իրեն վստահված այդ պաշտոնը: Միջեկեղեցական կարևոր մի կազմակերպության մեջ հայ բարձրաստիճան մի հոգևորականի՝ պատասխանատու նման մի պաշտոնի կոչվելը, անտարակույս, պատիվ է Հայաստանյայց եկեղեցու համար և ապացույց այն բանի, որ Հայաստանյայց եկեղեցին ամենայն կարևորությամբ իր գործոն մասնակցությունն է բերում էկումենիկ շարժման համաքրիստոնեական ընդհանուր առաքելությանը՝ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ:

ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔԻ ՕՐ ՂԱԼԱԹԻԱՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կ. Պոլսի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյանի բարեհաճ տնօրինությամբ և տեղի հռոմեական կաթողիկե եկեղեցու կարգադրությամբ սույն թվականի հունվարի 17-ին Ղալաթիայի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի է ունեցել քրիստոնյա եկեղեցիների ամենամյա համատեղ աղոթքի օրվա առթիվ կազմակերպված կրոնական հանդիսավոր մի արարողություն:

Աղոթաժողովին ներկա են եղել հայ առաքելական, հույն օրթոդոքս, հռոմեական կաթողիկե, բողոքական, մելքիթ կաթողիկե, ասորական և բուլղարական ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները:

Եկեղեցական արարողությանը իրենց մասնակցությունն են բերել քրիստոնեական տարբեր եկեղեցիներ ներկայացնող հոգևորականներ՝ աղոթքներով, Ավետարանի ընթերցումներով կամ կարճ ուղերձներով:

Մեջ ընդ մեջ կատարվել են նաև երգեցողություններ զանազան համայնքների եկեղեցական երգչախմբերի կողմից և ներկաների մասնակցությամբ: Հայ եկեղեցու կողմից Ղալաթիայի կենտրոնական երգչախումբը քառաձայն երգեցողությամբ կատարել է «Գովեա, Երուսաղէմ»-ը, «Սուրբ-սուրբ»-ը և «Հայր մեր»-ը՝ խոր տպավորություն առաջացնելով բոլոր ներկաների վրա:

Հավարտ արարողության եկեղեցական դասը հավաքվել է եկեղեցու խորհրդարանում, ուր համայնքային հոգևոր ներկայացուցիչների միջև տեղի է ունեցել սրտաբաց զրույց՝ եղբայրական ջերմ և սիրալիր մթնոլորտում: